

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԵԼԼԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

**ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿ**

Ուսումնական ձեռնարկ

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019**

ՀՏԴ 392:316.3(07)
ԳՄԴ 63.5+60.5g7
Ա 280

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիրական խորհուրդը:*

Ձեռնարկը նվիրվում է ԵՊՀ 100-ամյա հոբելյանին:

Գրախոսներ՝

փ.գ.դ., պրոֆեսոր Էդ.Ա.Հարությունյան
փ.գ.թ., դոցենտ Գ.Ա.Սողոմոնյան

Ալավերդյան Նելլի

Ա 280 «Ավանդույթը որպես սոցիալական համակարգի կառուցարկ-
ման եղանակ». ուսումնական ձեռնարկ/ Ն. Ալավերդյան: Եր.,
ԵՊՀ հրատ., 2019, 160 էջ:

Ձեռնարկում վերլուծվել են ավանդույթների տեղի ու դերի, սերունդների կենսափորձի փոխանցման, սերնդափոխման, ժառանգորդման և ինքնության պահպանման և սոցիալական համակարգի անվթար գործառնության հիմնահարցերը: Ավանդույթները դիտարկվել են որպես ազգային ինքնության, հոգեբանության, խառնվածքի ու հոգեկերտվածքի վերարտադրման հուսալի մեխանիզմներ:

Սույն աշխատությունը հասցեագրված է փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմության, մշակութաբանության, բարոյագիտության մասնագիտությունների ուսանողությանը և այդ հարցերով զբաղվող մասնագետներին:

ՀՏԴ 392:316.3(07)
ԳՄԴ 63.5+60.5g7

ISBN 978-5-8084-2391-6

© ԵՊՀ հրատ., 2019
© Ալավերդյան Ն., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ I. ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱՓՈՐՁԻ	
ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	14
1.1. Ավանդույթները որպես կոլեկտիվ գործունեության կարծրատիպեր	14
1.2 Ավանդույթները որպես սերունդների կենսափորձի փոխանցման մեխանիզմ	31
1.3 Ավանդույթները ազգային նույնականության վերարտադրման համատեքստում	52
ԳԼՈՒԽ II. ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ	
ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ	76
2.1 Սոցիոմշակութային հիշողությունը որպես ավանդույթների վերարտադրման գործիք	76
2.2 Ավանդույթները որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմ	100
2.3 Ավանդույթների և նորարարության փոխհարաբերությունը փոխակերպվող հասարակությունում	118
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	143
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	149

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունները փոփոխվում են աննախադեպ տեմպերով, փոխվում են համակեցության արժեքներն ու նորմերը և այս համատեքստում համակարգապահական նշանակություն ունեցող նախորդ սերունդների կենսավորձի, համակեցության կազմակերպման սկզբունքների, սովորույթների ու ավանդույթների նորովի իմաստավորումը դարձել է սոցիալական կյանքի արդիականացման կարևոր նախապայման: Այս առնչությամբ մարդկային հարաբերությունների կազմակերպման, կանոնակարգման և կառավարման, ինչպես նաև անհատական և խմբային վարքի օրինաչափությունների ուսումնասիրման տեսանկյունից հասարակական կյանքում ավանդույթների տեղի ու դերի ուսումնասիրությունը ձեռք է բերել տեսական ու գործնական նոր հնչեղություն:

Քաղաքակրթական զարգացումների ներկա փուլում, երբ առաջընթացի և սոցիալական փոխակերպումների տեմպերը խիստ բարձր են, անկայունությունն ու նորարարությունը դարձել են հասարակական կյանքի բնութագրական հատկանիշներ: Բանն այն է, որ սոցիալական տարածաժամանակային նոր իրավիճակում հայտնված հասարակությունը կանգնած է կտրուկ փոփոխությունների առջև, որն իր հետ բերում է ոչ միայն հասարակության վերակառուցման, նոր սոցիալական ինստիտուտների ներմուծման և գործառության անհրաժեշտություն, այլև հասարակության մշակութային, սոցիալ-հոգեբանական հենքի համարժեք փոփոխությունների անհրաժեշտություն: Հասարակությունը ներկայանում է որպես բարդ սոցիոմշակութային համակարգ, որտեղ բացահայտվում են պատմականորեն կուտակված գործունեության, մարդկային փոխհարաբերությունների և սոցիալական փորձի սերնդեսերունդ փոխանցումն ապահովող ավանդույթները: Լինելով մարդկային վարքի սոցիալական կանոնակարգման վաղ ձևերից մեկը՝ ավանդույթները պահպանում, ամրագրում և հասարակական հարաբերություններում վերարտադրում են նախորդ սերունդների կենսավորձը:

Մասնագիտական գրականության մեջ որպես ավանդույթ են դիտարկվում պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցվող սոցիոմշակութային ժառանգության այն տարրերը (գաղափարներ, սովորույթներ, ծեսեր, վարքի նորմեր, կարծրատիպեր և այլն), որոնք հասարակական կյանքում աչքի են ընկնում կայունությամբ ու գործառական տևողականությամբ: Որոշ իմաստով կարելի է ասել, որ ավանդույթը մի կողմից կենսավորձի տարրերի ընտրողական ամրագրման արդյունք է, մյուս կողմից՝ կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակույթի ձևավորման ու ամրապնդման գործընթաց: Այլ կերպ ասած՝ կոլեկտիվ փորձի պահպանման ու փոխանցման այլ մեխանիզմների բացակայության պարագայում ավանդույթները դառնում են մարդկային փոխհարաբերությունների և փոխըմբռնման անփոխարինելի գործիք:

Կենսավորձի ընտրողական ամրագրման միջոցով ավանդույթները օրինականացնում և գործողության մեջ են դնում մարդկային կենսավորձի այն տարրերը, որոնք նպաստում են սոցիալական համակարգի ներքին կազմակերպմանն ու կայուն զարգացմանը: Նկատենք, սակայն, որ հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային ոլորտների զարգացման ընթացքում վերափոխվում է նաև մարդկանց կենսակերպը, ձևավորում են համագործակցության նոր ձևեր ու սոցիոմշակութային նոր ավանդույթներ՝ պահպանելով «հնի» և «նորի» փոխհարաբերակցությունը և դրանց հնարավոր հակադրությունը: Մի բան ակնհայտ է, սակայն, որ պատմության տարբեր ժամանակահատվածներում սոցիալական համակարգերը գոյատևում են այն բանի շնորհիվ, որ նրանք որոշակի մեխանիզմների օգնությամբ համարվում են նոր սոցիոմշակութային արժեքներով: Սոցիալական համակարգերի վերարտադրման ընթացքում թեև ձևավոխվում են անցյալի երևույթները, բայց միաժամանակ պահպանում են իրենց կոնկրետ գործառույթները և կառուցվածքային բնութագրերը: Սա տեղի է ունենում ավանդույթների հենքի վրա, քանի որ ավանդույթները կյանքն արժևորող և ներդաշնակող կառուցողական արժեքներ են: Փաստորեն, հասարակական կյանքում ավանդույթների էության, տեղի և դերի պարզաբանումը հնարա-

վորություն է ընձեռում ճիշտ գնահատելու հնի և նորի փոխհարաբերությունը, խնդիր, որը բոլոր ժամանակներում եղել ու մնում է արդիական:

Սոցիալական կյանքում ավանդույթների արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրանք անմիջականորեն առնչվում են հասարակության պատմական անցյալի առանցքային իրադարձությունների իմաստավորմանը, ազգային ինքնության պահպանմանը, ազգային նույնականության հաստատմանը, ազգային սոցիոմշակութային արժեքներին, սոցիոմշակութային հիշողությանը, առօրյա կյանքի արժեքային կողմնորոշումներին:

Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արագ փոփոխվող ու նորացվող ժամանակակից աշխարհում կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ազգային ավանդույթներն ու արժեքային ողջ համակարգը մի կողմից հայտնվել են արդիականացման անհրաժեշտության առջև, ենթարկվում են սոցիոմշակութային «ճառագայթման», մյուս կողմից, սակայն, պարտավոր են պահպանել սեփական ինքնության ազգային հիմունքները: Այս տեսակետից ավանդույթներն ու սովորույթները հանդես են գալիս որպես ազգային ինքնության, հոգեբանության, բնավորության ու հոգեկերտվածքի վերարտադրման հուսալի մեխանիզմներ: Բանն այն է, որ յուրաքանչյուր ազգ ինքն է մոդելավորում իրեն՝ ավանդույթներից վերցնելով այն ամենը, ինչը համապատասխանում է իր հոգեկերտվածքին և, միաժամանակ, համահունչ է ժամանակի պահանջներին: Ի հավելումն ասվածի, հարկ է նկատել նաև, որ փոխակերպվող և անցումային արդի հասարակություններում «արժեքների արմատական փոփոխությունը», նախկինում ձևավորված արժեքների վերաիմաստավորումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային նոր ինստիտուտների ձևավորումը վտանգել են ներհամակարգային կայունության և հուսալիության սոցիոմշակութային հիմունքները: Այս համատեքստում ավանդույթների դերն ու նշանակությունն ավելի են կարևորվում, քանի որ միայն կայուն արժեքներ ունեցող հասարակական համակարգը կա-

րող է ապահովել ներդաշնակ ու նպատակաուղղված գործունեություն:

Քաղաքակրթությունների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ սոցիալական համակարգերի ձևավորման, զարգացման և վերարտադրման տրամաբանությունը ներքնապես հակասական է: Սոցիալական կյանքին մի կողմից բնորոշ են հարաբերությունների կարգավորման կայուն արժեքների, նորմերի, ավանդույթների ու գաղափարների հաստատուն համակարգեր, առանց որոնց հասարակությունը չի կարող պահպանել իր որակական որոշակիությունը, մյուս կողմից՝ սոցիալականության հիմնական բնորոշիչներից են հարատև փոխակերպումներն ու նորացումը, որոնց շնորհիվ մշտապես փոխակերպվում են նորմատիվ ու արժեքային համակարգերը, ավանդույթներն ու կարծրատիպերը, որպեսզի պահպանեն իրենց գործառական առանձնահատկությունները: Այս առնչությամբ նոր հնչեղություն են ձեռք բերում վարքի կարգավորման ծիսական ձևերի ու եղանակների, ինչպես նաև կենսավորձի սոցիոմշակութային համակարգերի գործառական հիմնահարցերը: Փաստ է, որ վարքի կարգավորման նորմատիվ և սոցիոմշակութային համակարգերը, բարոյական և իրավական արժեքները, սովորույթները, ծեսերն ու ավանդույթները սոցիալական կյանքի մշակույթի կարևոր բաղկացուցիչներ են: Այս իմաստով յուրաքանչյուր հասարակության կյանքի մշակույթը սոցիոմշակութային արժեքների այն համակարգն է, որի օգնությամբ մարդիկ սոցիալիզացվում և ձևավորում են աշխարհի նկատմամբ իրենց վերաբերմունքը:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունները պայմանականորեն կարելի է բաժանել մի շարք տեսանկյունների (պատմագիտական, ազգագրական, սոցիոլոգիական, մշակութաբանական, տնտեսական և, վերջապես, փիլիսոփայական): Մեկնաբանությունների նման բազմազանությունը իր մեջ ներառում է որոշակի արժեք ներկայացնող գիտակցության ձևերի և վարքի նորմերի մի ողջ համալիր, որոնց օգնությամբ հնարավոր է բացատրել անցյալի և ներկայի կապն ու փոխհարաբերությունը:

Որպես սոցիոմշակութային կեցության կարևորագույն բաղկացուցիչ, ավանդույթների դերի և գործառության հարցերը նոր ժամանակի փիլիսոփայության մեջ դիտարկվել են հասարակության և մշակույթի գործառական օրենքների, գիտության և կրոնի փոխհարաբերության դիտանկյունից (Ֆ. Բեկոն, Թ. Հոբս, Ջ. Վիկո, Ի. Հերդեր): Լուսավորականության դարաշրջանում ավանդույթների հիմնահարցը ձեռք է բերում նոր հնչեղություն և հիմնականում քննարկվում է պատմական ու մշակութային առաջընթացի համատեքստում (Ֆ. Վոլտեր, Ժ. Ռուսո, Ն. Կոմյորսե և այլն): Արդեն 19-րդ դարից սկսած ավանդույթների հիմնախնդիրը դառնում է տարբեր գիտակարգերի (սոցիոլոգիա, ազգագրություն, փիլիսոփայություն, հոգեբանություն և այլն) ուսումնասիրման օբյեկտ (Օ. Կոնտ, Հ. Սպենսեր, Գ. Հեգել, Կ. Մարքս, Ֆ. Նիցշե, Օ. Շպենգլեր, Վ. Դիլթայ, Հ. Գադամեր, Մ. Վեբեր, Է. Դյուրկհեյմ, Ն. Բերդյաս, Գ. Լեբոն, Կ. Մանհայմ և այլն): Թվարկված հեղինակները ավանդույթները հիմնականում քննարկում են համակարգապահական գործառույթների համատեքստում և ձևավորում մի շարք հայեցակարգեր.

- ավանդույթները որպես հասարակական զարգացմանը խոչընդոտող երևույթ (Գ. Հեգել, Կ. Մարքս, Ֆ. Նիցշե, Կ. Մանհայմ),¹
- ավանդույթները որպես անցյալը ներկայի հետ կապող երևույթ (Ն. Բերդյաս, Է. Հոսեռլ),²
- ավանդույթները որպես մշակութային հիշողություն (Վ. Դիլթայ, Գ. Լեբոն)³,
- ավանդույթները որպես սոցիալական սուբյեկտի վարքը կարգավորող գործոն (Մ. Դյուֆրեն, Մ. Վեբեր, Կ. Պոպեր)⁴,

¹ Տե՛ս **Ницше Ф.**, Генеалогия морали. М., «Азбука», 2011, **Мангейм К.**, Идеология утопия. //Диагноз нашего времени. М., «Юристь», 1994:

² Տե՛ս **Бердяев Н.**, Смысл истории, М., «Мысль», 1990, **Гуссерль Э.**, Идея феноменологии. М., «Гуманитарная Академия», 2008:

³ Տե՛ս **Дильтей В.**, Сущность философии. М., «Интрада», 2002., **Лебон Г.**, Психология масс. Самара, «Книга», 1998:

- ավանդույթները որպես ազգային մշակույթներն ու քաղաքակրթությունները տարբերակող գործոն (Է. Շիլդ, Բ. Ալտոն, Պ. Բոյեր, Յու. Բրոմլեյ)⁵:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավանդույթները, որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակի, կենսափորձի սոցիոմշակութային համակարգի և սոցիոմշակութային հիշողության սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն է, ուսումնական ձեռնարկում անհրաժեշտ է եղել.

- վերլուծել ավանդույթների տեղն ու դերը սոցիալական համակարգում,
- քննարկել հասարակական հարաբերությունների, նորմերի ու արժեքների վերարտադրության առանձնահատկությունները, պարզաբանել դրանց շարժառիթներն ու մեխանիզմները,
- սերունդների կենսափորձի փոխանցման համատեքստում վերլուծել ավանդույթների այն հնարավորությունները, որոնց օգնությամբ իրացվում է ժառանգորդման և ինքնության պահպանմանը միտված սերնդափոխումը և սոցիալական համակարգի անվթար գործառությունը,
- ավանդույթը դիտարկել որպես սոցիոմշակութային հիշողություն, իսկ հիշողությունը որպես ավանդույթի ճանաչման, պահպանման և փոխանցման գործոն,
- հիմնավորվել է այն թեզը, որ էթնիկական ավանդույթը ապահովում է էթնոմշակութի կայունությունը, իրականացնում է էթնոամբողջարկման և էթնոտարբերակման կարևոր գործառույթներ՝ ըստ այդմ դառնալով էթնիկական ընդհանրության և նույնականության պահպանման, մշակութային արժեքների,

⁴ Տե՛ս **Дюфрен М.**, Вклад эстетики в философию // Эстетика и теория искусства XX века. М., «Прогресс-Традиция», 2008, էջ 152-161, **Вебер М.**, Избранные произведения, М., «Прогресс», 1990., **Поппер К.**, Нищета историцизма, М., «Прогресс», 1993.

⁵ Տե՛ս **Shils E.**, Tradition. Chicago, University of Chicago Press, 1981, **Acton H. B.**, Tradition and some other forms of order // Proceeding of the Ar. Society. 1952-1953. P.2, **Boyer P.**, Tradition as truth and communication. A cognitive description of traditional discourse. New York: Cambridge, 1990, էջ 8-9, **Бромлей Ю.**, Очерки теории этноса, М., «Наука», 2012:

իմաստների և խորհրդանիշերի փոխանցման սոցիոմշակութային մեխանիզմ:

Որպես ուսումնական ձեռնարկի մեթոդաբանական հիմք օգտագործվել է սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը, որը հնարավորություն է ընձեռել ոչ միայն բացահայտելու «ավանդույթ» հասկացության էութենական բովանդակությունը, այլև ներկայացնելու հասարակական կյանքում այդ երևույթի նշանակությունը:

Ուսումնական ձեռնարկում օգտագործվել են մասնապատմականության և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Կարևոր տեղ է հատկացվել արժեքաբանական մոտեցմանը, ինչը հնարավորություն է ընձեռել մանրամասնորեն վերլուծելու ավանդական և նորարարական հասարակությունները բնութագրող արժեքներն ու նորմերը: Հետազոտության ելակետային խնդիրների լուծման համար օգտագործվել են համագիտական նշանակություն ունեցող այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են դասակարգումը, ընդհանրացումը, համանմանությունը և մեկնաբանությունը: Նյութի շարադրման ընթացքում կիրառվել է հիմնախնդրային մոտեցումը, որը հնարավորություն է տվել բացահայտելու ավանդույթների մասին հետազոտությունների բազմաշերտությունը:

Այս համատեքստում, պատմահամեմատական վերլուծության միջոցով, ուսումնական ձեռնարկում ձևակերպվել և հիմնավորվել են տեսական ու գործնական նշանակություն ունեցող մի շարք ընդհանրացումներ ու հետևություններ.

- համակարգվել են ավանդույթի մասին պատկերացումները և բացահայտվել հաստատունի և փոփոխելիի առնչությունները,
- վերլուծվել է «ավանդույթ», «սոցիոմշակութային հիշողություն» և «սոցիոմշակութային առօրեականություն» կատեգորիաների փոխադարձ կապը,
- մարդկանց մտածողությունն ու վարքը կարգավորող հին, փորձարկված արժեքներն ու նորմերը երբեմն բախվում են նոր արժեքներին, որտեղ ավանդույթները հանդես են գալիս կարգավորողի դերում, ապահովում են հասարակական հա-

րաբերությունների համակարգային փոփոխությունների տարածաժամանակային բնույթը, ժամանակի տեսանկյունից ամրագրում են ներկա և անցյալ հասարակական զարգացումը, իսկ ամեն մի նոր պատմական փուլում հասարակական հարաբերությունները ոչ միայն փոփոխվում ու թարմացվում են, այլև պահպանվում, կրկնվում, գործում ու վերարտադրվում են,

- կարևորվել են ավանդույթների, որպես սոցիալական փորձի պահպանման, վերարտադրման, փոխանցման և ամրապնդման մեխանիզմի, էթնոսի ինքնապահպանման և ինքնավերարտադրության գործառույթները,
- հիմնավորվել է հասարակության կենսագործունեության համար ավանդական աշխարհակարգի սկզբունքների նշանակությունը, ցույց է տրվել ավանդույթների ազդեցությունը հասարակական համակարգերի սոցիոմշակութային զարգացման վրա:

Ի մի բերելով սոցիալական համակարգի կառուցարկման եղանակների համատեքստում ավանդույթների տեղի և դերի մասին սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունները, ուսումնական ձեռնարկում առաջ են քաշվել հետևյալ դրույթները.

- ավանդույթները կենսափորձի սոցիոմշակութային մի համակարգ են, որոնք սոցիոմշակութային առանձնահատուկ մեխանիզմների միջոցով անցյալի փորձը փոխանցում են հաջորդ սերունդներին՝ պահպանելով սոցիալական համակարգի օրգանական ամբողջականությունը, շարունակականությունը և վերարտադրման ունակությունը,
- սոցիալական համակարգի կառուցարկման, սերունդների կենսափորձի և կոլեկտիվ գործունեության փորձի ու կարծրատիպերի փոխանցման գործառույթների իրացման համատեքստում ավանդույթները կատարում են ազգային նույնականության պահպանման և վերարտադրման մեխանիզմների դեր,

- որպես սոցիոմշակութային հիշողություն, ավանդույթները սոցիալական համակարգի կառուցարկմանը մասնակցում են առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմի գործառույթով՝ դրանով իսկ կատարելով անձնային կյանքի կազմակերպման, կանոնակարգման և հարմարման լրացուցիչ գործառույթ,
- որպես մարդկային գործունեության ձևայնացված կառուցվածքների շարժում, ավանդույթները փոխակերպվող հասարակություններում մի կողմից աչքի են ընկնում իրենց պահպանողականությամբ, մյուս կողմից՝ փորձում կուտակված առաջադիմական գաղափարների միջոցով նպաստում են ժամանակի այլընտրանքային աշխարհում նորարարության «ավանդականացմանը»:

ԳԼՈՒԽ 1. ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱՓՈՐՁԻ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹՎՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1. Ավանդույթները որպես կոլեկտիվ գործունեության կարծրատիպեր

Մարդկային հարաբերությունների կազմակերպման, կանոնա-կարգման և կառավարման, ինչպես նաև անհատական և խմբային վարքի օրինաչափությունների ուսումնասիրման տեսանկյունից հասարակական կյանքում ավանդույթների տեղի ու դերի ուսումնասիրությունը ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն:

Հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրությունը բացատրվում է նրանով, որ անցումային հասարակություններում ավանդույթները ձեռք են բերում սոցիոնշակութային ճգնաժամերը հաղթահարելու, սոցիալական տարբեր խմբերի միջև վստահության մթնոլորտի ձևավորման, փոխհամաձայնության տարբերակների որոնման շատ կարևոր գործառույթներ:

Ավանդույթները մարդկային վարքի և արարքների սոցիալական կանոնակարգման վաղ ձևերից են, որոնք, որպես սոցիալական իրողություն, հասարակական տևական պրակտիկայի ընթացքում մշակված, ժամանակի փորձություններին դիմացած, ծայրահեղ իրավիճակներում աղյուսավետությունն ապացուցած անհատական և խմբային վարքաձևերի ամբողջություն են: Ավանդույթները պահպանում, ամրագրում և հասարակական հարաբերություններում վերարտադրում են նախորդ սերունդների կենսավորձը, ինչով և իրացվում է ժառանգորդման և ինքնության պահպանմանը միտված սերնդավոխումը: Այդ տեսակետից ավանդույթները ժառանգորդման այն կարևորագույն սոցիոնշակութային բաղադրիչներն են, որոնք ապահովում են սոցիալական համակարգի անվթար գործառությունը: Մասնավորապես, արագորեն փոխակերպվող ժամանակակից աշխարհում ավանդույթները, որպես անցյալից ժառանգորդված սոցիոնշա-

կութային արժեքներ, կատարում են անցյալի և ներկայի միջև կապող օղակի դեր՝ հանդես գալով որպես ընդհանուր ժառանգության արդյունավետորեն գործող դրսևորում, ինչն օգնում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ավելի լավ հասկանա թե՛ իրեն, և թե՛ այն հասարակությունը, որում նա ապրում է: Կարելի է ասել, որ ազգային պատկանելության և պետության լիարժեք քաղաքացի լինելու գիտակցությունը մարդուն օգնում է ավելի լավ հարմարվել փոխակերպվող պայմաններին, իրեն ավելի պաշտպանված զգալ, հանդես գալ որպես իր երկրի, իր մշակույթի բացառիկ ներկայացուցիչ:

Մասնագիտական գրականության մեջ լայնորեն քննարկվում է այն հարցը, որ առանձին մշակույթներում ժողովրդական բազմաթիվ ավանդույթների ընդունումն ու հարգումը նպաստում է ստեղծագործական որոնումների աճին և համամարդկային արժեքների պահպանմանը: Միաժամանակ, սակայն, չնայած ավանդույթների վերածնության խնդրակարգի նկատմամբ օրավոր աճող հետաքրքրությանը, տակավին չի ստեղծվել «ավանդույթ» հասկացության, առավել ևս ավանդույթի տեսության մասին հստակ և միանշանակ հայեցակարգ:

«Ավանդույթ» հասկացությունը ստուգաբանորեն նշանակում է փոխանցում, հաղորդում (լատիներեն *tradition* (որպես բայ *trader*) նշանակում է «փոխանցել»): Սկզբնապես այն ըմբռնվել է բառացիորեն, մի նշանակությամբ, որն ունի «նյութական գործողության» իմաստ: Հին Հունաստանում տվյալ հասկացությունն օգտագործում էին ինչ-որ մեկին ինչ-որ բան փոխանցելու անհրաժեշտության մասին խոսելիս, այն նաև ընկալվում էր որպես որոշակի հմտություն, կարողություն (անգամ հարազատ աղջկան ամուսնացնելը դիտարկվում էր որպես այդպիսի հմտություն): Այսպիսով, իմաստաբանական նշանակությունը հստակորեն մատնանշում է, որ «ավանդույթը» ամենից առաջ այն է, ինչը ոչ թե անհատի կողմից կամ նրա գործունեության արդյունքում է ստեղծվել, այլ փոխանցվել է ուրիշներից և որպես այդպիսին միայն իրեն չի պատկանում:⁶ «Trad» բառը հին

⁶ St' u **Каиров В. М.**, Традиции и исторический процесс. М., «Луч», 1994, էջ 53:

գերմաներենում ընկալվել է որպես «ուղի», այսինքն՝ նախորդ սերունդների կողմից փորձարկված, վաղուց ի վեր նախասահմանված կյանքի ճանապարհ:

Մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է քաղաքացիություն ստացած մի տեսակետ ևս,⁷ համաձայն որի սոցիալական գիտելիքի տարբեր ոլորտներում ավանդույթները ձեռք են բերում յուրահատուկ նշանակություն և բովանդակային յուրահատուկ ծանրաբեռնվածություն: Մասնավորապես.

1. *Հասարակագիտական* ըմբռնման տեսակետից ավանդույթները սոցիալական և մշակութային ժառանգության այն տարրերն են, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ և տևական ժամանակ պահպանում իրենց գործառական առանձնահատկությունները: Այս դեպքում որպես ավանդույթներ են հանդես գալիս հասարակական որոշակի դիրքորոշումները, վարքի նորմերը, արժեքները, գաղափարները, սովորույթները, ծեսերը և այլն:

2. *Արվեստի* տեսանկյունից ավանդույթը գեղարվեստական զարգացման անհրաժեշտ գործոն է: Արվեստի զարգացման վաղ փուլերում ավանդույթների փոխանցումն ու ամրագրումը իրականացվում էին կոլեկտիվ ստեղծագործության գործընթացներում, իսկ հաջորդող փուլերում՝ շնորհիվ սոցիումալոգիայի ընդհանրության շրջանակներում ձևավորված կրթական համակարգերի: Այս դեպքում ավանդույթը կատարում է հոգևոր արժեքները սերնդեսերունդ փոխանցելու գործառույթ:

3. *Ազգագրության* շրջանակներում ավանդույթը դիտվում է որպես մշակույթի գոյության այնպիսի եղանակ, որի դեպքում մշակույթի բնույթը չի փոխվում, անկախ նրանից, թե ինչպիսի գոյաբանություն է նրանում արտացոլվում: Ավանդույթը սերնդից սերունդ է փոխանցում մարդկային գործունեության կոլեկտիվ փորձը՝ դրանով հանդես գալով որպես մշակութային ժառանգության և ստեղծագործության կապող օղակ և նպաստում մշակութային երկխոսության

⁷ Стів Воротилина Т. Л., Мурахтанов А. В., Понятие традиции в социальных науках: содержание, структура, значение.// Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского: Изд-во ННГУ, 2002, Вып1(5), էջ 53-58:

գարգացմանը: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ ավանդույթը ստեղծվում է մշակույթի այս երկու միտումների հանդիպակաց շարժման արդյունքում:⁸

4. *Փիլիսոփայության* տեսանկյունից ավանդույթը մարդկանց հաղորդակցության նախասահմանված ձև է և սոցիալական հաղորդակցության եղանակ: Հենց ավանդույթներն են սերնդից սերունդ, մի ժողովրդից մյուսին փոխանցում մշակութային փորձը: Այլ կերպ ասած՝ փիլիսոփայության տեսանկյունից ավանդույթը պատմականորեն ձևավորված և սերնդից սերունդ փոխանցվող սովորույթների, ծեսերի, գաղափարների, արժեքների, վարքի նորմերի և մնանատիպ այլ սոցիոմշակութային տարրերի համակարգ է, որն աչքի է ընկնում գործառական տևականությամբ ու կայունությամբ:

5. *Մշակութաբանական* մեկնաբանություններում ավանդույթը դիտարկվում է որպես փոխանցվող և վերարտադրվող սոցիալական և մշակութային ժառանգություն, որը ներառում է սոցիոմշակութային ժառանգության օբյեկտները (նյութական և հոգևոր արժեքներ), սոցիոմշակութային ժառանգորդման գործընթացները, ինչպես նաև դրա եղանակները:

Այսպիսով, «ավանդույթը» կարելի է դիտարկել որպես վարքի սովորական կանոնների այնպիսի ամբողջություն, որը փորձարկվել է նախորդ սերունդների կողմից և հաջորդ սերունդներին փոխանցվել բանավոր պատումների միջոցով: «Ավանդույթ» եզրույթի մեկնաբանությունների բազմիմաստությունը բացատրվում է նրանով, որ այն իր մեջ ներառում է որոշակի արժեք ներկայացնող գիտակցության ձևերի, վարքի, նորմերի և մարդկային շփման հաստատությունների ողջ համալիրը, որը բնութագրում է ներկայի և անցյալի կապը, կամ ավելի ճիշտ, ժամանակակից սերնդի կախվածության աստիճանը անցյալից կամ նվիրվածությունը նախընթացի նկատմամբ: Այսինքն՝ տվյալ հասկացությունը գործառում է մարդկային կենսագործունեության բազմաթիվ ոլորտներում և ակտիվորեն օգտագործվում է գիտե-

⁸ Տե՛ս **Праздников Г. А.**, Традиции как диалог культур. // Советская этнография, 1981, № 2, էջ 56:

լիքի տարբեր բնագավառներում (ազգային ավանդույթ, ժողովրդական ավանդույթ, խմբային ավանդույթ, մշակութային ավանդույթ, գեղարվեստական ավանդույթ, գիտական ավանդույթ և այլն): Փիլիսոփայական մտքի զարգացման ընթացքում ձևավորվել են ավանդույթների վերաբերյալ բազմապիսի հայեցակարգեր: Լուսավորականության ներկայացուցիչները, օրինակ, ավանդույթը դիտարկում էին որպես անձի շարունակական առաջընթացի և ինքնության կայացման հիմնական խոչընդոտ: Ի. Հերդերը մի կողմից ավանդույթը դիտարկում էր որպես պատմության հիմնական շարժիչ ուժ, մյուս կողմից, սակայն, այն որակվում էր որպես «հոգևոր հաշիշ, որը թմրեցնում է անհատական նախաձեռնությունը և քննադատական մտածողությունը»:⁹

Կ. Մարքսը ավանդույթը մեկնաբանում է որպես դասակարգային և խմբային շահերի դրսևորում, որպես գաղափարախոսության բաղադրիչ, իսկ կրոնի և եկեղեցու տոտալ քննադատության համատեքստում՝ որպես զանգվածային գիտակցության մանիպուլյացիայի գործիք:¹⁰ Ֆ. Նիցշեն իր հերթին պնդում էր, որ ավանդույթը «քաղքենիական պահպանողականության և նորույթամերժության կվիմտեսենցիան է, որը խոչընդոտում է գերմարդու կայացմանը, ուստի այն անընդունելի է»¹¹:

Ավանդույթների միասնական տեսություն ստեղծելու փորձը կատարել է ֆրանսիացի հոգեբան և սոցիոլոգ Գ. Լեբոնը, ով ավանդույթը դիտարկում է որպես պատմական գործընթացների սուբյեկտի՝ ամբոխի հոգեբանությունը պայմանավորող կարևորագույն գործոն: «Մարդիկ, -գրում է Լեբոնը, - հատկապես հեշտ են ղեկավարվում ավանդույթներով, երբ գտնվում են ամբոխում: Առանց ավանդույթների ոչ ազգային հոգի կարող է լինել, ոչ քաղաքակրթություն...»:¹²

⁹ Гердер И. Г., Идеи к философии истории человечества. М., «Центр гуманитарных инициатив», 2013, с. 568.

¹⁰ Տե՛ս Մարքս Կ., Էնգելս Ֆ., Երկեր, հ. 2, Եր., «Հայաստան», 1986թ., էջ 149:

¹¹ Ницше Ф., Генеалогия морали. М., «Азбука», 2011, с. 187.

¹² Лебон Г., Психология народов и масс. М., «АСТ», 2000, с. 38.

Հ. Գադամերը, մասնավորապես, ենթադրում էր, որ ավանդույթը «ոչ այնքան փորձ է փոխանցում, որքան մասնակցում է այդ փորձի վերարտադրմանը: Այն իր ուրույն մշտական վերադարձն ունի դեպի կեցութունը, որը հաստատված է սոցիալական պատճառականությամբ և պատմականությամբ»:¹³

Է. Հուսեռլն առաջինն էր, ով ավանդույթը դիտարկեց որպես հասարակության կառուցարկման սոցիալական գործիքակազմի կարևոր բաղադրիչ: Նա ավանդույթն ընկալում էր որպես ինքնավար իմաստային կառույց, որը նախասկզբնական իմաստներից հեռացվածության չափով պայմանավորված՝ կորցնում է իր գիտական հավաստիությունը:¹⁴ Փաստորեն, եթե մինչ այդ ավանդույթը նույնացվում էր սովորույթի հետ, ապա Է. Հուսեռլն առաջին անգամ «ավանդույթ» եզրույթն գործածում է փոխանցվող կանոների մշանակությամբ:

«Ավանդույթ» և «սովորույթ» հասկացությունները ունեն մի շարք ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկություններ: Մասնավորապես, բովանդակային իմաստով «ավանդույթը» ավելի լայն հասկացություն է, քան «սովորույթը»: Բացի այդ, պատմական զարգացման ընթացքում սովորույթների գործունեության ոլորտը, որպես կանոն, նեղանում է, իսկ ավանդույթներինը՝ ընդլայնվում»:¹⁵ Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ ամեն սովորույթի հետ կա ավանդույթ, բայց ամեն ավանդույթ չէ, որ սովորույթ է: Սովորույթները արագ փոփոխվելու, կառուցվածքային փոփոխության ենթարկվելու, համալրվելու և նոր տարրերով հարստանալու այնպիսի ճկունություն չունեն, ինչպիսիք ունեն ավանդույթները (հեղափոխական, տեխնիկական, գիտական), թեև նրանք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Մասնավորապես, երկուսն էլ ծառայում են ընդհանուր, կրկնվող, զանգվածային երևույթներին: Այս հասկացությունները հա-

¹³ Гадамер Х. Г., Истина и метод: Основы философской герменевтики: М., «Прогресс», 1988, с. 546.

¹⁴ Гуссерль Э., Идея феноменологии. М., «Гуманитарная Академия», 2008, с. 184.

¹⁵ Плахов В. Д., Традиции и общество. Опыт философского-социологического исследования. М., «Мысль», 1982, с. 36.

մընկնում են նաև այն դեպքում, երբ «սովորույթ» հասկացությունը գործածվում է ավանդույթի էմպիրիկ տվյալները՝ մարդկային զգացմունքները, հույզերը և այլն նշանակելու համար: Ավանդույթը սովորույթի համեմատ ավելի ընդհանուր հասկացություն է:

Մասնագիտական վերլուծություններում «ավանդույթ» հասկացությունը գործածվում է երկու հիմնական իմաստով: Մ. Վեբերն, օրինակ, սոցիալական գործողությունն ու վարքը մի դեպքում սահմանում է որպես (1) նպատակառացիոնալ, արժեքառացիոնալ, աֆեկտիվ, ավանդական, այսինքն՝ այնպիսին, որը հենված է սովորույթների երկարատև գործածման վրա:¹⁶ Այս իմաստով ավանդույթը նույնացվում է հոգեբանական իներցիային և հանդես է գալիս որպես զուտ նմանողական, ավտոմատիկ, չիմաստավորված գործողությունների տարատեսակ, որպես «վաղօրոք յուրացված դիրքորոշումների ուղղությամբ սովորական գրգռման ավտոմատիկ արձագանք»: Այլ կերպ ասած՝ Մ. Վեբերն ավանդույթը մեկնաբանում է որպես սովորույթ, որպես սովորական վարք, որն իր համար սկզբունքային նշանակություն ունի: Մեկ այլ դեպքում նա ավանդույթը մեկնաբանում է (2) որպես որոշակի արժեք կամ արժեհամակարգ, ըստ որի՝ ավանդական գործողությունը հանդես է գալիս որպես արժեքառացիոնալ գործողության տարատեսակ: Ավանդույթների վերերյան ըմբռնումը ունի տեսական կարևոր նշանակություն, քանի որ մինչ այդ ավանդույթների գործառական նշանակությունը հիմնականում դիտարկվում էր բացասական իմաստով:

Դիտարկելով ավանդույթը որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ՝ կարելի է պայմանականորեն առանձնացնել ավանդույթի սահմանման երեք ըմբռնումներ: Առաջին՝ գործառության (ֆունկցիոնալ), որի դեպքում ուշադրության կիզակետում տվյալ հանրության մի սերնդից մյուսը փոխանցվող այս կամ այն (հիմնականում հոգևոր) արժեքների գործառույթն է: Երկրորդ՝ օբյեկտային, որի ուշադրության կենտրոնում ոչ թե արժեքների փոխանց-

¹⁶ Տե՛ս **Вебер М.**, Основные понятия стратификации. // Социс, 1994, № 5, էջ 147-156:

ման եղանակն է, այլ՝ փոխանցման ենթակա արժեքների բովանդակությունը: Եվ վերջապես երրորդ՝ սուբյեկտային, որի դեպքում առաջին պլան է մղվում ոչ թե փոխանցման գործառույթը, կամ փոխանցման օբյեկտը, այլ անցյալի նկատմամբ տվյալ սերնդի վերաբերմունքը, նրա համաձայնությունը այդ ժառանգությունն ընդունելու կամ մերժելու առնչությամբ:¹⁷

Սոցիալական հետազոտություններում հաճախ տրվում են ավանդույթների մակերեսային մեկնաբանություններ, որոնք պայմանավորված են այն հանգամանքով, որ ուշադրությունը բևեռվում է պատմական զարգացման կարճ փուլերի վրա, երբ անցյալի լեգիտիմացման մեխանիզմը աշխատում է ոչ ռեֆլեքսիվ կերպով միայն այն պատճառով, որ դա անցյալ է: Է. Շիլըր նկատում է, որ պատմության ուսումնասիրությունը ավանդույթի ուսումնասիրությունից տարբերվում է նրանով, որ առաջին դեպքում մենք գործ ունենք անցյալի, իսկ երկրորդ դեպքում՝ անցյալի նկատմամբ մարդկանց վերաբերմունքի հետ: Նա ավանդույթի էությունը ըմբռնում էր որպես հեղինակության լեգիտիմության նկատմամբ պատկերացումների և հավատի հաջորդափոխում, ժառանգորդում:¹⁸ Է. Շիլըր անցյալը դիտարկում է որպես կապվածության յուրահատուկ օբյեկտ: Ավանդական մշակույթի ժառանգորդման գործառույթի ժամանակ այն կարծիքն է ստեղծվում, թե անցյալն ավելի լավն է, քան ներկան: Հոգեբանական այս երևույթը Է. Շիլըր բացատրում է սրբազան ակունքի հետ նախասկզբնական շփման պատկերացումներով, ինչպես նաև «ոսկեդարի» վերադարձի սպասումներով: Պ. Բոյերը ավանդույթները դիտարկում է որպես սոցիալական պրակտիկայի մոդելներ և դրանցից յուրաքանչյուրի էությունը փորձում է բացահայտել «խորհրդանիշներ», «մշակութային մոդելներ» և «սոցիալականացում» տերմինների միջոցով:¹⁹

¹⁷ Տե՛ս **Шацкий Е.**, Утопия и традиция. М., «Прогресс», 1990, էջ 364:

¹⁸ Տե՛ս **Shils E.**, Tradition and Liberty: Antinomy and interdependence, //Ethics. 1958.Vol. 68 , № 3, էջ 26:

¹⁹ Տե՛ս **Boyer P.**, Tradition as truth and communication. A cognitive description of traditional discourse. New York: Cambridge, 1990, էջ 8-9:

Բ. Ակտոնի կարծիքով «ավանդույթը համոզում կամ պրակտիկա է, որը փոխանցվում է սերնդից սերունդ, և որն ընդունվում է որպես հեղինակություն, որին հետևում են առանց որևէ հիմքի»:²⁰

Յու. Բրոնդեյն ավանդույթը բնութագրում է որպես սոցիալական և մշակութային ժառանգություն, որը փոխանցվում է սերնդից սերունդ և ժամանակի մի տևական ընթացքում վերարտադրվում է որոշակի հասարակություններում և սոցիալական խմբերում:²¹ Հետազոտողի կարծիքով մարդկության պատմության ընթացքում ավանդույթի նկատմամբ վերաբերմունքի երեք հիմնական տիպ է մշակվել: Առաջին տիպը բնորոշ է հոմեոստատիկ հասարակություններին, որտեղ ավանդույթը դիտարկվում է որպես «համընդհանուր օրենք», որին կենսագործունեության բոլոր ոլորտներում պետք է պարտադիր հետևել և որից հրաժարումը հանցանք է և արժանի է հասարակության պարսավանքի: Երկրորդ տիպը բնորոշ է այսպես կոչված «ավանդական հասարակություններին», որոնք առաջնորդվում են «ավանդույթը հոգևոր կեցության հիմքն է» սկզբունքով: Երրորդ՝ «նորարարական» տիպի հասարակություններին բնորոշ է «ավանդույթը բացասման ակունքն է» սկզբունքը: Մյանց առանձնահատկությունը ոչ թե ավանդույթի բացարձակ ժխտումն է, նրանից հրաժարումը, այլ անցյալի կառուցողական քննադատության միջոցով նորի հաստատումը: Այստեղ ավանդույթը հանդես է գալիս որպես զարգացման անհրաժեշտ բաղադրիչ, բայց ոչ ինքնին, այլև որպես նոր գիտելիքի ստեղծման միջոց:²²

Է. Ս. Մարգարյանը խնդրո առարկան քննարկում է մշակութաբանական տեսանկյունից: «Մշակութային ավանդույթը սոցիալապես կազմակերպված կարծրատիպերի միջոցով արտահայտվող խմբային այն փորձն է, որը տարածաժամանակային շարժահաղորդմամբ

²⁰ Acton H. B., Tradition and some other forms of order// Proceeding of the Ar. Society. 1952-1953. P.2.

²¹ Տե՛ս **Бромлей Ю. В.**, Этнографические аспекты изучения человека. Человек в системе наук. М., 1989, էջ 44:

²² Տե՛ս **Бромлей Ю. В.**, О некоторых актуальных задачах этнографического изучения современности //Советская этнография, 1983, № 6, էջ 165:

(տրանսմիսիա) կուտակվում և վերարտադրվում է մարդկային տարբեր կոլեկտիվներում»:²³ Որքան էլ տարօրինակ թվա, ավանդույթը սերտորեն կապված է ներկայի հետ, այն փոխանցվում է ներկայում և դրանից ելնելով որոշարկում է, թե ինչ պետք է անել: Այս իմաստով, անշուշտ, ավանդույթի ցանկացած համակարգ կառուցվում է արդիականության հիմքի վրա, հենվելով սակայն մշտապես նորոգվող անցյալի վրա:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ ավանդույթը «մարդկային գործունեության (ակտիվության) և դրա արդյունքների կարծրատիպերի, դրանց մասին պատկերացումների և, վերջապես, դրանց խորհրդանշման համակարգ է»:²⁴ Ընդ որում, ինչպես ամբողջության մեջ վերցրած մշակույթը, այնպես էլ ավանդույթը հանդես են գալիս ոչ թե կենսաբանական, այլ սոցիալական հիշողության ձևով: Ավանդույթի նման ըմբռնումը հնարավորություն է տալիս հասարակությունները տարբերակել ոչ թե ելնելով նրանից, թե դրանք ավանդույթներ ունեն, թե ոչ, այլ նրանով, թե ինչ բովանդակություն ունեցող ավանդույթների վրա է կառուցված տվյալ հասարակությունը, թե ինչ եղանակներով է իրականացվում դրանց գործառնությունը և փոխանցումը:²⁵ Առավել ևս, որ ավանդույթները իրավական դրույթներով չկանոնակարգված գաղափարական հարաբերությունների (քաղաքական, բարոյական, գեղագիտական, կրոնական) փոխանցման եղանակներ են, որոնք կայունացնում են տվյալ հասարակությունում ձևավորված հարաբերությունները և նպաստում դրանց վերարտադրությանը:²⁶ Այսինքն՝ ավանդույթը կառուցվածք է, որի կարևոր հատկանիշը փոխանցելիությունն է, հաղորդակցման շղթան, որում կարևոր է փոխանցման մեխանիզմի անընդհատությունն անցյալից ներկա: Գալով անցյալից՝ ավանդույթը ձևավորում է ներկան: Այդ իսկ պատճառով կարևորա-

²³ **Маркарян Э. С.**, Теория культуры и современная наука, М., «Наука», 1983, с.80.

²⁴ **Полонская И. Н.**, Традиция как символическая знаковая система//Известия высших учебных заведений. Общественные науки.«Актуальные проблемы социально-гуманитарного знания», Ростов н/Д, 2005, с.118.

²⁵ Տե՛ս նույն աշխ., էջ 123:

²⁶ Տե՛ս **Суханов И. В.**, Обычаи, традиции и преемственность поколений, М., «Полигиздат», 1976, էջ 10:

գույն խնդիրն ավանդույթի վերարտադրությունն է ներկայում, այլ ոչ թե նրա գոյությունն անցյալում:²⁷

Մասնագիտական գրականության մեջ, որպես կանոն, ավանդույթը քննարկվում է երկու իմաստով. 1) որպես արմատական համապարփակ բնութագիր, որի ազդեցությունը տարածվում է բավականին լայն տարածաժամանակային սահմաններում, 2) որպես հաստատուն, որը վերարտադրվում է որոշակի խմբերում, օրինակ՝ էթնիկական ընդհանրություններում: Այս նշանակությունները վերլուծելով մշակութաբանական տեսանկյունից, Է. Բիկովան, օրինակ, պնդում է, որ առաջին դեպքում ավանդույթը կարող է ընդգրկել պատմական մի ամբողջ դարաշրջան, քաղաքակրթություն, տարածաշրջան և իրենով որոշարկել մշակույթի կոնկրետ տիպը, իսկ երկրորդ դեպքում ավանդույթը ամբողջությամբ նույնանում է ավանդական էթնիկական մշակույթի կամ դրա առանձին դրսևորումների (բանահյուսություն, ժողովրդական արվեստ) հետ:²⁸

Որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ «Ավանդույթ» հասկացության վերաիմաստավորումը խոր առնչություններ ունի ազգային ինքնության ու մշակույթի ընկալման ու մեկնաբանման հետ: Այսպես, օրինակ, ավանդույթի բովանդակությունը հաճախ արտահայտվում է գաղափարախոսական առումով չեզոք «ինքնատիպություն», «ինքնություն», «առանձնահատկություն» և «մշակութային ժառանգություն» հասկացությունների միջոցով: Եթե «ինքնությունը» ընդունվում է որպես մշակույթի կենսական միջուկ, հարաշարժ սկզբունք, որը անձին է և ժողովրդին միավորում է իրենց քաղաքակրթության արժեքների հետ, ապա «ինքնատիպություն» հասկացության գործածումը ավելի շատ համապատասխանում է քաղաքական հարաբերությունների պահանջմունքներին և այն կարելի է կիրառել «անկախություն», «ինքնավարություն» հասկացու-

²⁷ Տե՛ս **Аверьянов В. В.**, Традиция и динамический консерватизм. М., «ИДК», 2012, էջ 258:

²⁸ Տե՛ս **Балдина О. Д., Быкова Э. В., Гавриляченко Е. Э.**, Народная культура в современных условиях// Традиция как способ формирования и функционирования народной культуры. М., Рос. ин.-т культ., 2000, էջ 128:

թյունների համատեքստում: Սակայն, «ինքնատիպությունը» ամորֆ հասկացություն է, այն կարելի է վերագրել ցանկացած էթնիկական խմբի, ի տարբերություն «ավանդույթի», որն ունի իր մակարդակները, կառուցվածքը, գործառության տրամաբանությունը և այլն: «Ինքնատիպությունը» գուրկ է մաս փոխանցման, ժառանգորդման սկզբունքներից, որոնք շատ կարևոր են մշակույթի հաղորդակցական բնութագրի տեսանկյունից: Ելնելով այդ հանգամանքից՝ որոշ հեղինակներ իրավացիորեն նկատում են, որ ավանդույթը կարելի է բնութագրել որպես «մարդկային կեցության կենդանի և օրգանական կանոն, որով մարդը բավարարում է իր մարդաբանական և էկզիստենցիալ խորքային պահանջմունքները»:²⁹

Ավանդույթների տեղայնացումը դեռևս նրանց փրկության գրավականը չէ, քանի որ փակ համակարգերը, այնուամենայնիվ, կենսունակ չեն և, հետևաբար, ավանդույթների պահպանման այլընտրանքային տարբերակի հնարավորությունը պետք է կապել ոչ թե ապավինելով փակ կամ բաց տիպի հասարակություններին, այլ կայուն հասարակության մոդելին: Որոշ իմաստով կարելի է ասել, որ, իրոք, «ավանդույթը միասնական ստեղծագործական նախագծի մեջ անհատական ազատությունների համախմբման ձև է, դա միակ եղանակն է ընդհանուր նախագծի շրջանակներում ակտիվ, ինքնուրույն անձի ճակատագիրը առանձին ազատությունների կոլեկտիվ կազմակերպման սկզբունքների հետ համատեղելու համար... Երբ ավստում ենք ավանդույթների կորստյան համար, մենք հոգ ենք տանում ոչ թե սոսկ ծեսերի և հնացած դրզմաների մասին, այլ՝ այն անձի, որը ավանդույթներից գուրկ աշխարհում չի կարող լիարժեք լինել... Ավանդույթը արտառացիորենալ համընդգրկող ստեղծագործական ծրագիր է, որն իրականացվում է հոգեպես ազատ անձանց օրգանական համերաշխության շնորհիվ»:³⁰ Միասնական տեսություն ստեղծելու տվյալ փորձում Ս.Վ.Կորնևը ավանդույթների հիմնական գոր-

²⁹ **Сакович И. С.**, Удержание традиции как условие сохранения культуры и выживания человека //История. Философия. Педагогика. Культурология: сб.стат. - Н.Новгород, 2004, с. 115.

³⁰ **Корнев С. В.**, Постмодерн-фундаментализм, М., «Мысль», 1999, с.28.

ծառայութիւնը և համարում անձի և խմբային այնպիսի նույնականացումը, երբ, սակայն, անհատի կողմից ավանդույթների պահպանումը չի դիտարկվում որպէս նրա եզակիության կորուստ:

Պետք է նկատել, սակայն, որ «ավանդույթ» և «ժառանգություն» հասկացությունները ունեն մի շարք տարբերություններ, քանի որ առաջինը անպայման ներառում է ժառանգվածի գնահատման պահիր: Այս առնչությամբ ավանդույթը կարելի է դիտարկել որպէս ժառանգության այն հատվածը, որն առանձնահատուկ ձևով ներառված է արդիականության մեջ:³¹ Արդիականությունը ավանդույթների ընդունման այնպիսի տեսանկյուն է հավելում, ինչպիսին դրանց իմաստավորումն է: Սա կարևոր հանգամանք է, քանի որ ավանդույթները շրջանառության մեջ են մտնում միայն իմաստավորումից հետո, արհեստականորեն դրանք չեն վերածնվում: Հաճախ առանձնացվում են նաև ավանդույթի սոցիալ-փիլիսոփայական մոտեցման երեք հիմնական ըմբռնումներ՝

1. հաստատութենական (ինստիտուցիոնալ),
2. հաղորդակցական,
3. կառուցվածքային-ֆունկցիոնալ:³²

Ինստիտուցիոնալ մոտեցման տեսակետից ավանդույթը հենվում է այնպիսի սոցիալական ինստիտուտների գործունեության վրա, որոնց նպատակը անցյալի նորմերի և արժեքների պահպանումն ու վերարտադրությունն է: Ընդ որում, այս դեպքում որպէս հիմնարար արժեք և որպէս ավանդույթի պահպանման գլխավոր պայման դիտարկվում է սոցիալական կայունությունը: Նման մոտեցման թերությունն այն է, որ չափից ավելի շատ է կարևորվում ավանդույթի և որոշակի ինստիտուցիոնալ կառույցների փոխկապակցվածությունը, առավել ևս, որ այս մոտեցման համաձայն, ավանդույթի պահպանումը

³¹ Տե՛ս **Яковлева Л. Е.**, Испанская и русская философские традиции; общее и особенное //Гуманитарные науки, философия и компаративистика, СПб: «Дрофа», 2003, էջ 22:

³² Տե՛ս **Андряков П. А.**, Онтологические основания традиции в зеркале социально-философского анализа //Известия Саратовского университета. Серия: Философия. Педагогика. Психология, 2013, т.13, Вып.1,էջ 3-6:

կախված է այդ ինստիտուտների գործունեության արդյունավետությամբ: Հաղորդակցական մոտեցման դեպքում ավանդույթը դիտարկվում է որպես տեխնիկական միջոցների ամբողջություն, որը հնարավորություն է ընձեռում պահպանել և վերարտադրել սոցիալապես նշանակալի տեղեկատվությունը: Կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցման դեպքում ավանդույթը դիտարկվում է որպես իշխանության լեգիտիմացման եղանակ, որը կիրառվում է որոշակի սոցիալական, քաղաքական և սիմվոլիկ գործոնների համատեղման պարագայում: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ավանդույթների գործառնության շնորհիվ սոցիալական համակարգերում տեղի են ունենում լարված հարաբերությունների լիցքաթափում, ապա կարելի է ասել, որ ավանդույթները կատարում են քաղաքական հակասությունների մեղմման յուրահատուկ գործառնություն:

Գիտարկելով ավանդույթը որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, վերլուծելով ավանդույթի սահմանման վերոհիշյալ տարբերակները, դրանք համադրելով ու համեմատելով՝ կարելի է ավանդույթը սահմանել որպես սերնդից սերունդ փոխանցվող սովորույթների, ծեսերի, արարողակարգերի ամբողջություն, որպես հասարակական հարաբերությունների յուրահատուկ կարգավորիչ: Միաժամանակ պետք է նշել, որ ավանդույթների ակտիվ գործառնությունը ենթադրում է սովորույթների և ծեսերի նկատմամբ կայուն վերաբերմունք, այլ կերպ ասած՝ որոշակի կարծրատիպային վարք:

«Կարծրատիպ» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրել Ու. Լիպմանը՝ բնութագրելու համար զանգվածային գիտակցության առանձնահատկությունները: Ու. Լիպմանը այդ եզրույթն ըմբռնում է որպես մարդու գիտակցության մեջ մշակույթով դետերմինավորված՝ աշխարհի կանոնակարգված պատկեր, որը սահմանում է գիտակցության ու վարքի ուղղվածությունն ու բովանդակությունը: Այս կապակցությամբ Ու. Լիպմանը նկատում է, որ կարծրատիպը, որպես անձնական ավանդույթների միջուկ, հասարակության մեջ մարդկանց դրության ու դիրքի պաշտպանն է, և որպես այդպիսին այն աշխարհին ուղղված մեր սեփական զգացմունքների, ար-

ժեքների, դիրքորոշումների և իրավունքների պրոեկցիան է:³³ Ու. Լիպմանի կարծիքով՝ փորձելով ըմբռնել շրջապատող հակասական աշխարհը, մարդն իր գլխում ստեղծում է մի պատկեր այն երևույթների վերաբերյալ, որոնց հետ անմիջականորեն չի շփվել: Դա նշանակում է, որ մարդը բազմաթիվ իրողությունների մասին հստակ պատկերացում ունի անգամ մինչև իրական կյանքում դրանց հանդիպելը: Նման պատկերացում-կարծրատիպերը ձևավորվում են տվյալ անհատի մշակութային շրջապատի ազդեցությամբ: Մենք առավելապես սկզբից որոշարկում ենք որևէ երևույթ, ապա նոր միայն դիտարկում: «Կարծրատիպերը» սոցիալական, աշխարհագրական և քաղաքական նեղ սահմաններից դուրս գալու և աշխարհի ավելի ամբողջական պատկեր ստեղծելու հնարավորություն են ընձեռում: Կարծրատիպերը այնպիսի համառությամբ են սերնդից սերունդ փոխանցվում, որ հաճախ ընկալվում են որպես ռեալություն, կենսաբանական փաստ:

Այսպիսով, կարծրատիպի գլխավոր բնութագիրը հայտնի պատկերի, սխեմայի հիմքի վրա սոցիալական խմբերի և հանրույթների արդեն առկա գիտակցության ձևերի և վարքի գործառության գործընթացները ապահովելու կարողությունն է: Կարծրատիպերի մյուս՝ պաշտպանիչ գործառույթի առնչությամբ կարելի է տարբերակել ևս երկու ըմբռնումներ: Առաջին՝ կարծրատիպի ճանաչողական պատկերների ձևավորումը պայմանավորված է համակրանքի և հակակրանքի զգացմունքներով, որոնք էլ իրենց հերթին պայմանավորված են հոգեբանական ներքին գործընթացներով:³⁴ Երկրորդ՝ կարծրատիպի ձևավորումը բացատրվում է ոչ միայն հոգեբանական, այլև միջանձնային շփման, խմբի հետ անհատական «Ես»-ի նույնականացման գործընթացների ազդեցությամբ:³⁵

«Անձ-հասարակություն» փոխհարաբերությունների տեսանկյունից կարծրատիպերը կարելի է բաժանել չորս հիմնական խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են սոցիալական միջավայրի մասին մար-

³³ Տե՛ս **Липман У.**, Публичная философия. М., «Идея-Пресс», 2004, էջ 146:

³⁴ Տե՛ս **Alport G.**, The Natural of Prejudice, New York, 1958, էջ 21:

³⁵ Տե՛ս **Violett G.**, Theory of stereotypes// G.Violett, K. Silvert// Social Forces, 1951, Vol.21, էջ 24:

որու պատկերացումների ձևավորման անհատական-հոգեբանական առանձնահատկությունները: Մակայն, քանի որ, հնարավոր չէ առանձնացնել իրականության գուտ անհատական պատկերները, ուստի կարելի է առանձնացնել կարծրատիպերի մեկ այլ խումբ, որոնք ձևավորվում են միջանձնային փոխգործակցության ընթացքում և արդեն սոցիալական կազմավորումներ են: Երրորդ խմբին են պատկանում այն կոլեկտիվ պատկերացումները, որոնք հանդես են գալիս որպես սոցիալական կազմավորումներ և ձևավորվում են միջխմբային հարաբերություններում: Պատկերացումների չորրորդ խումբը գաղափարախոսությունն է, որը ձևավորվում է կոնկրետ հասարակության պատմական որոշակի պայմանների ազդեցությամբ:

Ժամանակակից ըմբռնմամբ՝ կարծրատիպը սոցիալական երևույթի կամ օբյեկտի սխեմատիկ, պարզունակացված, ստանդարտացված և կայուն այն պատկերն է, որը կազմում է արժեքային կողմնորոշման կարևոր բաղադրատարրը: Այն արտահայտում է որևէ երևույթի նկատմամբ մարդու այն սովորական վերաբերմունքը, որը ձևավորվելով սոցիալական պայմանների և նախընթաց փորձի հիման վրա, անընդհատ վերարտադրվում է և փոխանցվելով սերնդեսերունդ աստիճանաբար վերածվում է ավանդույթի, այսինքն՝ որոշակի մշակութային նորմերի ու արժեքների, գիտակցության և վարքի եղանակների վերարտադրության մեխանիզմի, որը ժամանակի ընթացքում իր օգտակարությունը հաստատելու շնորհիվ ընդունվում է մարդկանց կողմից:

Ամփոփելով ավանդույթների և կարծրատիպերի առնչությունների հետ կապված մասնագիտական մոտեցումների քննարկումը, կարելի է ընդհանրացնել, որ.

Առաջին՝ ավանդույթներն ու կարծրատիպերը սերունդների մշակութային ժառանգորդման գործիք, երիտասարդական մշակույթի զարգացման գործոն են: Այսինքն՝ ավանդույթը մարդկանց սոցիալական կապի այնպիսի եղանակ է, որը վերարտադրվում է գործունեության խմբային կարծրատիպերի իրացման միջոցով:

Երկրորդ՝ ավանդույթները հասարակության մեջ մարդկանց ձևավորված կայուն հարաբերությունների և ընդհանրական նորմերի

ու սկզբունքների այն ամբողջությունն են, որոնք որոշարկում են գործողությունների կարգն ու վարքի ծրագիրը:

Երրորդ` ավանդույթներն ու կարծրատիպերը կատարում են մշակութային տեղեկատվության կուտակման, պահպանման, փոխանցման և վերարտադրման գործառույթ:

Չորրորդ` ավանդույթներն ու կարծրատիպերն ունեն իրենց «կենսական շրջափուլերը», դրանք ձևավորվում, վերարտադրվում և նորացվում են, ինչի հետևանքով կամ պահպանվում կամ մերժվում են:

Հինգերորդ` ավանդույթները կազմակերպում են կենսագործունեության եղանակների, մտածողության և վարքի տիպերի վերարտադրության գործընթացը և պատմական զարգացման ընթացքում վերածվում են յուրահատուկ սոցիալական հաստատության (ինստիտուտ)՝ դառնալով մշակույթի և սոցիալական միջավայրի կարևոր բաղադրատարր: Այլ կերպ ասած` ավանդույթները հանդես են գալիս որպես կարծրատիպացված սոցիալական փորձ, մշակույթի ժառանգորդման յուրահատուկ ձև:

Այսպիսով. «Ամենալայն ըմբռնմամբ` ավանդույթն այն ամենն է, ինչը ժառանգվում է նախնիներից: Ավելի նեղ սահմանման դեպքում ավանդույթը դիտվում է որպես սոցիալական փորձի (գիտելիք, ապրում, վարքագիծ) կայուն ձևերի ամրագրում, արմատավորում, փոխանցում և վերարտադրություն: Մեկ այլ դեպքում ավանդույթ համարվում է սոցիալական փորձի պահպանման, փոխանցման, վերարտադրման մեխանիզմը»:³⁶ Ավանդույթները դրսևորվում են հասարակական կյանքի բացարձակապես բոլոր ոլորտներում, հանդես են գալիս որպես խմբային ստուգված և օգտակար փորձի սոցիալական կրիչներ:

³⁶ **Սարգսյան Ա. Հ.**, Մշակույթի տեսություն, Եր., «Տնտեսագետ», 2003թ., էջ 78:

1.2 Ավանդույթները որպես սերունդների կենսավորձի փոխանցման մեխանիզմ

Ավանդույթների էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրա գործառույթները և համակարգային վերլուծությունը լրացնել նրա զարգացման ու գործառական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Վերլուծության մասն անհրաժեշտությունը պայմանավորված է ավանդույթի համակարգային գործառական էությամբ, որը երևան է հանում ավանդույթի բուն իմաստն ու բովանդակությունը:

Հասարակական տարբեր ոլորտներում «ավանդույթ» հասկացությունն օգտագործվում է այն դեպքում, երբ անցյալը նշելու նկատառումներից ելնելով խոսվում է հասարակական հարաբերությունների և սոցիալական գործունեության մասին: Այլ կերպ ասած՝ ավանդույթը այսպես թե այնպես կապված է անցյալի հետ, բայց միաժամանակ գոյգործվում է այլ արժեքների հետ: Մասնավորապես՝ ավանդույթը մեկնաբանվում է որպես փորձի հոմանիշ: Դա բացատրվում է նրանով, որ ձևավորված վարքի նորմերն ու կանոնները ժամանակի ընթացքում հղկվում ու դառնում են ամենավորձվածն ու իմաստունը: «Ժառանգված նախապաշարմունքը՝ իրեն չգիտակցող բանականությունն է: Ինչպես բանականությունը, նախապաշարմունքը ևս ունի իր հիմնավորումը: Եթե մանրակրկիտ ուսումնասիրենք նախապաշարմունքը, ապա կհայտնաբերենք, որ դրա աղբյուրը մարդկային փորձի պաշարն է: Շատ փորձերի և փորձարկումների արդյունքում մարդիկ գալիս են այն եզրակացության, որ տվյալ կենսակերպը ամենաճիշտն է և հարմարը, քանի որ միայն նա է համապատասխանում իրավիճակին, որում նրանք գտնվում են»:³⁷ Այս դեպքում ավանդույթը դառնում է կոլեկտիվ փորձի ծածկագիր և մարդիկ, չիմանալով այդ մասին, հավանություն են տալիս նրան, ինչին սովորել են: Համընդհանուր պրակտիկան (այն ամենը, ինչ կատարվում է սովորույթի համաձայն) առօրյա սոցիալական գործունեության հիմ-

³⁷ Տե՛ս **Тэн И.**, Философия искусства. М., «Республика», 1996, էջ 235:

նական տարրն է: Նման դեպքերում ավանդույթները մեծարվում են հանուն այնպիսի արժեքների, ինչպիսին փորձն է, գիտելիքները և այլն:

Ավանդույթը հանդես է գալիս որպես ընտրված արժեք: Կարելի է բերել այնպիսի իրավիճակների օրինակներ, երբ ավանդույթները ձևավորվում են որոշ արժեքների նկատմամբ հավանության հետևանքով: Պատահական չէ, որ կրոնական գործիչներն ավանդույթը հաճախ դիտարկում են որպես ներկայի և հավերժության միջնորդի: Այս դեպքում կարևորվում է ոչ թե վաղեմությունը, այլ ավանդության մեջ պահպանված հավերժ սկզբունքները: Այս առնչությամբ Ե. Շագկին նկատում է, որ բազմաթիվ կրոնական բարեփոխիչներ, օրինակ բերելով վաղ քրիստոնեությունը և հաշվի չառնելով ժամանակի ազդեցությունը, ձգտում են ակունքներին վերադառնալու ճանապարհով հաղթահարել ժամանակի ազդեցությունը: «Ոչ թե վաղեմությունը պետք է վկայի հավատի ճշմարտացիության մասին, այլ կապը հայտնության հետ»:³⁸

Այսպիսով, ավանդույթը կարելի է դիտարկել որպես սոցիոմշակութային փորձի այս կամ այն տարրերի հաստատման, ամրապնդման և ընտրողական պահպանման ունիվերսալ ձև, ինչպես նաև դրանց փոխանցման ունիվերսալ մեխանիզմ, որն ապահովում է սոցիոմշակութային գործընթացների ծագումնաբանական ժառանգականությունը: Ավանդույթը իր մեջ ընդգրկում է և այն, ինչը փոխանցվում է, և այն, թե ինչպես է տեղի ունենում այդ փոխանցումը:

Ավանդույթը դիտարկելով որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, անդրադառնալով սոցիալական փորձի հիմնախնդրին, հարկ է նկատել, որ քննարկվող հարցի տեսանկյունից առավել կարևոր է նրա փիլիսոփայական ըմբռնումը: Փորձը մարդու և շրջակա միջավայրի փոխգործակցության ընթացքում ձեռքբերված զգայական ընկալումների այն ամբողջությունն է, որը նյութական աշխարհի մասին մեր գիտելիքների ակունքն ու հիմքն է: Վստահաբար կարելի է պնդել, որ եթե փորձը չլիներ, ապա որևէ բան ավանդական

³⁸ Шацкий Е., Утопия и традиция. М., «Прогресс», 1990, с. 334.

չէր կարող դառնալ: Որպէս սոցիալականության անօտարելի գոյաբանական տարր, ավանդույթը մի կողմից հանդես է գալիս որպէս սոցիումին անհատի հարմարման եղանակ, մյուս կողմից՝ որպէս հասարակության մեջ հարաբերությունների կարգավորման սոցիոմշակութային գործիք: Որպէս սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ ավանդույթները ձևավորվում են կոլեկտիվ գործունեության ընթացքում, ամենից առաջ հանդես գալով որպէս որևէ հանրույթի ներսում հարաբերությունների կարգավորիչ: Կենսագործունեության ընթացքում մարդկային կոլեկտիվները կուտակում են որոշակի սոցիալական փորձ: Ավանդույթը վարքի որոշակի ստանդարտներում ձևավորում, ապա ընտրում և համակենտրոնացնում է սոցիալական փորձը: Ավանդույթին բնորոշ է սոցիալական տեղեկատվության ձևավորման և կողմնորման կոլեկտիվ բնույթը, կայունության բարձր մակարդակը, սոցիալական տեղեկատվության «ընթերցման» և կողմնորման ընթացքում գիտակցական և անգիտակցական գործոնների համատեղումը: Թեև պետք է նկատել, որ վարքի կարգավորման ընթացքում ավանդույթը չի հանգում միանշանակ, խիստ ալգորիթմների:³⁹ Ընդօրինակելով կամ յուրացնելով նախընթաց փորձը՝ մարդը հարմարվում է այս կամ այն սոցիալական կամ մասնագիտական խմբին՝ դառնալով «յուրային»: Ավանդույթները նպաստում են հասարակության հավասարակշռության և կայունության պահպանմանը: Հասարակության մեջ դրանց ամրակալումը և խորությունը տարբեր են և կախված են դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հասարակության՝ որպէս ամբողջի գոյության ու գործառության ընթացքում դրանց խաղացած դերից: Հազարամյակների ընթացքում ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունքը ինքը կարող է դառնալ ավանդույթ՝ նպաստելով էթնոմշակութային տվյալ կազմավորման ինքնության պահպանմանը:

Ավանդույթների՝ կենսափորձի փոխանցման եղանակ լինելու կարողությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

³⁹ Տե՛ս **Плахов В. Д.**, Норма и отклонение: Философско-теоретическое введение в социальную этологию. «Юридический институт», СПб., 2011, էջ 158:

1. *Այոց փորձը փոխառելու մարդկային կարողությունով:* Ավանդույթները կոչատունեն այնքան, որքան մարդիկ ընդունակ են և, որ ամենակարևորն է, շահագրգռված են իրենց փորձը փոխանցելու հաջորդ սերունդներին: Կարելի է ասել, որ մարդկության կամ առանձին հանրույթների ջանքերով ավանդույթը սեփական կենսագործունեությունն ապահովելու կոլեկտիվ փորձ է: Ավանդականն այն է, ինչ ընկալվում և վերարտադրվում է բազմաթիվ անձանց կողմից:

2. *Ավանդույթների տարածման աստիճանով:* Ավանդույթներն իրենց բնույթով կարող են լինել տեղային, համազգային և անգամ միջազգային նշանակության: Օրինակ, տոները նշելու ավանդույթը բնորոշ է բոլոր ժողովուրդներին ու ազգերին, կրոնական դավանանքներին ու քաղաքակրթություններին: Տվյալ սոցիումում ավանդույթի տարածվածության աստիճանը նպաստում է կենսավորձի փոխանցման աստիճանի բարձրացմանը:

3. *Ավանդույթների կայունության աստիճանով:* Ավանդույթների կենսավորձի աղբյուր լինելու կարողականությունը պայմանավորված է դրանց կայունությամբ: Մարդկության պատմության ընթացքում տեղի է ունենում ավանդույթների «բնական ընտրություն», որի արդյունքում որոշ ավանդույթներ վերանում են, ստեղծվում են նորերը, իսկ որոշները հազարամյակներ շարունակ պահպանվում են: Ավանդույթների «բնական ընտրության» կայուն միջուկը համամարդկային արժեքների պահպանումն է:

4. *Ավանդույթների հասարակական նշանակությամբ:* Հաջորդ սերունդներին կենսավորձի հուսալի փոխանցման եղանակ կարող են լինել միայն այն ավանդույթները, որոնք ունեն համահասարակական կարևոր նշանակություն և հիմնված են սահմանային իրավիճակներում իրեն արդարացրած այն արժեքանորմատիվային վարքի վրա, որը միտված է սոցիոնշակութային նույնականության պահպանմանը:

5. *Ավանդույթների ակտիվ կրողների առկայությամբ:* Ելնելով ավանդույթների նկատմամբ վերաբերմունքից մարդկանց կարելի է դասակարգել հետևյալ կերպ. ավանդույթների հավատարիմ հետևորդներ, ակտիվ կրողներ, պասիվ կրողներ և հակառակորդներ:

Ակտիվ կրողների շարքում առանձնանում են ավանդույթների «խանդոտ պաշտպանները», որոնք ոչ միայն իրենք են հետևում ավանդույթի պահանջներին, այլև նույնը պահանջում են նաև մյուսներից, որոնց վարքը որևէ կերպ չպետք է տարբերվի ավանդականից, հետևաբար՝ իրենց վարքից ու գնահատականներից:

6. *Մարդու բազիսային պահանջմունքներին ավանդույթների մերժության աստիճանով*: Մարդու բազիսային պահանջմունքներին առավելագույնս մերձեցած առօրեականության ավանդույթները ժամանակի ընթացքում շատ քիչ են փոխվում, մինչդեռ հասարակական-պատմական ֆորմացիայի առանձնահատկությունն արտացոլող ավանդույթները անմիջապես իրականանում են տվյալ շրջափուլի ավարտից հետո: Ճիշտ է, ավանդույթները պայմանավորված են մարդկանց ապրելակերպով, սակայն հենց իրենք էլ ձևավորում են այդ ապրելակերպը: Յուրացնելով ինչ-ինչ ավանդույթներ, հաջորդ սերունդը ձևավորում է նաև իր ապրելակերպը՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ նախորդներին Հետևաբար, առանց ժառանգորդման չէր լինի նաև այն ամբողջականությունը, որը ընկած է «մարդկություն» և «մարդկային պատմություն» հասկացությունների հիմքում:

7. *Ավանդույթների փոխգործակցությամբ*: Ավանդույթները որոշակի ձևով կարող են միմյանց փոխադարձաբար լրացնել, հակասել կամ արտամղել, համադրվել, ձևափոխվել կամ հարմարվել: Միգրացիայի պայմաններում կարող է տեղի ունենալ տարբեր էթնիկական, ազգային և կրոնական խմբերի ավանդույթների «փոխանակություն»:

Լինելով սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, ավանդույթները, դիտարկվում են որպես կենսափոքձի փոխանցման եղանակներ և, առավելապես, իրացվում են սովորույթների, ծեսերի և արարողակարգերի միջոցով: Սովորույթ, ծես, արարողակարգ հասկացությունները հաճախ օգտագործվում են նաև առօրյա կյանքում, սակայն դրանց բովանդակային ծանրաբեռնվածությունը հստակորեն չի տարբերակվում անգամ մասնագիտական գրականության մեջ, իսկ երբեմն էլ դրանք խառնվում են:

Սովորույթը կարելի է բնութագրել որպես բազմաթիվ փոխկապակցված և մշտապես շփվող անհատների համատեղ կամ համընկնող սովորույթների ամբողջություն: Պրոֆ. Ա. Հ. Սարգսյանի սահմանմամբ՝ «Սովորույթը կայուն, կարծրատիպային վարքագծի զանգվածային ձև է, որը ձևավորվում է պատմականորեն: Սովորույթը պահանջում է վարքագծի տառացի կատարում և մեկնաբանման կարիք չի գգում: Սովորույթը գիտակցության, ինքնագիտակցության հետ կապ չունի, այն ցուցադրական վարքագիծ է, պահպանվում և կատարվում է, որովհետև բոլորն են կատարում, այդպես է ընդունված, այդպես է փոխանցվել նախորդ սերունդներից»:⁴⁰ Սովորույթը ձևավորվում է շփման ընթացքում, քանի որ այդ դեպքում է հնարավոր մյուսներից փոխառել գործողության, գնահատականների, հարաբերությունների որևէ եղանակ: Այս առնչությամբ տեղին է նկատել, որ փոխգործակցությունը մի դեպքում կարելի է դիտարկել որպես շփում, մեկ այլ դեպքում՝ որպես մեկը մյուսից գործողության եղանակների, գնահատականների և հարաբերությունների փոխառման գործընթաց: Արդյունքում՝ անհատների ամբողջությունը դառնում է հանրություն, որտեղ անընդհատ տեղի են ունենում սոցիալապես նշանակալի տեղեկատվության փոխանակության գործընթացներ և, հետևաբար, գործառում են հասարակայնորեն նշանակալի կապերը:

Սովորույթի հիմքը գոյության համանման պայմաններում գտնվող անհատների որևէ պահանջմունքն է: Հենց այդ պատճառով են ձևավորվում խմբային, տեղային, տարածաշրջանային սովորույթները, որոնց մի չնչին մասն է, սակայն, լայնորեն տարածվում: Հետևաբար, սովորույթի բովանդակությունից ելնելով, կարելի է պատկերացում կազմել ինչպես այն պայմանների մասին, որտեղ իրացվում է տվյալ հանրությունը կազմող անհատների կենսագործունեությունը, այնպես էլ՝ տվյալ հասարակությունը կազմավորող անհատների հոգեկան բնորոշ հատկանիշների մասին:

⁴⁰ **Սարգսյան Ա. Հ.**, Մշակույթի տեսություն. Ուսումնական ձեռնարկ: Եր., «Տնտեսագետ», 2003, էջ 78:

Սովորույթը հասարակական պրագմատիկ երևույթ է, քանի որ միշտ լուծում է կենսական որևէ խնդիր, կամ, ավելի ճիշտ, հանդիսանում է անհատների որևէ հանրության մեջ ձևավորված և ամրագրված տիպական խնդիրների լուծման փորձարկված եղանակ: Այն, ինչ մարդն անում է առաջին անգամ, դեռևս սովորույթ չէ, այն այդպիսին կարող է դառնալ, եթե նրա գործողությունների արդյունքն օգտակար և նշանակալի լինի նաև այլոց համար: Ցանկացած սովորույթ որևէ պահանջմունքի արդյունավետ բավարարման փորձարկված եղանակ է: Ըստ այդմ, սովորույթների դասակարգումը կարելի է իրականացնել, ելնելով բազիսային պահանջմունքների բնույթից: Հայտնի է, որ դրանք չորսն են՝ 1) կյանքի ընթացքը և նյութափոխանակության գործընթացն իրականացնելու պահանջմունքը (սննդի պահանջմունք), 2) տեսակի շարունակականությունն ապահովող պահանջմունքը (սեռական պահանջմունք), 3) ինքնապահպանության (անվտանգության) պահանջմունքը, 4) տեղեկատվական (ճանաչողական) պահանջմունքը: Գոյություն ունեցող բոլոր սովորույթները կարելի է տեղաբաշխել այս և, սրանից մակաբերված՝ այլ պահանջմունքներից ելնելով, ընդ որում, կարող են և այնպիսի սովորույթներ լինել, որոնք միաժամանակ «սպասարկում» են մեկից ավելի պահանջմունքներ: Որպես կանոն, սովորույթները բաշխվում են ըստ կյանքի ոլորտների, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է բազիսային այս կամ այն պահանջմունքին: Ըստ այդմ, կարող են լինել կենցաղային, ընտանեկան, անձնային, քաղաքական և այլ սովորույթներ:

Հասարակական համակարգի բնույթը անմիջականորեն ազդում է կենսագործունեության միևնույն ոլորտին վերաբերող սովորույթների բնույթի վրա: Այն դեպքում, երբ հասարակական համակարգը թուլանում է և սովորույթներին հետևելը դառնում է ոչ պարտադիր, գործող սովորույթներից հրաժարվելը այլևս չի արժանանում հասարակական դատապարտման և արդյունքում, որպես կանոն, սովորույթը սրբորեն պահպանողների քանակը նվազում է: Նման դեպքերում, այսինքն՝ հասարակական համակարգի փոխակերպումների պարագայում, հին սովորույթներն ընկալվում են որպես ժամանակավրեպ իրո-

դրություններ, անախրոնիզմ, քանի որ դրանք արտացոլում են հասարակական նախկին հարաբերություններն ու արժեքները, իսկ այն սովորույթները, որոնք արտացոլում են բուն իսկ մարդու բնությունը՝ հազվադեպ ու նվազ են փոխվում:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ.

- սովորույթը որևէ տիպական կենսական խնդիր կամ իրավիճակ լուծող գործողություն կամ գործողությունների ամբողջություն է,
- սովորույթը հասարակական նշանակություն ունեցող և կոլեկտիվ փորձի ոլորտին վերաբերող գործողություն կամ գործողությունների ամբողջություն է, քանի որ սովորույթ կարող է դառնալ միայն այն, ինչը դառնում է շատերի վարքի ծրագիր,
- սովորույթը պատմական զարգացման այս կամ այն փուլում գտնվող կոնկրետ հանրության կենսական (տիպական, կրկնվող, նշանակալի) իրավիճակին բնորոշ գործողություն կամ գործողությունների ամբողջություն է,
- «սովորութային», սովորական գործողությունը նորարարական գործողությունից տարբերվում է իր անընդհատ կրկնվող բնույթով, իրեն արդարացրած նորարարական գործողությունը միայն այն ժամանակ կարող է դառնալ սովորույթ, երբ այն օգտակար և հասանելի է շատերի համար:

«Սովորույթի պահանջ» հասկացության ձևավորումը պայմանավորված է երկու հանգամանքներով. 1) սովորույթի հիմքում ընկած գործողությունների ամենօրյա, սովորական բնույթով, և 2) որոշակի իրավիճակում այդ գործողությունները պարտադիր իրականացնող անձանց բազմաքանակությամբ:

Պահանջկոտությունն անխուսափելիորեն ձևավորում է սովորույթի այն հատկանիշը, որը բնութագրվում է որպես ստիպողական պարտադրում: Ի վերջո այս կամ այն սովորույթը դառնում է «կյանքի նորմ» (տվյալ իրավիճակի և տվյալ հանրության համար), իսկ սովորույթն ինքը՝ այդ հանրության ինքնատիպության արտահայտման ձև:

Յուրաքանչյուր սովորույթ ենթարկվում է որոշակի էվոլյուցիայի և ունի «կյանքի իր ճանապարհը»՝ նախապես որոշակի գործողություններ հանդես են գալիս որպես նորաստեղծ սովորույթ, ինչը բյուրեղանալով և ամրագրվելով, աստիճանաբար տարածվում և վերածվում է համընդհանուր սովորույթի: Եթե սվյալ իրավիճակում սվյալ գործողությունները կատարում են նաև հաջորդ սերունդների ներկայացուցիչները, ապա համընդհանուր սովորույթը վերածվում է ավանդական սովորույթի: Նկատենք, սակայն, որ միայն կենսունակ սովորույթները կարող են դառնալ ավանդական սովորույթներ:

Դիտարկելով ավանդույթը որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու սովորույթ-ծես-արարողակարգ-ավանդույթ առնչություններին: Այս առումով կարելի է նշել, որ ծեսը մի դեպքում հանդես է գալիս որպես խորհրդանշական երևույթ, երբ այն իրականացվում է ինքնուրույնաբար, մեկ այլ դեպքում՝ «տեխնիկական», երբ հանդես է գալիս որպես արարողության բաղադրատարր: Ծեսը երկար ժամանակ չէր ընկալվում որպես փիլիսոփայական վերլուծության և հետզոտության հնարավոր օբյեկտ, քանի որ այն պատկերացումն էր գերիշխում, թե ծեսերի ուսումնասիրությունը վերաբերում է կրոնագիտության կամ ազգագրության ոլորտին: Ծեսի նկատմամբ մշակվել էր խիստ վերապահ, անգամ արհամարհական վերաբերմունք, քանի որ այն դիտարկվում էր որպես արխաիկ, իռացիոնալ երևույթ, որը ենթակա չէ գիտական օբյեկտիվ հետազոտության: Իրավիճակը փոխվեց, երբ հետազոտողները սկսեցին զբաղվել դիցաբանական գիտակցության և դիցաստեղծման հիմնախնդիրներով, որոնք դիտարկվեցին որպես ժամանակակից աշխարհի բնորոշ հայտանիշներ: Փաստորեն միայն այդ պահից սկսած ծեսը, որպես սոցիալական երևույթ, դարձավ հոգեվերլուծության, սոցիոլոգիայի, լեզվաբանության, սոցիալական փիլիսոփայության և հումանիտար այլ գիտությունների ուսումնասիրության առարկան:

Եթե ծեսը հստակորեն որոշարկված և անփոփոխ գործողությունների հաջորդականություն է, ապա սովորույթը հարմարեցվում է իրավիճակին, դրան հաղորդելով արտախրավիճակային բովանդա-

կություն և հավելյալ, առանձնահատուկ նշանակություն, ընդ որում՝ գործողությունների խիստ հաջորդականությունն այստեղ դրսևորվում է «միայն այսպես և ոչ մի դեպքում այլ կերպ» սկզբունքին համապատասխան: Արդյունքում՝ առօրեական իրավիճակը հանգեցվում է յուրահատուկ իմաստի և, առանձնաճանաչվ համանման իրավիճակներից, դառնում է հիշողության անանց նշանակություն ունեցող բովանդակություն, հիշարժան իրադարձություն:

Սովորույթը կենցաղային, իսկ ծեսը հասարակական կյանքին բնորոշ արարողակարգային երևույթ է: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ծեսերն ավելի քիչ են, քան սովորույթները: Բացի այդ, յուրաքանչյուր ոք սովորույթին կարող է հետևել նաև մենակ, անձնապես, մինչդեռ ծեսերը, որպես կանոն, իրացվում են համատեղ «կողեկտիվ» եղանակով, քանի որ ծեսը որոշակի հանրության արարողակարգային գործողությունների ամբողջություն է: Սովորույթը կենսական իրադարձությունների բովանդակությունն է, մինչդեռ ծեսը մարդու հոգեկանում դրանց կանոնակարգման հատուկ ձևն է: Ծեսը կենսական բազմաթիվ իրավիճակներից առանձնացնում է միայն մեկը և դրան հաղորդում սոցիալական առանձնահատուկ նշանակություն: Հետևաբար, ծեսերը վերաբերում են ոչ այնքան կյանքի բովանդակությանը, որքան հասարակության մեջ համակարգային արժեքների կանոնակարգմանը:

Ծեսերի հիմնական գործառույթներն են.

- կյանքի պայմանների և կենսագործնեության բովանդակության նկատմամբ ընդհանուր վերաբերմունք ունեցող անձանց ինքնահաստատում,
- հանրության անդամների միջև առավելագույն փոխըմբռնման հասնելու եղանակ,
- մարդկանց հիշողության մեջ այս կամ այն իրադարձության կամ երևույթի նշանակալիության ամրագրում:

Հասարակության մեջ ծեսերի հազարամյա գոյությունը վկայում է դրանց օգտակարության մասին: Բայց պետք է նկատի ունենալ, որ կենսագործունեության և հարաբերությունների խիստ որոշակի կանոնակարգմամբ՝ ծեսերը նաև սահմանափակում են այլ իրավիճակ-

ներում այլընտրանքային գործողությունների ընտրության հնարավորությունը: Սա զգալի չափով վերաբերում է նաև սովորույթներին:

Ժամանակակից իմաստով ծեսը կարող է ներառել մի քանի ծիսակարգ: Օրինակ՝ ամուսնության ծեսը ներառում է այնպիսի ծիսակարգեր, ինչպիսիք են ծիսական երգերը, շնորհավորանքները, նվերների մատուցումը, մատանիների փոխանակումը և այլն: Ծիսակարգը, բացի խորհրդանշականից, ունի նաև գեղագիտական կողմ: Մրանում է ծիսակարգի ազդեցության ուժը մարդկանց վրա: Օրինակ՝ մեր նախնիների կենսակերպի մեջ ծիսակարգերը կրկնում էին այն բոլոր պահերը, որոնք անհրաժեշտ էին մարդկանց կյանքում. որսը, հողի մշակումը, ամուսնական հարաբերությունները կամ կենցաղային գործողությունները և այլն: Փաստորեն ծիսակարգը կոլեկտիվ փորձի և առօրյա գիտելիքների փոխանցման միջոց է:

Մարդկային վերահսկողությունից դուրս ամեն մի երևույթ ժամանակի ընթացքում դառնում է պաշտամունքի առարկա, որի հետ հարողակցվում են ծեսի, առասպելի, սոցության, խորհրդանշական լեզվի այլ միջոցներով: Ծիսական կարգերը գոյություն են ունեցել քաղաքական և կրոնական իշխանությունների ծագումից ավելի վաղ և սա հասկանալի է, որովհետև նախքան իշխանության ծագումը պետք է ամրապնդվեր մի որոշ ուժի հպատակվելու կարգը: Եվ, ինչպես Ե. Լալայանն է նկատում. «նախ և առաջ պահանջվել է հպատակություն, իսկ այդ արտահայտող գործողության ձևերը կազմել են վարքի առաջին եղանակավորումը, որը պահանջվել է ամենայն խստությամբ: Պահանջը տիրոջ հրամանը կատարելու, նրան հպատակություն ցույց տալու մեջ է կայացել և ոչ թե այս զանցառությունից ծագած չարիքի: Վնասուած անձը, ծագած չարիքը չէ, որ ուշադրություն է առնուել, այլ պիտի հրամանը անցանելը, նրա հպատակության ընդդիմադրելը. էականը ծեսն է եղել, կարգը, այլ ոչ թե նրա էությունը»⁴¹:

⁴¹ Տե՛ս **Լալայան Ե.**, Ծիսական կարգերը հայոց մեջ Ըստ Սպենսերի, Թիֆլիս, 1913, էջ 48:

Ծեսերն իրենցից ներկայացնում են խորհրդանիշների մի լեզու, որի խորքում քաքնված իրական իմաստը, անհասկանալի լինելու պատճառով, ժամանակակից մարդուց արդեն հեռացել է: Ծիսական գործողությունները ժամանակակից մարդու համար դարձել են անգիտակցական գործողություններ, սակայն, այդ ամենն ունի առասպելական ժամանակներում քաքնված իր իմաստը:

Իբրև հարգանքի և հպատակության խորհրդանիշներ, ծեսերը առաջ են եկել բնականաբար՝ հետզհետե ձևափոխելով այն անհատական գործողությունները, որոնք կատարվում էին անհատական նպատակին հասնելու համար: Նրանք առաջ են եկել անհատական վարմունքից առաջ, մինչև հասարակական կարգերի ձևավորումը: Ծիսական կարգերը նախնադարյան ժողովուրդների մեջ շատ ավելի մեծ ուժ ունեն, քան այլ իշխանություններ: Երբ հայ գյուղացին ուզում է արտահայտել «անկարելիի» գաղափարը, նա ասում է՝ «աղաք չէ»: Կամ որևէ մեկին պատահելիս պարտք է համարում բարևել նրան, մեծավոր անցնելիս՝ ոտքի է կանգնում, հյուրասիրության ժամանակ, օղի խմելիս՝ բարեմաղթություններ անում՝ դիմելով բոլոր աչքի ընկնող անձնավորություններին առանձին-առանձին:⁴² Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, որտեղ ամեն գործողություն մի խորհրդանիշ ունի. այսպես, օրինակ, ավստրալացիները փոխանակում են իրենց անունները եվրոպացիների հետ՝ ի նշան իրենց եղբայրության: Այս սովորույթը, որ չափազանց տարածված է, ծագում է այն հավատալիքից, որ անունը անհատի մի մասն է: Կրել մի մարդու անվանումը, միևնույնն է թե տիրել նրա էությանը: Հետևաբար, փոխանակել անունները, նշանակում է փոխադարձ վստահություն: Հայերի մեջ միմյանց անուններ փոխանակելու սովորույթ չի նկատվում, բայց խիստ տարածված է սիրված անձի անունը գավակին տալը, ի նշան հարգանքի և սիրո: Առկա է նաև երեխաներին հերոսների անուններով անվանակոչելը (Վարդան, Անդրանիկ), հուսալով, որ վերջիններս կժառանգեն նրանց բարեմասնությունները: Այն ժողովուրդները, որոնց մեջ քաղաքական և կրոնական իշխանությունները դեռևս հիմնավորված չեն

⁴² Տե՛ս **Լալայան Ե.**, նշվ. աշխ., էջ 49:

եղել, որոնց մեջ տիրապետել է միայն անձնական գերազանցության ուժը, ունեցել են բազմաթիվ ծիսական կարգեր:⁴³

Ծեսերի էության և նշանակության հիմնարար դրույթները հետևյալ են.

1. Ծեսը գործողությունների խիստ կանոնակարգված հաջորդականություն է:

2. Ծեսը գործողություն է, որի իրացման հավանականությունը զգալիորեն աճում է տազնապի և անորոշության իրավիճակներում: Որքան լարված է իրադրությունը որևէ հանրույթի շուրջը, այնքան ավելի է ծիսականացվում նրա ներքին կյանքը:

3. Ծեսը պահանջմունքային յուրահատուկ շրջափուլ է, որի արդյունքը համընկնում է այն իրականացնողների գործողությունների բնույթին և, ըստ էության, հանգում դրան, թեպետ ծեսի իրական արդյունքը տազնապի վերացումն է ու վստահության բարձրացումը, ընդ որում թե՛ նրանց մոտ, ովքեր այն իրականացնում են, և թե՛ նրանց մոտ, ովքեր դիտում են:

4. Ծեսն իրականացվում է իրարահաջորդ փուլերի հստակ և անշտապ անցումներով, որպեսզի շրջապատողները կարողանան ընկալել և՛ յուրաքանչյուր փուլի նշանակալիությունը, և՛ ծեսն ամբողջությամբ:

5. Ծեսն առաջացնում է յուրահատուկ հոգեբանական ապրումներ, որոնք որպես կանոն, այն իրականացնողների և դրան հետևողների մոտ տարբեր են լինում:

6. Անհրաժեշտ է տարբերակել «ծիսական գործողությունների» և «ծիսականացված գործողություններ» հասկացությունները: Ծիսական գործողությունները պետք է դիտարկել առաջացրած հոգեբանական արդյունքի տեսանկյունից, ծիսականացված գործողություններին բնորոշ է հստակությունը, կանոնակարգվածությունը, հաջորդականությունը:

⁴³ Տե՛ս Календарные обычаи и обряды народов Восточной Азии. Новый год. М., «Наука», 1985, էջ 43, 150-151, 200:

7. Յուրաքանչյուր հանրույթ ծեսի միջոցով փորձում է գտնել իր գոյության առանցքը, հնարավորությունների ու ներունակությունների հենակետը, ծիսական գործողությունները պետք է լինեն հստակ և կանխատեսելի, ինչով իսկ ծեսը հակադրվում է շրջապատող աշխարհի անորոշությանը:

8. Ծեսը որևէ արարողության սուսկական բաղադրատարրը չէ, այն, որպես վարքի յուրահատուկ ձև, ունի զարգացման իր ներունակությունները: Հատուկ հանդիսավորությամբ և հարուստ, ճոխ ձևավորմամբ իրականացվող ծեսը արարողակարգ է:

9. Մարդկության զարգացման վաղ փուլերում ծեսը եղել է հասարակական հարաբերությունների կայունության գործոն և ցուցանիշ: Հանրությունների կյանքի ծիսականացված բնույթի պայմաններում անհատի պատասխանատվությունը պայմանավորված է եղել ոչ թե իրականացվող գործողությունների բովանդակությամբ, այլ ընդունված ու ամրագրված ծիսակարգին հետևելու կամ չհետևելու հանգամանքով:

Մերունդների կենսավորձի փոխանցման եղանակ է նաև արարողակարգը: Արարողակարգը ծեսերի ամբողջությունն է, որտեղ յուրաքանչյուր գործողություն ունի իր սիմվոլիկ նշանակությունը: Այս տեսանկյունից այն բարդ ծիսակարգ է: Սովորական ծեսը գործողությունների ամբողջություն է, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, սիմվոլիկ նշանակություն չունի, այդ նշանակությունը ձեռք է բերվում միայն բոլոր բաղադրիչների փոխգործակցության արդյունքում: Պարզ ծեսն ունի ընդամենը մեկ սիմվոլիկ նշանակություն, մինչդեռ արարողակարգն ունի բազմաթիվ մասնավոր նշանակություններ:

Արարողակարգն ամրագրում է որևէ անձի կյանքի առավել կարևոր փոփոխությունները, նախկին վիճակից նորին անցումը և այդ նոր իրավիճակում լեզալ գոյությունը: Պատմության մեջ առաջին արարողակարգերը ձևավորվել են ծեսերի և ծիսականացված սովորույթների հիմքի վրա, այդ ընթացքում և դրանց շնորհիվ մարդկային հանրույթները դարձել են ավելի կայուն, միջանձնային կապերն ու հարաբերությունները՝ կանխատեսելի: Այսպիսով, արարողակարգե-

րը նպաստել են հասարակական հարաբերությունների կանոնակարգմանը:

Ինչ վերաբերում է ավանդույթին, որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակի, ապա նրա հետազիծը ունի հետևյալ կառուցվածքը՝ ձևավորում, գործառում, դերի նվազում և անհետացում: Ընդ որում, ավանդույթի գործառության ընթացքում տեղի են ունենում մի շարք գործընթացներ, որոնց արդյունքում ծագում են (1) մի շարք նորարարական գործողություններ, (2) աստիճանաբար բացահայտվում են դրանց օգտակարությունը, (3) դրանք դառնում են սովորական, (4) տարածվում են սոցիալական միջավայրում և դառնում վերարտադրվող, (5) վերածվում են անհատական սովորույթի, (6) հանրությունը գիտակցում և ընդունում է այդ սովորույթները, (7) պայմանների փոփոխության հետևանքով նվազում է այդ սովորույթների դերը և նրան հետևողների քանակը, (8) սովորույթը կորցնում է իր գործառական նշանակությունը և շրջանառությունից դուրս գալիս:

Սովորույթներն ու ավանդույթները մի կողմից տվյալ հասարակական հարաբերությունների կարգավորման, իսկ մյուս կողմից՝ նոր սերունդների վերարտադրման միջոց են: Նկատելի է, որ սովորույթներն ու ավանդույթներն այդ գործառույթները կատարում են տարբեր ճանապարհներով: Եթե սովորույթները ոչ միջնորդավորված ձևով տալիս են կոնկրետ իրադրության մեջ գործողության տարրերի նկարագրությունն ու նոր սերունդների վերարտադրման գործընթացը, ապա ավանդույթները դա կատարում են անմիջապես՝ դիմելով մարդու հոգևոր աշխարհին և հոգևոր որակների ձևավորմանը: Եթե սովորույթի բովանդակության մեջ մշտապես գործում է վարքի կարգավորման օրենքը, ապա ավանդույթի մեջ որպես գաղափարական բովանդակություն հանդես է գալիս վարքի չափն ու սկզբունքը: Սովորույթներում ակնհայտորեն երևում է կատարվող գործունեությունը կամ որևէ գործունեության արգելքը, մինչդեռ ավանդույթները տվյալ իրադրության մեջ կատարվող գործունեության հետ անմիջական կապ չունեն, որովհետև հոգևոր որակները, որոնք հաստատված են ավանդույթներով, անհրաժեշտ են ցանկացած կոնկրետ գործունեության համար: Դրանք ինքնանպաստակ չեն և բխում են մարդու հո-

գևոր աշխարհից: Ավանդույթները հանդես են գալիս հասարակական հարաբերություններում, որտեղ սոցիալական միջոցները հանդես են գալիս որպես կայունացման և վերարտադրման միջոց: Ավանդույթներն առաջանում և գործում են որպես մարդկանց միջև յուրահատուկ հոգևոր-պրակտիկ կապ: Ավանդույթների ձևավորման գործում օբյեկտիվության պահանջը առաջնային դեր է կատարում: Երբ մարդը գիտակցում է այդ պահանջը և հենվելով ավանդույթներում առկա օբյեկտիվ իմաստների վրա՝ իրագործում օբյեկտիվության պահանջը, ապա նրա գիտակցությունը դառնում է հաստատուն, իսկ կենցաղը՝ հուսալի: Այս առնչությամբ Յունգը նշում է, որ, օրինակ, «պուերթո ցեղի հնդկացիները հավատում են, որ իրենք Հայր Արևի երեխաներն են, և այդ հավատը նրանց համար դառնում է կյանքի հենարան, քանի որ իր մեջ կրում է վերջնական, սահմանային իմաստ»: ⁴⁴ Յունգի այս պնդումները սահմանային խոր իմաստ ունեն, արտահայտված նրանում, որ հնդկացիների հոգևոր պահանջումները նրանց թույլ են տալիս սեփական կեցությունը գիտակցել որպես օբյեկտիվ-բավարարված և իրագործել իրենց իդեալները կյանքում, ինչպես նաև արտահայտել աշխարհի (տիեզերքի) ամբողջականության իրենց ընկալումը:

Որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, սովորույթներն ու ավանդույթները ստեղծվում են մարդկանց հոգևոր-բարոյական պրակտիկայի հիման վրա, ընտանիքում, կոլեկտիվում գիտակցական դաստիարակության միջոցով: Նման պայմաններում արարքների բազմազան ձևերի միջից ընտրվում են մարդկանց գործունեության կենսական նպատակներին և իդեալներին առավել համապատասխան տեսակները, որոնք, որպես բարոյական արժեքներ, հաստատվում են հասարակական կարծիքի, զանգվածային գիտակցության մեջ: Միայն դրանից հետո սկսում է աշխատել նրանց սոցիալական մեխանիզմը, քանի որ նրանք օգտվում են ինչպես ավագ, այնպես էլ երիտասարդ սերնդի աջակցությունից և մարդկային կեն-

⁴⁴ Юнг К. Г., Архетипы и символ., М., «Ренесанс», 1991, с. 80.

սակերպի կարգավորման գործում իրականացնում են հոգևոր արժեքների գործառույթ:

Ավանդույթները զարգացման գործընթացում դիտարկվում են պատմական փոփոխությունների համատեքստում, ընդ որում, փոփոխությունների մոդելավորումն իրականացվում է ավանդույթի սոցիալական կարգավորող գործառույթի միջոցով: Թեև սովորույթների ու ավանդույթների գործառույթները մեր նախնիների կյանքում միանման չէին, բայց մարդիկ դրանց հետ հաշվի էին նստում: Նրանցում արտահայտված սոցիալական նորմերը, անցնելով առօրյա աշխարհընկալման միջով և ամրապնդվելով, հանդես էին գալիս որպես մարդու և մարդկանց կոլեկտիվ վարքի կարգավորման հզոր միջոցներ: Մեր հեռավոր նախնիների կյանքում, փաստորեն, չեն եղել գործունեության այնպիսի տեսակներ, որոնք չկարգավորվեին իրենց նշանակությամբ և կարևորությամբ տարբեր սոցիալական նորմերով: Դեռևս նախնադարում մարդկանց մոտ առաջացել է սննդի և գոյության այլ միջոցների բաշխման անհրաժեշտություն՝ պայմանավորված կոլեկտիվ աշխատանքի և համակեցության գործոններով: Այդ գործոնները նախնադարյան հասարակության սոցիալական նորմերի ձևավորման առավել վաղ նախադրյալներ են: Այդպիսի նախադրյալներ կարող էին ստեղծվել սննդի բաշխման, կենդանիներից կամ բնական աղետներից պաշտպանվելու ժամանակ և այլն: Բայց ամորֆ, դեռևս չտարրորշված համակեցության պայմաններում, ինչպիսիք էին նախնադարյան մարդկային խմբերի համակեցությունը, վարքի այդ տարբերակները չէին կարող երկար ժամանակ գոյություն ունենալ: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս խնդրին առնչվող հետազոտությունները, մադկության ձևավորման վաղ փուլերում ծագել է վարքի կոլեկտիվ ձևերը կարգավորելու և ամրապնդելու պահանջմունք, ինչն էլ ավելի է կարևորվել նախնադարյան հասարակության զարգացման հաջորդ փուլերում, երբ մարդկային համակեցությունը դարձել է առավել կայուն և միասնական: Ընդ որում, վարքի կոլեկտիվ ձևերի կարգավորման անհրաժեշտությունը ավելի է կարևորվում այն պատճառով, որ զարգանում են աշխատանքի կոլեկտիվ ձևեր և ամրանում են մարդկանց միջև սոցիալական կապերը, ինչը իր հեր-

թին նպաստում է նույնականության և համակեցության ձևավորմանը:⁴⁵

Հանդես գալով որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, ավանդույթները դիտարկվում են որպես յուրահատուկ «կամուրջ», որի միջոցով միացվում են վարքի բոլոր դրսևորումները ընտանիքում, կոլեկտիվում և հասարակության մեջ: Վարքի խիստ կանոնակարգումը կատարում է սոցիալական ժառանգորդման կողմի դեր:

Որպես կարգավորիչ նորմեր՝ ավանդույթները հենվում են հեղինակության վրա, նրանց պաշտպանում է հասարակական կարծիքի ուժը: Եթե հասարակական կարծիքը չի պաշտպանում կամ պարսավում է ավանդույթների գործառական նշանակությունը, ապա նման ավանդույթները վաղ թե ուշ վերանում են կամ վերածվում համակեցության հասարակ նորմերի: Ավանդույթների, որպես հասարակական կյանքի կարգավորիչների, դերի ու գործառույթների վերլուծությունը պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել հասարակական կարծիքի հետ դրանց սերտ կապի վրա: Վերջինս (հասարակական կարծիքը) ի սկզբանե սովորույթներին ու ավանդույթներին սոցիալական ուժ է հաղորդում, մեծապես որոշակիացնում է դրանց կողմից իրականացվող գործառույթների կարգավիճակը: Ընդ որում, հասարակական կարծիքի առաքելությունը երկակի բնույթ ունի. Այն կարող է ինչպես քայքայիչ, այնպես էլ կառուցողական դեր կատարել: Այնուամենայնիվ, չի կարելի անտեսել հասարակական կարծիքի բացասական գործառույթը: Այն կարծես թե վավերացնում է այս կամ այն ավանդական ձևի անկումը, ընդգծում է փոփոխվող իրավիճակների հետ նրա անհամատեղելիությունն ու անհամապատասխանությունը: Առանց հասարակական կարծիքի կողմից այդպիսի վճռի, իր դարձ ապրած ավանդույթը դեռ երկար ժամանակ կառչում է սեփական գոյությունից: Եվ այնուամենայնիվ, առավել ծանրակշիռ է հասարակական կարծիքի կառուցողական առաքելությունը: Հասարա-

⁴⁵ Стів Алексеев В. П., Дебец Г. Ф., Краниометрия. Методика антропологических исследования. М., «Медия», 2012, էջ 46:

կական կարծիքը ավանդույթին ուղեկցում է կեցության բոլոր փուլերում՝ կարևոր դեր խաղալով հատկապես նրա կարգավորման փուլում: Բանն այն է, որ նոր ձևավորվող ծեսերը, որպես կանոն, բախվում են արմատացած ավանդույթների հետ, և դրանց հարաբերակցությունը հակամարտության բնույթ է կրում, որում, հատկապես սկզբնական փուլում, գերադասությունը տրվում է գործող ավանդական դիրքորոշմանը: Իրերի նման դասավորության դեպքում հաստատվող ավանդույթը կարիք ունի այն ուժերի սատարմանը, որոնք հետաքրքրված են ինչպես համահարաբերակցվող հին մոդելներով, այնպես էլ արդիական սոցիալական կարգավորիչների առաջացումով: Այստեղ իր ողջ ուժով ազդում է հասարակական կարծիքը: Սոցիալական կարգավորման ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակի վրա հասարակական կարծիքիների ներգործության հետևանքով արտադրության և կենցաղի, կոլեկտիվ և անհատական վարքի ոլորտում տեղի են ունենում կարգավորիչների փոփոխություններ:

Ինչպես արդեն նշվեց, ավանդույթների և հասարակական կարծիքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ամբողջ հարցն այն է, որ մարդկանց վարքի և հարաբերությունների այն ձևերը, որոնք պաշտպանում է հասարակական կարծիքը, դառնում են ավանդույթներ: Հասարակական կյանքում ավանդույթները մեծ ինքնուրույնություն և ազդեցություն ունեն, քանի որ նրանց ետևում կանգնած է նախկին սերունդների հեղինակությունը: Հասարակական կարծիքը և ավանդույթները արտահայտում են մարդկանց համոզմունքները, կամքը և զգացմունքները: Հասարակական կարծիքի և ավանդույթների դիալեկտիկայում մարդկանց ընդհանուր տրամադրվածությունը անխուսափելիորեն փոխանցվում է մյուս մարդկանց՝ ստեղծելով նրանց գիտակցության յուրահատուկ հոգեբանական վիճակ: Այս դիալեկտիկայի համակարգում առավել կայուն և գործունակ են այն սոցիալական կարգավորիչները, որոնք գրավում են ոչ միայն զգացմունքների, այլև բանականության ոլորտը, այսինքն՝ մարդկանց գիտակցության մեջ առաջացնում են դատողությունների, դիրքորոշումների տրամաբանական հիմնավորում և դրանց կենսագործունեության ընթացքում ձևավորվում են մարդկանց համապատասխան վերաբերմունք: Այլ

կերպ ասած՝ ավանդույթները օրինականացնում են այն գործողությունները, որոնք ծառայում են սոցիալական համակարգի ամրապնդմանը և հետագա կայուն զարգացմանը, պահպանում նախնիների մտքի և վարքի օրինակները, նոր սերնդին հաղորդակից դարձնում նախնիների հոգևոր և նյութական արժեքներին: Մարդիկ իրենց առօրյա կյանքում չեն կարող իրականացնել համատեղ գործունեություն և շփում, եթե չառաջնորդվեն հասարակական որոշակի դիրքորոշումներով, քանի որ մարդկանց վարքի սոցիալական կարգավորումը պայմանավորված է նրանց կենսագործունեության պահանջմունքներով: Ավանդույթները և հասարակական կարծիքը հանդես են գալիս որպես արտաքին կարգավորիչներ, որոնց մարդիկ, որպես սոցիումի անդամներ, ենթարկվում են: Ինչ վերաբերում է ներքին կարգավորիչներին (իդեալներ, նպատակներ, գիտակցված հասարակական պարտք, խիղճ և այլն), ապա դրանք մարդու գիտակցության ամենագլխավոր և հիմնական որակներն են: Ներքին և արտաքին կարգավորիչները մշտապես փոխկապակցված են և միմյանց հաղորդում են հոգևոր արժեքներ: «Ցանկացած հասարակություն ունի սովորույթների ու ավանդույթների այնպիսի համակարգի կարիք, որում կամրապնդվեն մարդկանց կենսակերպում ձևավորված և արդեն դրսևորվող հասարակական հարաբերությունները: Դրանց առաջացման համար անհրաժեշտ է որոշակի պատմական ժամանակահատված, որի ընթացքում մարդկանց գործունեության կրկնվող ձևերը ձեռք կրերեն ավանդական բնույթ»⁴⁶:

Որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, ավանդույթների գլխավոր գործառույթը մարդկանց կենսակերպի կարգավորումն է: Այս առնչությամբ ծագում է «կենսակերպ» հասկացության շուրջ եղած դիրքորոշումների և տեսակետների վերլուծության անհրաժեշտություն: Կենսակերպի պայմանները բնական պայմաններն են՝ ազգաբնակչության կազմը, կյանքի նյութական-արտադրական, սոցիոմշակութային առանձնահատկությունները և այլն: Ի դեպ,

⁴⁶ **Полонская И. Н.**, Традиция: от сакральных оснований к современности. Ростов-на-Дону, «РГУ», 2006, с. 248.

սուբյեկտի կենսագործունեության պայմանների կայունությունը բնութագրում է նրա կենսակերպի հաստատունությունը: Կենսակերպը մարդկանց գործունեության իրականացման և հասարակական հարաբերությունների համակարգի մեջ ներառելու միջոց է: Մեր նախնիները ավանդույթների և սովորույթների միջոցով ներառվում էին հասարակական հարաբերությունների համակարգի մեջ՝ սեփական վարքը ենթարկելով իրենց կենսակերպում գոյություն ունեցող կենսագործունեության որոշակի նորմերին ու չափանիշներին: Դրանք մարդկանց կենսակերպի վերարտադրման, նրանց բարոյական, գեղագիտական իդեալների և մարդկային գործունեության բոլոր ոլորտներում վարքի օրինակելի նմուշների յուրահատուկ ձև են: Որպես կենսակերպի բաղկացուցիչ մաս, ավանդույթները հանդիսանում են մարդկանց հոգևոր և ֆիզիկական կերպարը նոր սերունդներին փոխանցելու սոցիալական մեխանիզմներ ձևավորող համակարգ: Կենսակերպը հասարակության ինչ-որ յուրահատուկ մաս չէ, այլ նրա բոլոր կողմերի, բոլոր մասերի այնպիսի ամբողջություն, որով ձևավորվում և դաստիարակվում են մարդիկ: Մարդու հոգևոր աշխարհի վրա այս ներգործությունը կարող է լինել ինչպես գիտակցական, այնպես էլ տարերային, անկառավարելի:

Այսպիսով, ավանդույթները հզոր սոցիալական միջոցներ են, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունները և ամրագրում այն, ինչ տվյալ ժամանակահատվածում կա, կատարում են սոցիալական մեխանիզմի դեր, փոխանցում են նախորդ սերնդի հարաբերությունները նոր սերնդին: Ավանդույթները պահպանելով տարածված սովորույթների ձևը, որոնք իրենց հաստատունությունը գտնում են հասարակական կարծիքի մեջ, դառնում են անցյալի ձեռքբերումների պահապանը:

1.3 Ավանդույթները ազգային նույնականության վերարտադրման համատեքստում

Ազգային ինքնության և նույնականության վերարտադրման գործում ավանդույթների դերը պարզաբանելիս անհրաժեշտ է նախապես վերլուծել, ճշգրտել նույնականության, ինքնության և հատկապես ազգային ինքնության հայեցակարգերի բովանդակությունը: Նույնականություն հասկացությունը վերջին շրջանում ամենատարբեր գիտական և փիլիսոփայական համատեքստերում գրավել է իր կայուն տեղը, այն սերտորեն կապված է «անհատական» («անհատականություն», «անձնայնություն») հասկացության լինելիության հետ:

Այդ հասկացությունը քիչ թե շատ հստակ արտահայտություն է ձեռք բերում 1920-1930-ական թվականներին, իսկ սկսած 1970-ական թվականներից՝ մշակութամետ դիսկուրսներից մեծամասնության մեջ գրավում է կենտրոնական տեղերից մեկը: 1980-ական թվականներից՝ հստակորեն արտահայտվում է այդ հասկացության ունիվերսալացման և միջգիտաճյուղային սահմանափակումների հաղթահարման միտումը: Այս պահին սոցիոհումանիտար գիտելիքում խնդրո առարկայի հետազոտության երկու հիմնական ուղղություններ են ձևավորվել. հոգեբանական, որտեղ ուշադրությունը բևեռվում է անհատականի, էգո-ի և նույնականության փոխհարաբերության վրա, և սոցիոմշակութային, որտեղ հետազոտության ծիրում գտնվում են անձի և մշակութային ու սոցիալական շրջապատի փոխհարաբերության խնդիրները: Աստիճանաբար հետազոտությունների շրջանակի մեջ է ներառվում մարդու հասարակական պատկեր ձևավորող նորմերի և արժեքների սոցիոմշակութային որոշարկման խնդրակարգը:⁴⁷

Նեղ իմաստով նույնականության դիսկուրսի ծագումը կապում են հոգեվերլուծության հետ: «Նույնականություն» եզրույթը շրջանառության մեջ է դրել Ջ. Ֆրոյդը: Այդ խնդրակարգի ունիվերսալացման

⁴⁷ Տե՛ս **Труевцев Д. В., Юсупов П. Р.**, Проблемы психологии личности в эпоху постмодерна, Известия Алтайского университета, Социология, 2001, № 2(20), с.27-31.

գործում մեծ է եղել Է. Էրիկսոնի դերը, ով «Էգոնոյնականությունը» ընկալում էր որպես անձի ամբողջականություն, չբացառելով այն հանգամանքը, որ զարգացման ընթացքում անձի նույնականությունը ենթարկվում է նաև որոշակի փոփոխության: Է. Էրիկսոնի կարծիքով «նույնականության մասին խոսելիս չի կարելի առանձին մարդու նույնականության ճգնաժամը առանձնացնել տվյալ ժամանակի պատմական ճգնաժամերից, քանի որ դրանք փոխկապակցված են: «Ավանդական հոգեվերլուծությունը ի վիճակի չէ ամբողջությամբ ըմբռնել նույնականության խնդիրը, քանի որ այն չի մշակել միջավայրը նկարագրող եզրաբանություն»:⁴⁸

Ժամանակակից հետազոտություններում (թե՛ արտասահմանյան, թե՛ հայրենական) ազգային և մշակութային նույնականության խնդրակարգը առանձնահատուկ արդիականություն է ձեռք բերել:⁴⁹

Ամենաընդհանուր իմաստով նույնականությունն ըմբռնվում է որպես սոցիալական հաղորդակցությունների տարբեր «աշխարհներում» սոցիալական փոխգործակցության գործընթացում առանձին անհատների կամ սոցիալական խմբերի այս կամ այն դերի հետ նույնականացում, ասոցացում, զուգորդում: Այն, ըստ էության, արտա-

⁴⁸ Эриксон Э., Идентичность: юность и кризис, М., «Прогресс», 2006, с. 32.

⁴⁹ Տե՛ս **Кассирер Э.**, Опыт о человеке. Введение в философию человеческой культуры. // Проблема человека в западной философии. М., «Прогресс», 1988, **Лебон Г.**, Психология народов и масс. СПб, 1995, **Атаян Э. П.**, Потенци и тенденции национальной жизни (очерки проблематики) // Ինքնություն, Եր., 1995: **Լ. Արսահամյան**, Ազգային ինքնությունը որպես պրոցես, «Ինքնություն», Եր., 1995: **Ռսկանյան Ա. Վ.**, Ազգային ինքնության հիմնահարցը և ստաբիլականության կոչումը, «Ինքնություն», Եր., 1995, **Эриксон Э.**, Детство и общество. СПб., «АСТ», Университетская книга 1996, **Հարությունյան Էդ. Ա.**, Ազգային կենսափիլիսոփայության պատմափիլիսոփայական վերլուծություն // Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ, Եր., 2002: **Лурье С. В.**, Историческая этнология, Академический Проект: «Гаудеамус», 2004, **Хантингтон С.**, Кто мы?, М., «АСТ», 2004, **Հարությունյան Էդ. Ա.**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Մակմիլան-Արմենիա, Եր., 2004թ.: **Գևորգյան Հ. Ա.**, Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Եր., 2005: **Զարարյան Ս. Ա.**, Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի կառուցաստեղծման պատմությունից (Եղիշե), «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 135.1, Երևան, 2011, **Սողոմոնյան Գ. Ա.**, Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», 141.4, 2013:

հայտում է ոչ միայն և ոչ այնքան այն, թե ինչո՞վ է մարդն ապրում, ո՞րն է իր շահերի ու հետաքրքրությունների ոլորտը, որքան այն, թե հանուն ինչի՞ է նա ապրում, որո՞նք են նրա կյանքի ու մշակույթի գլխավոր արժեքներն ու իմաստները: Համապատասխանաբար, տեղին է խոսել անհատական, կոլեկտիվ, սոցիալական, մշակութային նույնականության մասին, թեպետ իրականության մեջ նույնականությունը հաճախ հանդես է գալիս որպես սոցիալական համալիր փոխգործակցությունների հիբրիդային ձև: Օրինակ, մշակութային նույնականությունը, անկախ նրանից, թե ինչպիսին են էթնիկության օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչները, ամենից առաջ էթնիկական խմբի հետ նույնացումն է, կամ նույնականացումն ազգի հետ, անկախ նրանից, այն ներկայացվում է ունիտար ձևով, թե դաշնության: Նույնականության ժամանակակից գործընթացները ռուս հետազոտող Գ. Վ. Մալինինը ներկայացնում է որպես «արժեքային հիմունքների և նույնականության ռազմավարությունների որոնում»:⁵⁰

Ամփոփելով ներկայացված սահմանումները՝ կարելի է ասել, որ «նույնականություն»-ը մարդկային քաղաքակրթության համապարփակ արժեք է: Իր պատմության ու մշակույթի գլխավոր արժեքների ու սրբությունների հետ անձի նույնականացման միջոցով մարդու մեջ ամբարվում և ամրագրվում են սոցիումի պատմական, տնտեսական, սոցիալական կապիտալները: Էթնոմշակութային իմաստով նույնականացումն իր պատմական և հասարակական ինքնության առնչությամբ մշտապես իրականացվող յուրահատուկ հանրաքվե է, որը կոլեկտիվ էությունների և սրբությունների նկատմամբ անձի ինքնորոշման գործընթաց և արդյունք է: Նույնականությունն ամփոփում է անցյալի մասին ընդհանուր հիշողությունը, տվյալ ընդհանրության և նրա մշակույթի պահպանման և ժառանգորդման առնչությամբ հոգատարությունն ու կոլեկտիվի էթնոպատմությունը:

Նույնականության «պատմագրությունը» սկսվում է XII-XVII դարերից, երբ սկսեցին ավելի հաճախ շրջանառության մեջ դնել

⁵⁰ **Малинин Г. В.**, Идентификационные процессы или самоопределение (социологический анализ), //Мир человека, 1999, № 1, с.41.

«ազգային ոգի», «ազգի հանճար», «ազգային բնավորություն» հասկացությունները: XX դարից սկսած՝ «ազգային նույնականություն» հասկացությունը, և դրան վերաբերող խնդրակարգը դառնում են հասարակագիտական մտքի ամենաքննարկվող թեմաներից մեկը: Ազգային նույնականության հիմնական օբյեկտը էթնիկությունն է: Էթնոսը մարդկանց կայուն ամբողջություն է, որը էթնոգենեզի ընթացքում ձևավորվում է բնական եղանակով և ավարտվում՝ ինքնանվանակոչությամբ: Ազգային նույնականությունը, լինելով ավելի ուշ շրջանի պատմական կազմավորում, ներկայացնում է էթնիկացման գործընթացի հետագա էվոլյուցիան: Նկատենք, որ ազգային նույնականությունը կատարում է սոցիալ-քաղաքական գործառույթ, որի հիմքը ընդհանուր նպատակին հասնելու շուրջ՝ էթնոսները միավորող սկզբունքն է:

Այսպիսով, էթնիկությունը և ազգային նույնականությունը հանդես են գալիս որպես գիտահետազոտական ծրագրի սահմանագծեր, որոնք սահմանում են ժողովրդի ինքնագիտակցությունը, խտացված ձևով ներկայացնում նրա պատմությունն ու մշակույթը, պատմական գործընթացի և հոգևոր զարգացման հոգեբանական ընկալումը, կոլեկտիվ գիտակցական ստեղծագործության բոլոր արդյունքները:

Ներկայիս հասարակագիտական մտքի շրջանակներում (փիլիսոփայություն, ազգաբանություն, քաղաքագիտություն, մշակութաբանություն, սոցիոլոգիա) էթնիկականի ըմբռնման առնչությամբ ձևավորել են երեք հիմնական տեսական ուղղություններ.⁵¹

1. Պրիմորդիալիստական («վերդարձ դեպի ակունքները» կամ «նախաքաղաքական (արտաքաղաքական) նացիոնալիզմ», երբ էթնոմշակութային հատկանիշներից ելնելով ընդգծվում է ցեղային նույնականությունը»:⁵² Այս դեպքում էթնոմշակութային նույնականությունը իրականացնում է հարմարվողական գործառույթ: Ստեղծված

⁵¹ **Кокумбаева Л. А.**, Национальная идентичность как междисциплинарное понятие современной гуманитаристики, www.umotnas.ru, 1-a Kokumbaeva-nacionalnaya-identichnoste.pdf

⁵² Տե՛ս **Бухасва А. А.**, К вопросу об истоках категории "идентичности" // Саясат Policy, 2010, № 5, էջ 63-67:

իրավիճակը դիտորդներն ընկալում են որպես «ազգային վերածնության գործընթաց», իսկ այդ գործընթացի մեջ ներգրավվածները՝ որպես «ակունքների հետ շփում», դարձ դեպի բնականը՝ երբեք չդավաճանող «յուրայինների» խմբին:

2. Ինստրումենտալ (գործիքային), տեսության համաձայն էք-նիկության ըմբռնումն արտահայտվում է զանգվածային տեղեկատվության միջոցներում, գիտակրթական համակարգում և իշխանության կառույցներում՝ որևէ էքնիկական ընդհանրության ինստիտուցիոնալ ներկայացմամբ և ճանաչմամբ:

3. Կոնստրուկտիվիստական (կառուցողական) տեսությունը էք-նիկությունն ըմբռնում է ոչ թե որպես մեկընդմիշտ տրված իրողություն, այլ որպես արարման արդյունք, որպես ստեղծագործական երևակայության նորարարական գործողություն: Ինքնագիտակցությունն ըմբռնվում է ոչ թե որպես «ամրագրված էություն», այլ որպես «ռազմավարական ինքնահաստատում»:⁵³ Այստեղ էքնիկական խումբը էթնոսի տարածաշրջանային մաս է, որն ունի խոսակցական լեզվի, մշակույթի ու կենցաղի իր յուրահատկությունները, ինչպես նաև միայն իրեն բնորոշ ինքնագիտակցության ձևը: Մեկ այլ դեպքում էքնիկական խումբ է կոչվում որոշակի էթնոսի ոչ մեծ որևէ խումբ, որը միգրացիայի արդյունքում տարածքային առումով որոշարկվել է, բայց պահպանել է էքնիկական նախկին ինքնագիտակցությունը, լեզուն, մշակույթի և կենցաղի առանձնահատկությունները:

Խոսելով նույնականության մասին, չենք կարող ուշադրություն չդարձնել «ինքնություն» հասկացությանը: Ինքնությունն օգտագործվում է աշխարհագրական, էքնիկական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ պայմանների երկարատև և կայուն ազդեցության ներքո ձևավորված և գործունեության տարբեր ոլորտներում դրսևորվող սոցիալական դերակատարների (ժողովուրդ, ազգ, սոցիալական խումբ) սոցիալական-հոգեբանական վիճակը և կյանքի կազմակերպ-

⁵³ Տե՛ս **Янг К.**, Диалектика культурного плюрализма: концепция и реальность // Этничность и власть в полиэтнических государствах: материалы международной конференции, М., 1994, էջ 95:

ման ընդհանուր սկզբունքները ներկայացնելու համար: Ինքնությունը սերտորեն կապված է կոլեկտիվ անգիտակցականի հետ, որը մարդկային գիտակցության և վարքի տարբեր ձևերից ավելի խորն է, և, որպես այդպիսին, այն չի կարող էական ազդեցություն չունենալ կյանքի կազմակերպման, մտածողության, զգացմունքների և գործողությունների վրա: «Ինքնություն հասկացությունն» արտահայտում է սոցիալական ռեալության ձևավորման վրա մարդկային արժեքների, ընկալման եղանակների և ըմբռնման բազիսային կառուցվածքների ակտիվ, ծրագրավորող ազդեցությունը:

Ինքնության խնդիրները մշտապես եղել են գիտական և քաղաքական բանավեճերի կիզակետում⁵⁴: Ըստ Ա. Ոսկանյանի «ինքնություն» բառը բազմիմաստ է և տարբեր փիլիսոփայական ենթատեքստերում կարող է տարբեր մեկնություններ ունենալ: Հիմնական ըմբռնումները երկուսն են. առաջինը կապված է ուրիշից տարբերվելու, հենց ինքը լինելու պարագայի հետ (այդ դեպքում օգտագործվում է եզրերի հետևյալ խումբը. Ego, Ich, Selbst, Solf, Selfness, Я, Самость և այլն), երկրորդում՝ ինքնության կենտրոնացում-խտացումը (կոնցենտրացիան) շեշտվում է վիճակների նույնությունն արձանագրելու միջոցով (մման դեպքերին համապատասխանում է «նույնություն»՝ Identity, идентичность եզրը):⁵⁵

Հետաքրքիր է ինքնության ընդհանրական ձևակերպումն ըստ Լ. Չէքիեանի՝ «ինքնություն» հասկացությունը, իր ամենատարերային բնութագրումով, կարելի է բնորոշել իբր հակաբևեռը այլության: «Այն տուեալը, որով որևէ էակի նկատմամբ են այլ՝ բոլոր միս էակները, և ինքը այլ՝ բոլոր միսների նկատմամբ»⁵⁶: Ինքնության և այլության

⁵⁴ Стів Проблеми идентичности: человек и общество на пороге тысячелетия./сб. науч. тр./, М., 2003, Трансформация идентификационных структур в современной России./под ред. В. А. Ядова/ М., 2003, **Giddens A.**, Modernity and Self-Identity. Self and Society in the Late Modern Age, Cambridge, 1991; Culture, Globalization and World System. Contemporary Conditions for the Representation of Identity, Minneapolis, 1998.

⁵⁵ Стів **Ոսկանյան Ա. Վ.**, Ազգային ինքնության հիմնահարցը մտավորականության կոչումը, «Ինքնություն», Եր., 1995, էջ 11:

⁵⁶ **Չէքիեան Պ. Լ.**, Հայ ինքնություն, Ինքնության հարցեր. Տարեգիրք, Եր., «Ջանգալ-97», 2002, էջ 33:

միանգամայն արդարացի հակաբևեռ տեղադրումով հաջորդ քայլը դառնում է պարտադրված. ինքնությունն ու այլությունը փոխադարձաբար պայմանավորվող երևույթներ են, չեն կարող գոյություն ունենալ առանձին-առանձին և այդ առումով անբաժանելի են: Ըստ Ս. Հանթինգթոնի՝ մենք իմանում ենք մեր ո՞վ լինելը, երբ պարզում ենք, թե մենք ո՞վ չենք»:⁵⁷

Որքան էլ մոտ լինեն «ինքնություն» և «նույնականություն» հասկացությունները, այնուամենայնիվ դրանց միջև կան էական տարբերություններ, քանի որ ինքնության և նույնականության ճգնաժամերը տարբեր են: Առօրյա կյանքում մարդիկ նույնականությունը ընկալում են որպես ավարտուն և կայուն վիճակ: Հոգեբանական մակարդակում մարդիկ նույնականության կարիք ունեն, քանի որ որոշակի ավանդույթների, մշակույթի, հավատի և դերային հարաբերությունների հիմքի վրա ձևավորված նույնականությունը կյանքի հուսալիության, կանխատեսելիության և անվտանգության «սոցիոմշակութային ապաստանի» գործառույթ է կատարում: Նույնականությունը հաճախ մեկնաբանվում է որպես տարբեր խմբերի կողմից սեփական շահերի պաշտպանության նպատակով համախմբվածության ու համերաշխության պահպանման ձգտում: Քանի որ մարդը բաց համակարգ է, ուստի նրա կողմնորոշումների ու վճիռների վրա կարող են ազդել սոցիալ-հոգեբանական այնպիսի ապրումներ, որոնք կարող են չհամապատասխանել նրա սոցիոմշակութային նույնականության բովանդակությանը: Հաճախ էական տարբերություններ կարող են նկատվել մարդկանց համոզմունքների և գործնական կողմնորոշումների միջև: Սա դրսևորվում է նույնականության ճգնաժամով, երբ հասարակական կյանքի ոլորտների արդիականացումը չի ընթանում սեփական ավանդական ինքնության հիմքերին համապատասխան: Մարդիկ այլևս չեն կարողանում հենվել նախորդ սերնդի կուտակած փորձի, նորմերի, սոցիոմշակութային արժեքների վրա, քանի որ փոփոխված նոր հանգամանքներում դրանք ոչ թե օգնում, այլ խոչընդոտում են նույնականության ձևավորմանը: Քանի որ կյանքի կազմակերպման

⁵⁷ Տե՛ս **Хантингтон С.**, *Кто мы? М.*, «АСТ», 2004, էջ 17:

ու կանոնակարգման նախորդ կարգի փլուզումը բերում է նույնականության կորստի, ուստի անմիջապես ծագում է մշակութային նոր մոդելի անհրաժեշտություն: Այս պարագայում մարդիկ կորցնում են նոր միջավայրում կողմնորոշվելու իրենց հմտությունները, ուստի ծագում է անվստահությունն ու հուսահատությունը: Կտրուկ փոփոխությունները խարխլում են մարդկանց ծրագրերը: Սոցիոմշակութային համակարգերի արմատական փոխակերպումների հետևանքով անցյալը վերածվում է իրադարձությունների անկանոնության, իսկ նույնականությունը ցույց է տալիս մարդու տեղն ու դերը իրականության մեջ, հնարավորություն է տալիս տարբերակելու յուրայինն ու օտարը: Նույնականությունը նաև ինքնության ձևավորման գործընթաց է, քանի որ այս կամ այն մշակույթին նույնականացվելով, անձը ձեռք է բերում ինքնության համապատասխան որակներ: «Ինքնադիտարկում իրականացնող «ես»-ը իրեն նույնական է զգում «ինքնության» հետ, սակայն ճգնաժամային իրավիճակներում տեղի է ունենում ամբողջականության և ներդաշնակության խախտում: «Նույնականության» ճգնաժամի դեպքում «ես»-ը չի ընդունում իր «ինքնությունն» ու չի ցանկանում զգալ իր նույնականությունն իր «ինքնությանը», իսկ «ինքնության» ճգնաժամի դեպքում «ես»ը գուցեև ձգտում ունի նույնականանալու, սակայն կառուցված չէ «ինքնությունը»»:⁵⁸

Դիտարկելով ավանդույթները ազգային նույնականացման վերարտադրման համատեքստում, նկատելի է դառնում, որ ժամանակակից զանգվածային տեղեկատվական միջոցները և տեղեկատվական համակարգերը խախտում են էթնոսի, կրոնի, ազգության սահմանները: Դրանք քանդում են սոցիալական ինստիտուտների հիմքերը, որոնք ձևավորել են տվյալ ինքնության գործընթացը, առավել ևս, որ արդի քաղաքակրթությունը այլևս խարսխված չէ միջանձնային հարաբերությունների վրա և յուրաքանչյուր մարդ փորձում է ապրել ինքնաբավ՝ հույսը դնելով իր վրա: Սինչդեռ ինքնության խնդրի ծագումն ու դրա հնարավոր լուծումները կապված են բարոյական կողմ-

⁵⁸ **Պետրոսյան Ս. Ս.**, Ինքնության հիմնահարցի փիլիսոփայական վերլուծության որոշ խնդիրներ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 136.4, Եր., 2012, էջ 5:

նորոշիչների ու իդեալների կայուն գործառնության հետ: Գիտակցված նույնականացման համար կարևոր է, որ անձն ունենա վարքանիշի կամ արժեքի իր պատկերացումը, որն իր հերթին չի հակասի համամարդկային վարքանիշներին: Ավանդական ինքնությունը հուսալի է դառնում այնքանով, որ այն իմաստավորված է և փորձված, որի շնորհիվ էլ դառնում է նախընտրելի: Այստեղ կա ավանդական ապրելակերպի փորձ, որի դրական ազդեցությունը կենսագործունեության տարբեր ոլորտներում ձևավորել է տարբեր արժեքներ, որն այլևս համարժեք չէ նոր իրականությանը: Ավանդական մտածողությունը հեռու է վարքի այլընտրանքային մոդելներ ստեղծելու կարողությունից, հետևաբար այլընտրանքային ապրելակերպի բացակայությունն իր հերթին ստիպում է կառչած մնալ էթնիկական ինքնության համակարգից: Այս տեսակետից, օրինակ, համաշխարհայնացումը մի կողմից սեփական պատմության և ինքնության վերագնահատման ու վերակառուցման լայն հնարավորություններ է ստեղծում, մյուս կողմից՝ լուրջ վտանգներ ու գայթակղություններ՝ հանուն մասնավոր խնդիրների լուծման հասարակականն անտեսելու հնարավորությամբ: Պետք է նկատել, սակայն, որ ցանկացած հասարակություն ժամանակի ընթացքում հանդիպում է էկզիստենցիալ այնպիսի հիմնախնդիրների, որոնք սպառնում են նրա գոյությանը: Նման դեպքերում ազգային ինքնությունը դառնում է այդ վտանգներն ու խոչընդոտները հաղթահարելու առավել հուսալի միջոց:

Եթե հոգեբանները ինքնությունը դիտարկում են որպես ներքին գործընթաց (կարևոր է ուսումնասիրել հիշողությունը, մարդու ֆիզիկական վիճակը, մոտիվացիան), իսկ սոցիոլոգները հակված են այն գնահատել հասարակության և նրա ինստիտուտների տեսանկյունից (մասնագիտություն, սոցիալ-տնտեսական կարգավիճակ, սեռ, ռասաս, կրթության մակարդակ և այլն), ապա փիլիսոփայության տեսանկյունից կարևորը ինքնության կերպարի նորմատիվային հարցն է. Ինչպիսի՞ գաղափարների հետևել կյանքում, արդյո՞ք բավարար են այն արժեքները, որոնցով մենք կողմնորոշվում ենք, ինչպե՞ս է մարդը պատմական փոխակերպման գործընթացներում գտնում գոյության համար անհրաժեշտ հիմքերը և այլն: Ամենաընդհանուր մոտեցմամբ,

քանի որ ինքնությունը մտածվում է որպես վիճակների նույնություն⁵⁹, ազգային ինքնությունը հանդիսանում է «կոլեկտիվ ինքնության» ձևերից մեկը, ընդ որում, կոլեկտիվ ինքնության այնպիսի ձև, որի որակական պայմանավորողը ազգի հոգեկերտվածքն է: Թեև ազգային ինքնությունը այնպիսի օբյեկտիվ պայմանավորվածություն չունի, ինչպես անձի, անհատի ինքնությունը, սակայն, որպես սուբստանցիոնալ գիտակցական վիճակ, հանդես է գալիս ազգի յուրաքանչյուր ներկայացուցչի մոտ, ինչից հրաժարվելը, ինչը շրջանցելն անհատի համար նույնքան անհնարին է, որքան իր սեփական ես-ից հրաժարվելը: Ազգային ինքնությունն ուղղակի սերտաճած է անհատական գիտակցությանը, ու թեև իր բնական վիճակում այն կարող է անընդհատ փոխակերպվել, բայց որակապես ուրիշը դառնալ չի կարող: «Ազգային ինքնության զգացումը, իհարկե, կարող է աճել և թուլանալ արտաքին ճնշումների ազդեցությամբ, բայց այդ ինքնության էությունը ամենափոքր աստիճանով է ենթակա տատանումների. այն ձևավորվում է առավել դանդաղ՝ ներառելով բազմաթիվ սոցիալական, տնտեսական, քաղաքական գործոններ»:⁶⁰

Արդիականության մեջ «ազգային նույնականության» հասկացությունը կայուն տեղ է գրավում հատկապես սոցիոհումանիտար գիտելիքի համակարգում: Ազգային նույնականության դեպքում անձը գիտակցում է իր պատկանելիությունը որոշակի էթնիկ հանրությանը և նրան բնորոշ օբյեկտիվ հատկանիշներին (լեզվին, մշակույթին, ընդհանուր կենսաբանական ծագմանը և այլն):⁶¹

Ազգային նույնականությունը որևէ ազգային հանրության հետ անձի կողմից իրեն նույնացնելը և մյուսներից առանձնացնելն է: Այն իրականանում է սոցիալական, մշակութային, հոգեբանական գործոնների ազդեցությամբ: Ինչպես նշում է Ժ. Տ. Տոշենկոն «...փոփոխված նոր պայմաններում մարդիկ միշտ չէ, որ հասկանում են, թե

⁵⁹ Տե՛ս **Ոսկանյան Ա. Վ.**, Ազգային ինքնության հիմնահարցը և մտավորականության կոչումը, «Ինքնություն», Եր., 1995, էջ 12:

⁶⁰ **Хантингтон С.**, Кто мы? М., «АСТ», 2004, с. 17.

⁶¹ **Смит Э.**, Национализм и модернизм. Критический обзор современных теорий наций и национализма. М., «Праксис», 2004, с.293.

ինչու է շրջապատը մերժում նրանց հավակնությունները, կամ, առնվազն կասկածի տակ առնում: Եվ որքան ուժգին է նոր միջավայրին նույնականանալու ձգտումը, այնքան ուժգին է դառնում այդ միջավայրի դիմադրությունը»:⁶² Այստեղ հատկապես կարևորվում է ազգային ավանդույթների դերը, որոնք ներառում են ոչ միայն «վարքի նորմերը, հմտություններն ու կարողությունները», այլև՝ մենթալ իմաստների խորհրդանշական շրջանակը, արքետիպերն ու հարաբերությունները, որոնք էթնոսի անդամները հիմնականում կապում են իրենց լեզվի և ոչ վերբալ հաղորդակցության եղանակների հետ: Ազգային մշակույթի ֆեռմենտները «ես»-ի արտաքին արտահայտությունն են, որոնք դրսևորվում են նշանների և սիմվոլների տեսքով: Այս գաղափարները ստեղծագործաբար զարգացրել է Կ. Գ. Յունգը, ավանդույթների ուսումնասիրությունը կապելով կոլեկտիվ անգիտակցականի արքետիպային կառուցվածքի հետ, դրանով իսկ բացատրելով անհատականացման մեխանիզմի և ազգային նույնականության ձևավորման խնդիրները:

Ազգային նույնականության և վերարտադրման համատեքստում, պատմական ազգաբանության շրջանակներում ազգային կամ էթնիկական ավանդույթը հանդես է գալիս որպես ելակետային հասկացություն, որի սահմանումները կապված են էթնոսի և էթնիկության տեսությունների հետ: Այս հարցի մեկնաբանության առնչությամբ ձևավորվել են երկու հիմնական դիրքորոշումներ: Էթնոսի բնական կենսաբանական ըմբռնումը ներկայացվում է Լ. Ն. Գումիլյովի հայեցակարգում, որտեղ էթնոսները դիտարկվում են որպես օբյեկտիվ իրողություններ, իսկ էթնիկությունը՝ որպես մարդկության նախասկզբնական (պրիմորդիալ) բնութագիր:⁶³

Առավել լայն տարածված է Յու. Վ. Բրոմլեյի տեսակետը, որի համաձայն էթնոսը, որպես սոցիալ-մշակութային երևույթ, «որոշակի տարածքի վրա պատմականորեն ձևավորված մարդկանց կայուն ամբողջություն է, որին բնորոշ են լեզվի, մշակույթի և հոգեկանի հա-

⁶² Тощенко Ж. Т., Парадоксальный человек. М., «ЮНИТИ-ДАНА», 2008, с.137.

⁶³ Стен Гумилев Л. Н., Этногенез и биосфера земли. М., «Айрис-Пресс», 2007, էջ 218:

րաբերականորեն կայուն ընդհանուր առանձնահատկությունները, իր միասնության գիտակցությունը, ինչպես նաև համանման այլ կազմավորումներից իր տարբերությունը (ինքնագիտակցությունը), այս ամենն ամրագրված է էթնոսի ինքնանվանման մեջ»:⁶⁴ Գիտնականի կարծիքով յուրաքանչյուր էթնոս, որպես կենսաբանական ընդհանրություն, կապված է մարդկային որոշակի պոպուլյացիայի հետ, սակայն ապրում է սոցիալական օրենքներով, էթնոսները բնութագրվում են էթնիկական որոշակի հատկություններով (լեզու, մշակույթ, էթնիկական գիտակցություն), բայց այս ամենը ձևավորվում են միայն համապատասխան տարածքային, բնութենական, սոցիալ-տնտեսական և պետա-իրավական պայմանների առկայության դեպքում:

Էթնիկական ավանդույթի սահմանման Լ. Ն. Գումիլյովի մոտեցումը կարելի է բնութագրել որպես էթնոսի օբյեկտիվիստական հայեցակարգի սոցիալ-կենսաբանական տարբերակ, համաձայն որի էթնիկական ավանդույթը կարծրատիպերի մշակույթի և վարքի կանոնների, քաղաքական և տնտեսական ձևերի, աշխարհայացքային դիրքորոշումների որոշակի աստիճանակարգություն է, որը բնորոշ է տվյալ էթնոսին և փոխանցվում է սերնդից սերմունդ: Ըստ Լ. Գումիլյովի՝ էթնիկական ավանդույթը յուրաքանչյուր ժողովրդի այն յուրահատկությունն է, որով որոշվում է այլ ժողովուրդների շարքում նրա գրաված տեղը, այսինքն «ոչ թե լեզուն, կրոնը կամ ընդհանուր տարածքն է էթնոսի ինքնանույնականացման յուրահատուկ, տարբերակող առանձնահատկությունը, այլ միայն և միայն էթնիկական ավանդույթը»:⁶⁵

Յու. Վ. Բրոմլեյի էթնոսի տեսությունը նպաստել է «էթնիկական ավանդույթ» հասկացության մեկնաբանման սոցիալ-մշակութային մոտեցման ձևավորմանը: Ավանդույթը, գիտնականի մեկնաբանմամբ, նյութական և հոգևոր մշակույթի երևույթ է, որը էթնոսի կյանքը պահպանելու համար գիտակցաբար փոխանցվում է սերնդից սերմունդ:

⁶⁴ **Бромлей Ю. В.**, Очерки теории этноса, М., «Наука», 2012, с.165.

⁶⁵ **Տե՛ս Գումիլև Լ. Ն.**, նշվ.աշխ., էջ 18:

«Էթնիկական ավանդույթ» հասկացության տեսական ձևակերպման համար կարևոր է ազգաբան Ս. Վ. Լուրյեի տեսակետը: Հետազոտողն ավանդույթն ընկալում է որպես «ամուր հանգուցված մշակութային հարացույցների համալիր, որը կայուն ամբողջություն է, սակայն, արտաքին պայմաններից կախված՝ կարող է ընդունել արտահայտման տարբեր ձևեր»:⁶⁶

Բացահայտելով էթնիկական ավանդույթի էությունը՝ Ս. Լուրյեն ընդգծում է նրա դինամիկ փոխգործակցությունը էթնիկական նույնականությունը կազմող երեք՝ «ուրիշների համար պատկեր», «ինձ համար պատկեր» և «իր մեջ պատկեր» բաղադրիչների հետ: Ազգաբանի կարծիքով «Ինձ համար պատկերը» որևէ անձի համար ցանկալի բնութագրերի ամբողջություն է, որն ունի իր առասպելաբանությունն ու սիմվոլիկան, որոնք էթնիկական համակարգի ներսում հաղորդակցական նշանակություն ունեն, իսկ կողմնակի դիտորդների համար նկատելի են միայն դրանց դրվագային դրսևորումները: «Ուրիշների համար պատկերը» Ս. Լուրյեն ներկայացնում է որպես այլ մշակույթների լեզվի թարգմանված՝ իրեն վերագրվող հատկանիշների ամբողջություն: Այս մակարդակում նույնպես առկա են իր մասին լեզենդներն ու առասպելները, որոնք քարոզվում են արտաքին աշխարհի հետ համարժեք հաղորդակցություն հաստատելու նպատակով: «Իր մեջ պատկերը», ինչպես պնդում է Ս. Լուրյեն, անգիտակցական է, բայց հենց այն է սահմանում էթնոսի անդամների գործողությունների համաձայնացվածությունը և ռիթմիկությունը:

Էթնիկական ավանդույթը տվյալ հայեցակարգում բացատրվում է անգիտակցական «իր մեջ պատկերով» և արտահայտվում է «իր համար» և «ուրիշների համար» պատկերների միջոցով, որոնք փոխըացնում են միմյանց և էթնոսի գոյության պայմանների փոփոխությունից հետո իրենք էլ են փոփոխվում:

Այս հայեցակարգը իր հետագա զարգացումը գտավ էթնիկական ընդհանրությունների, որպես սոցիալական կեցության կայուն ձևերի

⁶⁶ Лурье С. В., Историческая этнология, М., «Аспект Пресс», 2003, с.227.

ավանդական հետազոտություններում (Ա. Գ. Գուզին⁶⁷, Լ. Ա.Սուգրեյ և այլն): Լ. Գ. Սուգրեյը էթնիկության, ավանդույթների և ավանդապահության փոխհարաբերություններին նվիրված հետազոտության մեջ ավանդապահությունը մեկնաբանում է որպես աշխարհի ճանաչողության և վերափոխման այնպիսի հնարքների ամբողջություն, որն ավանդական արժեքների հիմքի վրա արթնացնելով պատմական ստեղծագործության նիւթից կամքը, համախմբում է էթնիկական ընդհանրությունը: Գիտնականի կարծիքով «ավանդույթների հետազոտության էական բացթողումներից մեկը էթնոստեղծ գործոնների դերի թերագնահատումն է, մինչդեռ դրանք հանդես են գալիս ոչ միայն որպես ավանդականի էթնիկական «երանգավորման» ձևեր, այլ ավանդույթի բուն իսկ էությունն են»:⁶⁸

Ազգային նույնականացման և վերարտադրման համատեքստում էթնիկական ավանդույթը դիտարկվում է որպես սերունդների միջև տեղեկատվական կապի ապահովման միջոց (Ս. Ա. Հարությունով, Ն. Ն. Չերեկսարով, Յու. Մ. Լոտման, Ա. Վ. Կոստինա, Վ. Ս. Ժիդկով, Կ. Բ. Սոկոլով, Տ. Մ. Ստեպանսկայա): Այս հանգամանքը գիտնականներին թույլ տվեց եզրակացնել, որ տեղեկատվությունը, որը էթնիկական ավանդույթի բովանդակային տեսանկյունն է, պայմանականորեն կարելի է բաժանել պահպանողական և էվոլյուցիոն ճանապարհով աստիճանաբար զարգացող մասերի: Էթնիկական ավանդույթը, իրականացնելով տեղեկատվական գործառույթ, կատարում է ամբարման, փոխակերպման և հաղորդման (փոխանցման) անընդհատ և փոխկապակցված գործընթացների հերթաշար:

Էթնիկական ավանդույթն անմիջականորեն կապվում է էթնոսի, նրա գոյության բնութենական, սոցիալաշխարհային և պատմական պայմանների հետ: Էթնիկական ավանդույթը էթնիկական մշակույթի այն կարևոր բաղադրիչն է, որն ապահովում է նրա կայունությունը, իրականացնում է էթնոամբողջական և էթնոտարբերակման կարևոր գործառույթները, դրանով իսկ հանդես գալով որպես էթնիկական

⁶⁷ Ст'ю Дугин А. Г., Этносоциология, М., МГУ, 2010.

⁶⁸ Сугрей Л. А., Традиции экономического сознания нации. Ставрополь, изд. Ставроп. Гос. Ун-та, 2001, с.182.

ընդհանրության և նույնականության պահպանման, մշակութային արժեքների, իմաստների և խորհրդանիշների փոխանցման սոցիո-մշակութային մեխանիզմ:

Ի դեպ, թեև յուրաքանչյուր ազգի էթնիկական պատկերը անկրկնելի է, բայց նրանում այդ անկրկնելի յուրահատկությունների առանձնացումը, շատ բարդ խնդիր է: Առաջին հայացքից երբեմն թվում է, թե այդ ինքնությունը յուրահատուկ է և անկրկնելի, բայց հետո պարզվում է, որ այդ անկրկնելի բնորոշ է նաև որոշ այլ էթնոսներին: Առանձնացումը, իհարկե, անհրաժեշտ է թեկուզ նրա համար, որ էթնոսները տարբերենք մեկը մյուսից: Այդ տեսակետից, օրինակ, տարածված է հրեաների հետ հայերի համեմատությունը՝ նկատի ունենալով, որ երկու ժողովուրդներն էլ հին են, ունեն Մփյուռք և ենթարկվել են ցեղասպանության: Սակայն, ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Ա. Գևորգյանը, «սրանք առաջին հայացքից նկատված նմանություններ են, բայց երկու ժողովուրդների կեցության պատմության մեջ կան էական տարբերություններ, որոնք յուրօրինակություն են տալիս նաև հիշյալ նմանություններին»:⁶⁹ Հայ ժողովուրդը, օրինակ, ունեցել է իր պատմական հայրենիքը, մինչդեռ Պաղեստինից տարագրվելուց հետո հրեաները չեն ունեցել իրենց հայրենիքը: Հայ ժողովուրդն ունեցել է մեկ մշակույթ, իսկ հրեաները չեն ունեցել այդպիսի միասնական մշակույթ (ազգային դպրոց, ազգային կրթական համակարգ, որը կլիներ այդ մշակույթի գործառնության ու ժառանգորդման միջոց): Յուրաքանչյուր ժողովրդի ապրելակերպը սեփական մշակույթի ներսում օրինաչափ է ու հարազատ: Դա արդյունք է բազմադարյան պատմության ընթացքում հաստատված կենցաղի, ավանդույթների, աշխարհըմբռնման, կրոնի և այլ գործոնների:

Ժամանակակից աշխարհում տնտեսական, սոցիալական ու բազմաթիվ այլ դժվարությունների մեջ ազգային ինքնության, ազգային տիպի, տեսակի պահպանումը կարևորագույն խնդիր է: «Ժամանակի ոչ մի պահի ազգային ինքնությունը լրիվ ու անվերապահ չէ:

⁶⁹ Գևորգյան Հ. Ա., Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2005, էջ 430:

Այն մեկ ավելի կայուն է, մեկ՝ բոլորովին անկայուն: Մի խոսքով՝ այն ընթացք է: Նրանում միշտ կա ինչ որ պահպանվող և ինչ որ փոփոխվող բան: Բայց մեկի և մյուսի գուգակցումն իր հերթին նույնպես փոփոխական է, անհավասարակշիռ»:⁷⁰ Մասնագիտական գրականության մեջ ազգային ինքնության հարցի նկատմամբ բացասաբար և անհանդուրժողական տրամադրված հեղինակները ավելի շուտ վախենում են վերջինիս տրված տարբերակից, որը որակվում է իբրև ազգայնամոլություն: Սակայն ազգային ինքնության գիտակցությունը ազգերին միմյանցից առանձնացնող, ինչպես նաև սեփական ազգի, անցյալի պատմության, ներկայի հետ իրեն նույնացնելու, ոգեշնչում պահանջող թույլենքերին ազգի նպատակների համամասնակիցը դառնալով՝ անհատի գիտակցությունն է: Եվ երբեմն, եթե ոչ հաճախ, այն հանդես է գալիս որպես ազգի միավորման հիմնական, միակ միջոց, երբ միավորման այլ, նույնիսկ ինստիտուցիոնալ ազդակներն ու մեխանիզմները չկան կամ չեն գործում: Ազգային ինքնությունը ոչ միայն ազգի ամփոփ կենսագրությունն է, այլև գոյության իրավունքի առանձնաշնորհյալ վկայականը: Ընդ որում, ոչ թե ուղղակի, ի միջի այլոց գոյության, այլ այնպիսի գոյության, երբ հստակ գիտակցված է «գոյատևել որպես ո՞վ, կամ այլ կերպ ձևակերպելով, բարոյական ի՞նչ գին ենք պատրաստ մենք վճարել մեր ֆիզիկական գոյատևման դիմաց»:⁷¹ Դարերի ընթացքում ճակատագրի ընդհանրությամբ հիշյալ ազգային գործոնների հիման վրա (լեզու, մշակույթ, պատմական հիշողություն, մտածողություն, ինքնագիտակցություն, բնավորություն, հոգեկան կերտվածք և այլն) ձևավորվում է յուրաքանչյուր ազգի ազգային ինքնությունը, ազգային դիմագիծը և ազգային անհատականությունը: «Ազգային ինքնության որոշման համար... առաջնային են դառնում հայրենիքը, լեզուն, ազգային արժեքների ճանաչումը, դրանց միջոցով մարդու անհատական ես-ի իմաստավորումը... այսպիսի գաղափարախոսությունը կարող է ազգանպաստ լինել, միայն, եթե ազգային պետականության

⁷⁰ Աբրահամյան Լ. Հ., Ազգային ինքնությունը որպես պրոցես, «Ինքնություն», Եր., 1995, էջ 21:

⁷¹ Նշվ. աշխ., էջ 21:

նույնպես ժամանակակից տիպարը իրականություն դառնա, և հայրենիքը իր պատմական ու մշակութային արժեքներով և ներկա իրողությամբ, իսկ հայ ազգային հանրությունը՝ իր բարոյական արժանիքներով, իսկապես դառնա ազգային ինքնության պահպանման ու ընտրության իրական հիմքը»:⁷²

Բանն այն է, որ ազգային հետաքրքրությունները բխում են ազգային նույնականությունից և այդ պատճառով միշտ էլ անհրաժեշտություն է ծագում պարզել, թե «ո՞վ ենք մենք», ինչո՞ւ են մեր շահերը բխում մեր ազգային ինքնությունից և ինչո՞վ ենք տարբերվում այլ ազգային ինքնություններից: «Մարդը չի ծնվում մարդ, այդպիսին դառնում է հասարակական-ազգային կյանքի ընթացքում: Մենք գտնում ենք, որ մարդկությունը, այսինքն՝ մարդկային և ազգային էությունը, արտահայտվում է նախևառաջ մարդու ներքնաշխարհի ծագման և ձևավորման մեջ, որտեղ հասարակության և ազգային մշակույթի արժեքները վերամշակվում են անկրկնելի կերպով՝ ազգային օրգանիզմի բնորոշ գծերի հիման վրա»:⁷³ Առանց էթնոմշակութային ինքնության խոր գիտակցության հետամբողջատիրական անցումային հասարակությունները շարունակական վերափոխումներից դուրս կգան ազգային դեմքն ու դիմագիծը կորցրած: Ուստի, ընդունելով հանդերձ անձնական-նախաձեռնողական ազատական հարացույցը, չի կարելի անտեսել սոցիոմշակութային վերանձնային, կոլեկտիվ-իռացիոնալ արժեքների ու սրբությունների նշանակությունը, քանի որ հենց դրանք են ազգի բարոյահոգեբանական նկարագրի և ինքնանույնականության պահպանման համաքաղաքակրթական փորձարկված գրավականները: «Սոցիոմշակութային նույնականությունը ենթադրում է վարքային, խորհրդանշանային, առարկայական հատկանիշների կարծրատիպային հավաքածու, որը ընկած է տար-

⁷² **Գևորգյան Հ. Ա.**, Եկեղեցին որպես հասարակական հաստատություն և ազգային կյանքը, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., ԵՊՀ հրատ., 2002, №2, էջ 17-25:

⁷³ **Հարությունյան Մ. Ա.**, Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., «Նաիրի» հրատ., 2014, էջ 59:

բեր քաղաքակրթություն ունեցող մարդկանց սոցիալական վարքի հիմքում»:⁷⁴

Սոցիալական սուբյեկտը մշակութային միջավայրից յուրացնում է անհրաժեշտ կենսական այնպիսի արժեքներ, վարքի նորմեր, որոնց շնորհիվ աշխարհի մասին պատկերացումները դառնում են գաղափարներ և կարծրատիպեր, որոնք էլ իրենց հերթին, հանդես են գալիս որպես սոցիալական վարքի կարգավորիչներ: Նման պարագայում մարդկանց համար կարևոր է դառնում իրենց ինքնանույնացնել սոցիոմշակութային ավանդույթների հետ, գիտակցաբար պատասխանատու լինել դրանց հաջորդականության համար, փոխանցել դրանք սերնդից սերունդ: Մարդիկ ձգտում են միավորվել նրանց հետ, ովքեր նման են իրենց և ունեն կրոնական, ռասայական, ավանդական, առասպելական, ծագումնաբանական և պատմական ընդհանրություններ: Ազգային նույնականության կարևորությունը նույնպես տարբեր կերպ է ընկալվում՝ կապված ազգային մշակութային առանձնահատկություններից:

Եթե մենք, օրինակ, համեմատենք արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների սոցիոմշակութային նույնականությունները, ապա կտեսնենք, որ արևմտյան աշխարհընկալման ամենացայտուն գծերից է անհատապաշտությունը, որն ունի մշակութային խոր արմատներ: Արևմտյան հասարակության համար միշտ կարևոր է եղել նյութական առաջընթացը: Անհատը պատասխանատվություն է կրում հասարակության բարեկեցության համար: Սոցիալական սուբյեկտը այս մշակությամբ ապրում է, որպեսզի աշխատի և մեծացնելով անհատական բարեկեցությունը՝ ստեղծի հասարակական բարեկեցություն: Այս քաղաքակրթության մեջ մարդկային արարքների հիմնական շարժիչ ուժը մասնագիտական բարձունքի հասնելու ձգտումը և հասարակությունում բարձր դիրք գրավելը: Մինչդեռ արևելքում խորք են այնպիսի արժեքներ, որոնք բնութագրում են արևմտյան սոցիոմշակութային նույնականությունը: Այստեղ ներուժ է համարվում այն, ինչը կարող է զարգանալ մեծ գաղափարների ազ-

⁷⁴ **Василенко И. А.**, Политическая философия. М., ИНФРА-М, 2010, с.100.

դեցության ներքո: Այս մշակույթի մարդը պատրաստ է հավատալ տվյալ գաղափարին և ծառայել դրան: «Յուրաքանչյուր քաղաքակրթություն սոցիալական միջավայրի համար զարգացնում և արմատավորում է որոշակի անհատական հատկանիշներ և ցանկացած քաղաքակրթություն ձևավորման արշալույսից յուրացնում է այդ սոցիալական արժեքները՝ շնորհիվ սոցիալականացման»:⁷⁵

Ընդ որում, տարբեր հասարակությունների համար արմատավորվում են հատկապես տվյալ հանրության ինքնությանը բնորոշ արժեքներ: Օրինակ, ամերիկյան հանրությանը բնորոշ են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ինքնավստահությունը, ինքնակառավարման ունակությունը և այլն: Հնդկաստանում ավանդականորեն ձևավորվել են այլ արժեքներ՝ հայեցողություն, պասիվություն, միստիցիզմ և այլն: Չինաստանում մեծ նշանակություն է տրվում տոհմային համերաշխության ամրապնդման գաղափարին, գնահատվում է նաև մեծերին հարգելը, կյանքի դժվար իրավիճակներում չափավորություն պահպանելը: Ասիական երկրներում առաջնային է տոհմային համերաշխությունը: Այստեղ հասարակության հիմնական օղակը ընտանիքն է: Տոհմային համերաշխությունը մի հզոր ուժ է, որը համախմբում է կոնֆուցիոսականության երկրները, ծնում է հայրենասիրություն, հանուն հայրենիքի աշխատելու ցանկություն: Չինացիներն անկեղծորեն հավատում են, որ իրենք միևնույն նախնիներից են առաջացել, իսկ ճապոնացիները իրենց կայսերը համարում են ազգի՝ ընտանիքի գլուխը:

Խոսելով այս ժողովուրդների մասին՝ չենք կարող չանդրադառնալ նաև հայ ժողովրդին: Քաղաքական և մշակութային մարտահրավերներին դիմակայելու համար սահմանային իրավիճակներում ապրող հայ ժողովուրդը իր ռիսկային պատմության քառուղիներում, հատկապես ազգային պետության ու քաղաքական անկախության բացակայության պայմաններում, ստիպված է եղել ապավինել գոյատևման ազգային կենսափիլիսոփայության սոցիոմշակութային համակարգին: Վերլուծելով ազգային կյանքի զարգացման միտում-

⁷⁵ Лебон Г., Психология народов и масс. СПб, «Макет», 1995, с.12-13.

ներն ու հնարավորությունները, Է. Աթայանը նկատում է, որ Հայաստանի պատմության մեծ մասը եղել է ճգնաժամային իրավիճակների պատմություն, որին մեծապես նպաստել է մեզ համար արդեն սովորական դարձած «աղետածին միջավայրը»:⁷⁶ Ընդ որում, այդ իրավիճակում հայկական ոգին դրսևորել է դատողությունների սքափություն, դաժան հավաքվածություն և կազմակերպվածություն և այս առնչությամբ պատմության թատերաբեմից հայերի հեռանալու կանխատեսումները հաշվի չեն առնում մի կարևոր հանգամանք՝ աշխարհաքաղաքական դատապարտվածությունը դարձել է մեր «գոյատևման... պարադոքսալ շարժառիթը»:⁷⁷ Պետք է նկատել, սակայն, որ ինքնանույնականությունը պահպանելու և արտահայտելու հայ ժողովրդի սոցիոմշակութային արժեհամակարգը երկփեղկված կառույց է:⁷⁸ Մի կողմից այն միտված է անհատական կենսակերպի պահպանմանը, քանի որ դարեր շարունակ պետական պաշտպանվածությունից զուրկ հայ անհատը, ապրելով սահմանային իրավիճակներում, ստիպված է եղել ապավինել գոյության անհատական կենսաձևին, որը հատկապես սոցիալական ինստիտուտների համակարգիչ գործառույթի թուլացման ժամանակ ձեռք է բերում անհատական փրկության նախաձեռնողական, անհատապաշտական գոյաձև: Մյուս կողմից, սակայն, պարբերաբար կրկնվող աշխարհաքաղաքական և սոցիոմշակութային վտանգներին ու արհավիրքներին միասնաբար դիմակայելու նպատակով հայ ժողովուրդը հաճախ է ապավինել գոյատևման ամբողջական-հավաքական կենսաձևին: Հայ ժողովրդի, որպես էթնոսոցիոմշակութային առանձնահատուկ համակարգի, գոյատևման կենսաձևը մշտապես հավասարակշռված է եղել անհատականության և հավաքականության չափավոր հակադրությամբ: Հայկական հասարակության համար տիրապետող են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ավանդական ընտանեկան հարաբերություններ-

⁷⁶ Տե՛ս **Атаян Э. П.**, Потенции и тенденции национальной жизни (очерк проблематики), «Ինքնություն», Եր., 1995, էջ 48:

⁷⁷ Նշվ. աշխ., էջ 48:

⁷⁸ Տե՛ս **Հարությունյան Էդ. Ա.**, Ազգային կենսափիլիսոփայության պատմափիլիսոփայական վերլուծություն // Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ, Եր., 2002, էջ 13-15:

րը, աշխատասիրությունը, հարմարվողականությունը: Հայկականան ազգային ոգու գիտակցության տարրերը սկիզբ են առնում էքնիկական ամենավաղ դիցաբանական պատկերացումներից և զարգացման հարատև ընթացք ստանում բանավոր և գրավոր բանահյուսության մեջ: Հայ եկեղեցու համար դավանանքի պաշտպանությունը միևնույն ժամանակ նաև ազգային-մշակութային ինքնությունության և անկախության պաշտպանությունն էր: Հայոց բազմադարյան ավանդույթները կերտող տեքստերի ամբողջության մեջ աչքի է զարնում մի եռամիասնություն, որի առանձնահատուկ դերն ազգային նույնականության ձևավորման գործում կարծես թե կասկած չի հարուցում: Դրանք այն փաստաթղթերն են, որ պատմում են հայերի՝ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու, սեփական գիրը և գրական ավանդույթը ստեղծելու, ինչպես նաև այդ նոր ձևավորված արժեքները թշնամու դեմ ռազմի դաշտում կյանքի գնով պաշտպանելու պատրաստակամության մասին: «Որքան էլ դաժան լինի ճակատագիրը տվյալ ազգի նկատմամբ, ոչ մեկն ի վիճակի չէ նրան խանգարելու ասրելու իր ներքին կյանքով, ոչ ոք չի կարող գրկել նրան սեփական արժանապատվության գիտակցությունից, խլել նրան պատկանող հոգևոր արժեքները: Դրա շնորհիվ «ես»-ը հնարավորություն ունի, հեռավորություն պահպանելով ամեն մի արտաքինի և անիսկականի նկատմամբ, նորից ու նորից վերադառնալու ինքն իրեն»:⁷⁹

Ավանդույթների, որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակի, ժամանակակից առավել հրատապ խնդիրներից մեկը կապված է մշակույթի պահպանման անհրաժեշտության հետ, որը նույնականության ձևավորման հիմնական աղբյուրներից մեկն է: Նման իրավիճակում մարդիկ բախվելով օտար դրսևորումներին, հաճախ շտապում են ընդօրինակել դրանք՝ համարելով օգտակար, մինչդեռ թվացյալ օգտակարության հետևում հաճախ կանգնած է լինում այն կործանարարը, որը սպառնում է ազգային մշակույթին: Մշակույթն ազգային և քաղաքակրթական յուրահատկությունների հիմ-

⁷⁹ Աբրահամյան Լ. Հ., Ազգային ինքնությունը որպես պրոցես, «Ինքնություն», Եր., 1995, էջ 22:

նական կրողն ու արտահայտողն է: Համաշխարհայնացման դարաշրջանում մշակույթում ուրվագծվում են երկու եթե ոչ հակադիր, ապա հակասող միտումներ: Ակնհայտ է, որ քայքայված մշակույթը չի կարող ծառայել ժողովուրդների միասնականացնող քաղաքակրթության միտումներին: Թեև համաշխարհայնացումը նպաստում է հատկապես տնտեսական ու սոցիալական առումով թույլ զարգացած երկրների մշակույթների ձուլմանը, այնուամենայնիվ, սոցիալ-մշակութային համակարգերի տարածման և փոխներթափանցման հեռավատկերի վրա էթնիկ տարածայնությունները վկայում են միակ էթնոսի, միակ մշակույթի ստեղծման անհնարինության մասին: Օրինակ, հետխորհրդային հասարակությունների որոշ ժողովուրդներ բախվեցին հարյուրամյակների ընթացքում ձևավորված սեփական ինքնության պահպանման, մյուսները՝ արժեքների կողմնորոշման համընդհանուր միատեսականացման ոչ այնքան բարենպաստ պայմաններում ինքնանույնականացման բարդ ուղին անցնելու անհրաժեշտության խնդրին: Բոլոր այս հասարակությունները վաղ թե ուշ պետք է կանգնեին ընտրություն կատարելու անհրաժեշտության առջև՝ հրաժարվել այսպես կոչված արևմտյան արժեքների պարտադրված համակարգից ու հայտնվել մեկուսացված վիճակում, ընդունել այն ամբողջովին, զուգահեռաբար սպառնալիքներ ստեղծելով նույնականացմանը, կամ էլ կիրառել այնքանով, որքանով դա չի կարող խոչընդոտել ազգի ինքնանույնականացմանը: Վերջին ճանապարհը միաբևեռ աշխարհի պայմաններում այլընտրանքների բացակայության պատճառով գործնականում դառնում է անհնար:

Ազգային նույնականացման համատեքստում, ազգային արժեքները դառնում են համամարդկային և ցեղային արժեքների յուրահատուկ մի համադրություն: Շնորհիվ նույնականացման ամեն անհատ կրում է իր ցեղի հոգին, հավատը, քաղաքացիական կացությունը: Ազգի մեջ անընդհատ պայքար է ընթանում ցեղայինի և համամարդկայինի միջև: Ցեղայինը ձգտում է իր գիտակցությունը տարածել ազգի վրա, փորձում է ազգը դարձնել փակ համակարգ, իսկ համամարդկայինը իր հերթին աշխատում է առավելապես բացել այդ համակարգը: Ազգային ինքնությունը հավասարակշիռ ընթացք, միտում է և՛ դե-

պի ցեղային, և՛ դեպի համամարդկային արժեքները: Կարելի է ասել, որ այս դեպքում ազգայինը ցեղայինի և համամարդկային խառնարանն է, ինչը նշանակում է ազգային ինքնությունը գիտակցական խուսափումն է և՛ ազգի վերացման վտանգից, և՛ ազգի կործանարար կաղապարման-մեկուսացման վտանգից: Չափավոր ցեղայինը ամենևին էլ բացասական, վտանգավոր երևույթ չէ, ավելին՝ «ցեղը դիմագծորեն ազգայինն է, այն տիրապետականը, որով ժողովուրդները տարբերվում են իրարից»:⁸⁰ Յեղի մեջ ամփոփելով դրականն ու ցանկային ազգի համար՝ Նժդեհը կարծես այն նույնացնում է ազգային ինքնության հետ: Եթե ազգային ինքնության կարևորագույն դերակատարությունը «ուրիշներից տարբերվելու և ինքն իր հետ նույնանալու» գործառույթներն են, ապա տվյալ համատեքստում այն մրցակցելու ոչինչ չունի ցեղային գիտակցության հետ: Ազգի ճակատագիրը և մշակույթը մեծ մասամբ պայմանավորված են նախորդ սերունդների ստեղծած քաղաքակրթությամբ: Այստեղ կարևորվում է մշակութային ժառանգականության դերը: Յուրաքանչյուր ազգ ինքն է մոդելավորում, թե իր ավանդույթներից որն է համապատասխանում ժամանակակից իրականությանը և ժողովրդի մենթալիտետին: Այս առնչությամբ դժվար չէ նկատել ազգային բնավորության ձևավորման համար որքան մեծ նշանակություն ունի գիտակցված սկիզբը՝ էթնոսի, ազգի ինքնագիտակցությունը: Հենց ինքնագիտակցությունն է, որ հիմք և նախադրյալ է հանդիսանում գիտակցության համար: «Յուրաքանչյուր ազգ իր խնդիրն է համարում այս համաշխարհայնացման ժամանակաշրջանում պահպանել ազգային արժեքներն ու մշակույթը, միևնույն ժամանակ հարկավոր է չմեկուսանալ և ավանդական ժառանգականությունները պահպանելու համար ապրել փակ մշակութային տարածության մեջ»⁸¹: Ազգային բնութագիրը ազգի հոգևոր ներդրումն է, որը ծագում է նրա սոցիոմշակութային փորձից, ավանդույթների միասնությունից, տվյալ էթնիկ հանրության գաղափարներից, արժեքներից ու կարծրատիպերից: Յուրաքանչյուր մարդ

⁸⁰ Նժդեհ Գ., Հատընտիր, Եր., «Հայաստան» հրատ., 2001, էջ 44:

⁸¹ Ռսկանյան Ա. Վ., Ազգային ինքնության հիմնահարցը և մտավորականության կոչումը, «Ինքնություն», Եր., 1995, էջ 11:

ինտուիտիվ գիտակցում է, որ պետք է ունենա իրենը՝ իր զարգացման ճանապարհը, նպատակներն ու ձգտումները: Այս ինքնությունը պետք է հիմնավորված լինի յուրաքանչյուր անձի կամ ազգի կողմից և պետք է համապատասխանի ներքին գիտակցված և ոչ գիտակցված պահանջմունքներին ու ձգտումներին: Ինչպես նշում է Գ. Ա. Սոդոմոնյանը. «Մշակույթը բաց համակարգ է և մշտապես կարիք ունի թարմ հոսանքների, բայց այդ հոսանքները պետք է ներքնապես հարազատ լինեն ազգային մշակութային և հոգեկերտվածքին: Ուստի անհրաժեշտ է քաղաքակրթական արդի արժեքները մշտապես լրացնել ազգային մտածելակերպին, խառնվածքին, մշակութային պատկերացումներին, ազգային սովորույթներին ու ավանդույթներին համապատասխան բովանդակությամբ»⁸²:

Ավանդույթների՝ որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակի հիմնախնդիրը քննարկելով ինչպես քաղաքակրթական, այնպես էլ մշակութաբանական գործոնների համատեքստում, ակնհայտ է դառնում այն փաստը, որ ազգային կենսագործունեության նախընթաց փորձը սերնդեսերունդ փոխանցվում է քաղաքակրթական և մշակութային՝ նույնականության պահպանման երկփեղկված կառույցների միջոցով: Ավանդույթների քաղաքակրթական ուղղվածությունը նպաստում է ազգային կյանքի արդիականացմանը, իսկ մշակութային հենքը՝ ազգային կյանքի ինքնության և ինքնատիպության պահպանմանը:

⁸² **Սոդոմոնյան Գ. Ա.**, Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, ԵՊՀ հրատ., 2013, էջ 24:

ԳԼՈՒԽ II. ԱՎԱՆԳՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՊԵՏ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

2.1 Սոցիոմշակութային հիշողությունը որպես ավանդույթների վերարտադրման գործիք

Սոցիալական աշխարհի անընդմեջ զարգացման, ինչպես նաև անցյալի ու ներկայի հաջորդականության ու կապի պահպանման գործում առանձնահատուկ դեր ու գործառույթներ ունի սոցիոմշակութային հիշողությունը: Սոցիալական կյանքի մասին մարդու կենսավորձը մի յուրահատուկ հիշողություն է, առանց որի մարդկային պատմությունը ամբողջական ու համակարգված չէր լինի: Սոցիոմշակութային հիշողությունը բարդ և բազմաշերտ երևույթ է: Ցանկացած գործողություն և գործունեություն խարսխված է հիշողության մեջ պահված գիտելիքների որոշակի պաշարի վրա: Ավելին, հիշողությունը նաև մարդու անձի, նրա ես-ի ու ինքնագիտակցության ամբողջականության ու անընդհատության հիմքն է: «Առանց հիշողության մենք կլինենք ակնթարթային գոյություններ: Ապագայի համար մեր անցյալը կլինեք մահացած, իսկ ներկան... անհետ կկորչեք անցյալում»⁸³:

Սոցիալական համակարգի կառուցարկման մեջ հիշողությունը նախընթաց փորձի կազմակերպման և պահպանման գործընթացների այնպիսի ամբողջություն է, որի միջոցով սոցիալական սուբյեկտների անցյալը հնարավոր է կապել ներկայի և ապագայի հետ: Ինչպես ավանդույթների, այնպես էլ հիշողության մասին հետազոտությունները միջառարկայական բնույթ ունեն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «հիշողություն» հասկացությունն օգտագործվում է կյանքի տարբեր իրավիճակները ներկայացնելու համար: Ընդ որում, հիշողությունը ներառում է ինչպես անհատական փորձի, այնպես էլ ժառանգորդման տեղեկատվության փոխանցման մեխանիզմները:

⁸³ Немов Р. С., Общие основы психологии, книга 1, М., «Просвещение», 1994, с. 184.

Հիշողությունը պայմանավորված է մտապահելու, պահպանելու և վերարտադրելու եռամիասնական գործընթացներով: Պահպանման տևողությունից կախված՝ հիշողությունը ստորաբաժանվում է կարճատև և երկարատև տարատեսակների: Պահպանման նյութի բովանդակությունից ելնելով՝ տարբերակվում են հիշողության ճանաչողական (կոգնիտիվ), հուզական և անձնային ձևերը: Հիշողությունը կարող է լինել խոսքային-տրամաբանական և պատկերավոր, ընդ որում, հիշողության այդ տեսակների զարգացման մակարդակը տարբեր մարդկանց մոտ տարբեր է, մեկի մոտ գերիշխում է տրամաբանական հիշողությունը, մյուսի մոտ՝ պատկերավորը: Դժվար չէ նկատել, որ հիշողության բնութագրերի շարքում, որպես կանոն, առանձնացվում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ծավալը, մոռացման արագությունը, տեղեկատվության պահպանվածության աստիճանը՝ այսինքն՝ դրա պահպանման տևողությունը և ճշգրտությունը:

Սոցիալական համակարգի կառուցարկման, սոցիումի կամ սոցիալական տարբեր համագործակցությունների համատեքստում հիշողության հիմնախնդիրը քննարկվում է սոցիալական կամ սոցիոմշակութային հիշողության տեսանկյունից: Հասարակության սոցիալական հիշողությունը հետազոտության բարդ և բազմաշերտ օբյեկտ է և ուսումնասիրվում է հոգեբանության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և հումանիտար այլ գիտությունների կողմից: Սոցիոմշակութային հիշողությունը անցյալը վերծանելու այն հոգևոր պատրաստվածությունն է, որի օգնությամբ մարդկության նախորդ կենսավորձը ներառվում է ժամանակակից սոցիոմշակութային համակարգի մեջ և նպաստում սոցիալական աշխարհի արդիականացմանը՝ պահպանելով անցյալի, ներկայի և ապագայի շարունակականությունը:

Ժամանակակից սոցիալ-փիլիսոփայական միտքը հաճախ է անդրադառնում մշակույթի կայուն բաղադրիչների փոխանցման երևույթների քննական վերլուծությանը, և այդ համատեքստում *սոցիալական ժառանգորդում*, *սոցիալական հիշողություն*, *պարմական հիշողություն* հասկացությունները ելակետային նշանակություն են ձեռք բերել: Մասնագիտական գրականության մեջ սոցիալական հիշողությունը դիտարկում ենք որպես՝ օբյեկտիվացված և ինտեր-

սուբյեկտիվ: Օբյեկտիվացված սոցիալական հիշողությունը մարդկային գործունեության արդյունքները ներառող սոցիալական տեղեկատվությունն է, որը մարդկության ողջ գոյության ընթացքում ամբարվում է նյութական մշակույթի առարկաներում: Դա տեղեկատվության այն ինքնավար աշխարհն է, որը տեղեկատվական հոսքի տեսք է ստանում միայն ճանաչող սուբյեկտի հետ փոխգործակցության ընթացքում: Մարդկային գործունեության արդյունքները դրսևորվում են դասակարգերի, սոցիալական խավերի և խմբերի, ինչպես նաև առանձին սուբյեկտների ամենօրյա կյանքի և կենսագործունեության հետ կապված առարկաների տեսքով: Դրանք կարող են լինել արվեստի տարբեր ոլորտներին վերաբերող առարկաներ, խոհանոցային պարագաներ, հագուստ, արդուզարդ և այլն: Պատմական ավելի ուշ փուլերում այդ շարքը համալրում են առևտրային և քաղաքական պաստառներն ու գովազդային հոլովակները:

Ի տարբերություն օբյեկտիվացված սոցիալական հիշողության, ինտերսուբյեկտի վացված հիշողությունը ունի իր ճանաչող սուբյեկտը: Ծանաչող սուբյեկտի դերում կարող է հանդես գալ ինչպես որևէ պատմական կոնկրետ գործող անձ, այնպես էլ որևէ սոցիալական համակարգ (սոցիալական խումբ, էթնոս, ազգ և այլն): Այսպիսով, սոցիալական ինտերսուբյեկտիվ հիշողությունը առանձին սոցիումի ներքին իրավիճակի և շրջակա միջավայրի մասին տեղեկատվական հոսքերի միջոցով, սուբյեկտի և օբյեկտիվացված սոցիալական հիշողության փոխգործակցության արդյունքում ստեղծված սոցիալական տեղեկատվությունն է: Այս դեպքում այդ տեղեկատվությունը կարելի է ստանալ տրամաբանական և իմացաբանական հետազոտությունների արդյունքում: Այդպիսի տեղեկատվությունը հասարակության և այն կազմավորող սուբյեկտների համար ունի սոցիալական նշանակություն: Այսինքն, ինտերսուբյեկտիվ սոցիալական հիշողությունը ապահովում է սոցիալական համակարգերի ամբողջականությունը, հանդես է գալիս որպես գիտակցական ընկալման համար նախատեսված յուրահատուկ մեխանիզմ: «Ինտերսուբյեկտիվ սոցիալական հիշողությունը իր մեջ պահպանում է արտաքին միջավայրի հետ փոխգործակցության ընթացքում ստացված և սոցիալական հիշողության

մեջ ամրագրված տեղեկատվությունը, ինչպես նաև տվյալ հասարակական համակարգում տեղի ունեցող դինամիկական գործընթացների մասին տեղեկությունները»:⁸⁴ Այդ ամենը նախ թեստավորվում է արժեքների տվյալ համակարգի շրջանակներում, ապա՝ փոխանցվում:

Սոցիոմշակութային հիշողությունը սերունդների մշակութային արժեքների փոխանցման միջոց է, սոցիալական իրականության հիմնաքար, որը հանդես է գալիս որպես սոցիալական փորձի փոխանցման մեխանիզմ և որպես այդպիսին, այն իրականության մեջ գոյություն ունեցող ինքնուրույն երևույթ է և ունի իրեն բնորոշ կառուցվածք ու զարգացման ներքին տրամաբանություն: Լայն իմաստով սոցիոմշակութային հիշողությունը մարդու պատկերացումների և մտածողությունը կապող օղակ է և կապված է անցյալի պահպանման և գիտակցության մեջ նրա վերարտադրման ու վերակառուցման հետ: Այդ տեսակետից սոցիոմշակութային հիշողությունը հանդես է գալիս որպես մարդու մշակութային և սոցիալական գործունեության եղանակ, որի միջոցով մարդը պահպանում է անցյալը և կառուցում ապագան: Լինելով նախորդ արժեհամակարգի վերարտադրման համակարգ՝ սոցիոմշակութային հիշողությունը դրանով իսկ հանդես է գալիս որպես ժամանակի վերարտադրման եղանակ: Շնորհիվ սոցիոմշակութային հիշողության, հասարակությունը պատմական անցյալից «դուրս է բերում» այն ամենակարևորն ու արժեքավորը, որն անհրաժեշտ է սոցիալական ու բնական աշխարհների հետ հարաբերություններ հաստատելու համար: Սոցիալական համակարգի կառուցարկման տեսանկյունից սոցիոմշակութային հիշողության այս գործառույթի էությունն այն է, որ ապահովում է ներկայի և անցյալի կապը և հնարավորություն է տալիս կողմնորոշվել անցյալից ներկա և ներկայից անցյալ «ուղևորվելու» դժվարին գործընթացում: Այս փոխադարձ անցումների շնորհիվ մարդը դառնում է իր պատմական կեցությունը որոշող սուբյեկտ: Ինչպես իրավացիորեն նկատում է Պ. Ռիկյորը, առանց անցյալին ձուլվելու հնարավոր չէ ձևակերպել ու բնու-

⁸⁴ **Молодкина Л. В.**, К вопросу о феноменологии памяти/на архитектурно-природного памятника/, Вестник Московского университета, 2007, №6, с. 95.

քազրել ներկան: «Եթե ժամանակը անցնող թույլների հաջորդական շարք է, ապա հիշողությունը առկայության տեսանկյունն է»⁸⁵:

Պատմական գործընթացների հանդեպ փիլիսոփայական անդրադարձի անհրաժեշտություն է առաջանում հատկապես այն ժամանակ, երբ հարվածի տակ են դրվում ավանդույթներն ու հասարակության զարգացման ուղիները: «Եթե ներկան կտրված չէ սերունդների գործունեությունից,- նշում է Է. Գիդդենսը,- ապա հիշողությունը չի կարող լինել այլ բան, քան մարդկային իմացության բացահայտման ունակություն»⁸⁶: Այն, ինչ մարդը գիտակցում է, չի կարող տեղադրված լինել ժամանակի որոշակի առանձնացված հատվածում: Հիշողությունը թույլ է տալիս կուտակել, պահպանել և վերարտադրել իմացության ողջ գործընթացը և հնարավորություն է տալիս արժեքաբանական տեսանկյունից հասկանալ և՛ ներկան, և՛ անցյալը:

Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ սոցիոմշակութային հիշողությունը անցյալը վերծանելու այն հոգևոր պատրաստվածությունն է, որը հնարավորություն է տալիս մարդկության նախորդ կենսավորձը ներառել ժամանակակից սոցիոմշակութային արժեքների համակարգի մեջ և նպաստել սոցիալական աշխարհի արդիականացմանը: Եթե անցյալում սոցիոմշակութային հիշողությունը գլխավորապես դիտարկվում էր որպես անցյալի վերարտադրման միջոց, ապա քաղաքակրթական զարգացման արդի փուլում այն հանդես է գալիս նաև որպես կյանքի արդիականացման և ապագայի ծրագրավորման միջոց: Դիշտ է, ժամանակակից մարդը օտարվելով տնտեսական, սոցիալական և հոգևոր կյանքից, փորձում է իր կյանքը ձևավորել ու կազմակերպել անհատական հարթության վրա, բայց ունենալով որոշակի ազգային ու սոցիալական ինքնություն ու պատկանելիություն (կուլետիվ հիշողություն), ի վերջո կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործունեության մեջ ղեկավարվում է սոցիոմշակութային հիշողությամբ: Այս իրողությունը մեկ անգամ ևս փաստում է, որ անցյալը վերակերտվում է ներկայի պահանջներին համապատասխան և

⁸⁵ **Рикер П.**, Память, история, забвение. М., «Наука», 2004, с.214.

⁸⁶ **Гидденс Э.**, Устройство общества: Очерк теории структуриации. М., «Академический Проект», 2005, с. 99.

հակառակը՝ ներկան չի կարող անտեսել անցյալը: Այլ կերպ ասած՝ սոցիոմշակութային հիշողությունը անցյալը դարձնում է իրական արժեք, մեր կյանքի նշանակալի մաս և սոցիալական կյանքի առաջընթաց շարժիչ ուժ: Ավելին, սոցիոմշակութային հիշողությունը կանխորոշում է ներհասարակական հարաբերությունների ու փոխազդեցությունների բնույթն ու առանձնահատկությունները և դրանով իսկ ուղղորդում սոցիալական համակարգի զարգացմանն ու գործառությանը:

Մարդու սոցիոմշակութային հիշողությունը շփման, փոխադարձ ներգործության և համակեցության արդյունք է: Այդ իմաստով այն կոլեկտիվ գիտակցության ֆենոմեն է: Այն փաստը, որ տարբեր անհատներ իրենց ազգային անցյալի մասին ունեն նույն պատկերացումները, ցույց է տալիս, որ նրանց սոցիոմշակութային հիշողությունը ընդամենը կոլեկտիվ հիշողության անձնավորված դրսևորման ձև է: Ձևավորելով սոցիալական կյանքի հուզական աշխարհը, կոլեկտիվ պատկերացումները, ի տարբերություն անհատական, ներքին ապրումներով լրացված պատկերացումների, ունեն արտաքին բնույթ և ծագում են անհատական գիտակցությունների օրգանական միասնությունից: Արդյունքում՝ ձևավորվում է սկզբունքորեն նոր աշխարհ, որն իր ազդեցությունն է թողնում մարդու վրա:

Սոցիալական կյանքի զարգացման պարադոքսներից մեկն այն է, որ համակարգային փոխակերպումների ժամանակ, հատկապես երբ այդ փոխակերպումների սոցիոմշակութային հարացույցները չեն համապատասխանում տվյալ ազգային հանրույթի կենսափոխակերպությանը, պատմական հիշողությունը ասես ակտիվանում է, դառնում բարեփոխումները զնահատող և ուղղորդող, նրա արդյունքները մերժող կամ հաստատող «գրաքննիչ»: Ասվածից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ համակարգը չի ղեկավարվում անցյալն ու ներկան կապող սոցիոմշակութային մեխանիզմներով, խզվում է ժառանգորդման հաջորդականությունը, և փոխակերպումները հարուցում են սոցիոմշակութային տատանումներ ու ճգնաժամային իրավիճակներ:

Մասնագիտական գրականության մեջ տարբերակում են հիշողության մի քանի տեսակներ՝ պատմական, ինքնակենսագրական, տեղային, կոլեկտիվ և այլն: Ինքնակենսագրական հիշողությունը հի-

շողություն է այն իրադարձությունների մասին, որոնք մեր կենսավոր-
ձի արդյունքն են: Յուրաքանչյուր մարդ ունի ինքնակենսագրական
հիշողություններ, որոնք ամբողջությամբ հիմնված են անձնական
կենսավորձի վրա: Բայց մարդն ունի նաև որոշ այլ հիշողություններ,
որոնք նա կիսում է այլ մարդկանց հետ: Սա ցույց է տալիս, որ հիշո-
ղությունն ունի ընդհանրական բնույթ: «Հասարակության կոլեկտիվ
հիշողությունը լրիվ տարբեր է այդ հասարակության բազմաթիվ ան-
հատ անդամների անձնական հիշողությունների հանրագումարից,
քանի որ ներառում է միայն այն հիշողությունները, որոնք սովորաբար
կիսվում են հասարակության բոլոր անդամների կողմից»⁸⁷: Միևնույն
ժամանակ չպետք է հասարակության կոլեկտիվ հիշողության անձնա-
վորված դրսևորումները շփոթել իրոք անձնական բնույթ ունեցող հու-
շերի հետ: Մեր ծնողները, ազգականները երբեմն մեր մանկական
տարիներից դեպքեր են հիշում, որոնք մենք չենք կարող հիշել: Մեր
կյանքի շատ հիշողություններ իրականում վերհուշեր են այն պատ-
մությունների, որոնք մենք չենք կարող հիշել: Մինչդեռ պատմական
հիշողությունը այն հիշողությունն է, որ մեզ է հասնում միայն պատմա-
կան գրառումների միջոցով: Կոլեկտիվ հիշողությունը՝ ակտիվ ան-
ցյալն է, այն անցյալը, որը նպաստում է մեր ազգային ու սոցիալա-
կան ինքնության ձևավորմանը: Կոլեկտիվ հիշողությունը անհատա-
կան հիշողությունների ի մի բերված պատմությունների այն ամբող-
ջությունն է, որում կարևոր դերը պատկանում է անհատներին: Օրի-
նակ՝ «Ղարաբաղյան շարժման հանրահավաքի մասնակիցներից յու-
րաքանչյուրն ուներ իր անհատական հիշողությունը, սակայն, երբ
որևէ ելույթի ժամանակ կոչ էր արվում հիշել թուրքերի գազանություն-
ները, մասնակիցները վերաճում էին կոլեկտիվ, ոչ անհատական հի-
շողության կրողների խմբի: Այդ տեսակետից դժվար չէ նկատել, որ
կոլեկտիվ հիշողությունը գործողության կամ գործողությունների շար-
քի արդյունք է, ու դրանից հետո՝ կրելով մեր անհատական հիշողու-

⁸⁷ Рикёр П., Память, история, забвение. М., Наука, 2004, с.133.

թյունները, մենք կրում ենք մաս կոլեկտիվ հիշողության որոշակի տարրեր»⁸⁸:

Որպես ավանդույթների վերարտադրման գործիք, հիշողության մեջ արմատական է գիտակցության նախնական կապը անցյալի հետ: Հիշողությունն անցյալին է, իսկ անցյալը տվյալ անհատի տպավորություններն են: Հիշողության այս հատկության շնորհիվ ապահովվում է ժամանակի անընդհատությունը, պահպանվում է ներկայի և անցյալի կապը: Հիշողությունը անցյալը ակտիվացնող միջոց է, անհրաժեշտ տեղեկատվության վերականգման միջոց: Այս տեսակետը համընկնում է այն պատկերացման հետ, որի համաձայն անցյալի և ներկայի միջև կա հստակ սահման, իսկ հիշողությունը միջոց է վերականգնման անցյալը ներկայում: Այն կապող օղակ է սուբյեկտի պատկերացումների և մտածողության միջև և կապված է անցյալի կերպարների պահպանման, ինչպես մաս այդ կերպարների վերարտադրման և վերակառուցման հետ: Սոցիալական հիշողությունը հանդես է գալիս որպես մարդու մշակութային և սոցիալական գործունեության եղանակ: Չնավորելով անհատի և սոցիալական խմբերի փոխազդեցության տիպաբանությունը, այն իր վճռորոշ ազդեցությունն է թողնում թե՛ ընտանիքի, և թե՛ ազգի վրա:

Միևնույն էթնիկ հանրությանը պատկանող մարդկանց միավորող միջոցներից մեկն ընդհանուր սոցիոմշակութային հիշողությունն է, որը հանդիսանում է էթնիկ ինքնությունը ձևավորող համակարգային բաղադրիչ: Ազգային ինքնությունների ձևավորման գործընթացի ամենաբնութագրական գծերից մեկն անցյալի իրողությունների, կոլեկտիվ ու պատմական հիշողության դերի առանձնահատուկ կարևորումն է: Մ. Էլիադեն նկատի ունենալով հենց այդ հանգամանքը՝ գրում է, որ ազգային պատմության նկատմամբ կիրքը մի ընդհանուր միտում է, որը ձևավորվող ազգերի կողմից ծառայեցվում է ապացուցելու, որ իրենք ամենահինն են և ազնվագույնը:⁸⁹

⁸⁸ **Մարության Հ.**, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Եր., «Նորավանք» Գ-ԿՀ, 2006, էջ 27:

⁸⁹ Տե՛ս **Элиаде М.**, Аспекты мифа. М., «Академический Проект», 2010, էջ 184:

Էթնիկ հիշողությունը ևս տարաշերտ է, այն կազմված է պատմական և կոլեկտիվ հիշողություններից: Էթնիկ հիշողություն են նյութական մշակույթի այն կոթողները, որոնց հավաքական կերպով անվանում են «հուշարձան»: Հուշարձան կարող են համարվել ինչպես ուղղակի հիշողությունները, այնպես էլ ոչ ուղղակիորեն այդ նպատակով կառուցված հավատալիքային-պաշտամունքային, աշխարհիկ շինությունները, դրանց համալիրները: Ուղղակի հիշվելու նպատակով հուշարձանների կառուցման շարժառաքիժների թվում, բացի խիստ սուբյեկտիվ շարժառաքիժներից, կարելի է նշել մարդու հիշողության սահմանափակությունը, ինչի հետևանքում անհրաժեշտություն է առաջանում պահպանության արժանի տեղեկատվության մի մասը ամրակայել ֆիզիկական օբյեկտների մեջ, որոնք էլ հենց կոթողներն են: Որպեսզի հիշողությունը անհարկի չծանրաբեռնեն ընդարձակ տեղեկատվություններով և կամ չմոռանան, մարդիկ ձևավորում են դրանց համարժեք խորհրդանիշներ: Ոչ ուղղակիորեն հիշվելու նպատակով կառուցված շինությունները, որոնք մեծ մասամբ աշխարհիկ բնույթի են, հուշարձանի կարգավիճակ կարող են ստանալ իրենց տեքստային կամ արտաքին որևէ առանձնահատկության շնորհիվ, որոնք կարևոր հուշ են պարունակում էթնիկ հանրության անցյալի քաղաքական, տնտեսական, տեխնիկական, սոցիալական, հոգևոր ու մշակութային նվաճումների մասին: Կառուցված լինելով ի պատիվ տարբեր իրադարձությունների ու հանուն որոշակի ակնկալիքների՝ դրանք խտացված տեղեկություն են պարունակում այդ իրողությունների մասին, որոնք կոթողի ինքնության մաս հանդիսանալով նպաստում են նաև ինքնության համար այդ տեղեկատվության կարևորության ծագմանը: Այսպիսով, հուշարձանը ոչ միայն հիշողության ուղղակի կրող է կամ մարմնացում, այլև հանդես է գալիս որպես հիշողություններ և մշակութային դաշտ արարող:

Էթնիկ ընդհանրության համար անցյալի հիշողությունը ոչ թե բեռ է, որը հարկ եղած դեպքում կարելի է թոթափել, այլ հարստություն: Մեր դեպքում, օրինակ, պատմական հիշողությունը դարձավ խորհրդային տասնամյակների ընթացքում ձևավորված բազմաթիվ կաղապարների փորձաքար, մի խոչընդոտ, որի վրա սայթաքեցին,

չկարողացան հաղթահարել շուրջ յոթանասուն տարի քարոզվող խորհրդային պատգամները (ժողովուրդների անխախտ բարեկամություն, քաղաքացիների բարօրության մասին մտածող քաղաքական համակարգ, ամենաարդար դատական համակարգը և այլն): Այս հանգամանքից հետևում է, որ անհատական, կոլեկտիվ և պատմական հիշողությունների միջև չկա անջրպետ և նրանք փոխալայմանավորող ու փոխլրացնող հարաբերությունների մեջ են: Թեև պետք է նկատել, որ հասարակության կոլեկտիվ հիշողությունը տարբերվում է անհատների հիշողությունից, քանի որ իր մեջ ներառում է այն հիշողությունները, որոնք կիսում են հասարակության անդամները: Այն անձնական անցյալների ինտեգրումն է մեկ ընդհանրական անցյալի մեջ, որը մի որոշակի հանրույթի անդամներ հիշում են կոլեկտիվ ձևով: «Մեր հիշողությունները մնում են կոլեկտիվ և հիշեցնում են մեզ մյուսների կողմից, նույնիսկ եթե միայն մենք ենք լինում իրադարձությունների մասնակիցներ կամ տեսնում ենք դրանց առնչվող ինչ-ինչ բաներ: Իրականում մենք երբեք միայնակ չենք: Անցյալի որևէ իրադարձության շուրջ հիշողության վերակառուցումը պետք է սկսվի միմյանց հետ կիսվող գաղափարներից կամ տվյալներից»⁹⁰: Հիշողությունը ճանապարհ է տալիս պատմությանը, երբ մենք կորցնում ենք կապը մեր անցյալի հետ: Անհատական հիշողությունը ի վերջո պատկանում է պատմական հիշողությանը:

Հիշողությունը (վերհիշում) լայն առումով անցյալի վերակառուցումն է ներկայից վերցրած տվյալների միջոցով, մի վերակառուցում, որ նախապատրաստված է ավելի վաղ ժամանակների վերակառուցումներով, որտեղ անցյալի պատկերացումները արդեն փոխված են: Անցյալի իրադարձությունների ու պատկերացումների մասին ժամանակի ընթացքում պարբերաբար նոր տվյալներ են կուտակվում, ընդլայնվում է իմացության շրջանակները, ինչի հետևանքով կարող է ձևավորվել նոր հիշողություն, որը կարող է ավելի մոտ թվալ իրականությանը: Փոխվում են նաև այդ իրականությունը կրող խմբերը,

⁹⁰ Տե՛ս **Մարտիան Հ.**, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Եր., «Նորավանք» Գ.Կ.Հ, 2006, էջ 20:

նրանց հայացքները: «Եթե կոլեկտիվ հիշողությունը իսկապես ան-
ցյալի վերակառուցումն է, եթե այն հարմարեցնում է հին փաստերի
մասին պատկերացումները ներկայի կարծիքներին ու հոգևոր պա-
հանջմունքներին, ապա այդ պարագայում այդ փաստերի ծագման
հարցը պետք է լինի երկրորդական, քանի որ անցյալի ռեալությունն
այլևս անցյալում չէ»⁹¹: Անցյալի պատկերացումները փոխվում են ժա-
մանակի ընթացքում, փոխվում են նաև պատմական իրադարձու-
թյունների նշանակությունները: Ցանկացած պատմական իրադար-
ձություն տարբեր կերպ է գնահատվում տարբեր սերունդների կողմից:
Անցյալի դրույթները, Է. Դյուրկհեյմի համոզմամբ, պարբերական
բնույթ կրող տարեդարձային նշումներն են, հիշատակումներն ու ծե-
սերը, որոնց գործառույթը ոչ թե անցյալի ձևափոխումն է՝ պարտադ-
րելով նրան ծառայել ներկային, այլ անցյալի վերարտադրումը, նրա
կենդանի մնալուն օժանդակելը⁹²: Էդվարդ Շիլզի կարծիքով անցյալն
է կերտում ներկան:⁹³ Նրա համոզմամբ տարեդարձային նշումները,
հիշատակումները մի ճանապարհ են պահանջելու, որտեղ անցյալը
պետք է ինչ-որ բան առաջարկի ներկային: Կայուն հիշողությունները,
ստեղծելով կապեր ողջերի ու մեռածների միջև, ամրացնում են հասա-
րակության «ժամանակավոր ամբողջացումը, ժամանակի ընթացքում
նպաստում են ներդաշնակության, համաձայնության կայացմանը:
Հիշողությունները տեղ են ստեղծում իրենց իսկ հավերժացման հա-
մար»⁹⁴:

Սոցիոմշակութային հիշողության կառուցվածքում կարևորվում է
վերհուշի դերը, որը ստիպում է հիշել ինչ-որ բան և մտածել ինչ-որ բա-
նի մասին: Դա կատարվում է որոշակի ուղեցույցների օգնությամբ:
Դրանք բաժանվում են երկու խմբի՝ ներքին և արտաքին: Առաջին
դեպքում մեծ դեր են խաղում նկարագրությունները, ներքին զգացո-
ղությունը, իսկ երկրորդ դեպքում մեկ առարկայի միջոցով հիշեցնում

⁹¹ Տե՛ս **Մարտիան Հ.**, նշվ. աշխ., էջ 32:

⁹² Տե՛ս **Дюркгейм Э.**, Социология. Ее предмет, метод, предназначение. М., «Канон», 1995, էջ 38:

⁹³ Տե՛ս **Shils E.**, Tradition. Chicago: University of Chicago Press, 1981, էջ 31:

⁹⁴ **Մարտիան Հ.**, նշվ. աշխ., էջ 53:

են մյուսին (նկարներ, գրառումներ և այլն): Երբ ասում ենք, որ սա տուն է, ապա մտովի պատկերացնում ենք նաև այդ տան կենցաղը: Բանն այն է, որ ակնհայտ կարող են լինել ոչ միայն իրականում գոյություն ունեցող առարկաները, այլ պատկերացումները, անցյալի իրադարձությունները, անձնական վերապրումները, երբեմնի տեսածն ու լսածը: Սա էմպիրիկ ներածությունն է, որի միջոցով մենք կարողանում ենք ճշտել, թե ինչպես իրը կարող է լինել մտածմունքի առարկա: Ճարտարապետական օբյեկտը նախ ընկալվում է որպես իրերի հարաբերակցություն, իսկ այնուհետև՝ որպես այդ իրերի նշանակություն: Իսկ ինչո՞վ է ճարտարապետական օբյեկտը, որպես բացառիկ երևույթ, տարբերվում մյուս օբյեկտներից: Որպես էմպիրիկ առարկա, այն չի կարող երևալ, այն միշտ երևում է ելնելով համակարգից, կամ մյուս երևույթների հետ շփվելիս: Դրա կեցությունը միջնորդավորված է տվյալ դարաշրջանի գաղափարներով, գեղագիտական ճաշակով, սոցիոմշակութային ողջ տարրերով:

Սոցիալական հիշողության երևույթ է նաև հուշարձանը, որը իր մեջ միավորում է սոցիալական հիշողության բոլոր կառույցները: «Հուշարձանի նշանակությունը դրված է հենց իր մեջ որպես երևույթ, որը ինչ-որ պահ հանդես է գալիս որպես գիտակցություն, այսինքն տեսանելի է դառնում: Այնուհետ տեղի է ունենում վերարտադրման գործընթացը, որի պատճառը կարող են լինել մշակութային հետաքրքրությունները, մշակույթների երկխոսությունը, իրերի իրական դասավորվածության գործընթացը կամ հանրահայտ անհատները»:⁹⁵ Հուշարձանի համար կարևոր է նրա գտնվելու վայրը, ձևը, քանի որ այդ տարրերից յուրաքանչյուրը հիշողության մեջ արթնացնում է որոշակի վերապրում:

Պետք է նշել, որ կոնկրետ հասարակության արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալական օբյեկտիվ հիշողության մեջ առկա բազմաթիվ այլ արժեքային ենթահամակարգերից, երբեմն այդ համակարգը կարող է օգտագործվել ամբողջությամբ, երբեմն էլ միայն դրա

⁹⁵ **Молодкина Л. В.**, К вопросу о феноменологии памяти/на примере архитектурно-природного памятника/, Вестник Московского университета, 2007, №.6, с. 94.

որոշ տարրերը: Ընդ որում, այդ տարրերը կարող են օգտագործվել ոչ միայն այն տեսքով, ինչպես դրանք ներկայացվել են հետազոտվող համակարգում, այլև պատմական ժամանակաշրջանի շտկումներով և հավելումներով: Որպես կանոն այդ շտկումները պայմանավորվում են հասարակության սոցիալ-դինամիկական փոփոխություններով: Օրինակ՝ «մերձավորի նկատմամբ սերը» կարող է վերածվել միայն «դասակարգային ընկերոջ» կամ ազգակցի ու դավանակցի նկատմամբ սիրո: Սակայն այս առնչությամբ սոցիալական հիշողության հիմնախնդրով զբաղվող շատ հետազոտողների մոտ օրինաչափ հարց է առաջանում. ինչո՞ւ որոշ իրադարձություններ, դեմքեր ու դեպքեր ամրագրվում են հասարակության հիշողության մեջ, իսկ մյուսները՝ մոռացվում: Շատ փիլիսոփաներ, սոցիոլոգներ ու պատմաբաններ գտնում են, որ այդ հարցն անմիջականորեն կապված է հոգեկերտվածքի և ինքնության հետ:⁹⁶ Մովորաբար, մենթալիտետ հասկացությունը մեկնաբանում են որպես անձի (մարդկանց խմբերի) մտածողության ուղղվածության և կերտվածքի հոգեբանական առանձնահատկությունները ներկայացնող սոցիալական ֆենոմեն, որը նպաստում է մարդկային հանրության համախմբմանը, կայունության ամբողջականության պահպանմանը: Մենթալիտետի կազմալուծումը, դրա արդիականացման ընթացքում առաջացած բարդությունները հանգեցնում են սոցիալ-հոգեբանական ճգնաժամերի: Այնուամենայնիվ, մենթալիտետ հասկացության քննարկմամբ ուղի է հարթվում այն ընկալվածան ձևավորման համար, համաձայն որի յուրաքանչյուր կոնկրետ պատմական դարաշրջան, գիտակցությունը վերամշակելով քառտիկ տպավորություններն ու զգացմունքները, ստեղծում է աշխարհի կանոնակարգված պատկեր: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ սոցիալական կեցության մեջ կան սոցիոմշակութային յուրահատուկ մեխանիզմներ, որոնք ընդունակ են կանոնակարգելու սոցիալական տեղեկատվությունը:

⁹⁶ Стів Российская ментальность /материалы «круглого стола»//Вопросы философии, 1994, №1, էջ 25-53:

Սոցիալական հիշողությունը պետք է հետազոտել ոչ թե ելնելով գանգվածային գիտակցության մեջ պատմական կոնկրետ տեղեկությունների առկայության կամ բացակայության հիմքից, այլ ելնելով պատմական զարգացման ընթացքում ձևավորված մտածողական առանձնահատուկ իրողություններից՝ մենթալիտետից: Այդ դեպքում մենթալիտետը հանդես է գալիս որպես անցյալի մասին ժողովրդի յուրահատուկ հիշողություն, բոլոր հանգամանքներում (ներառյալ և աղետալի) ձևավորված իրավիճակին հավատարիմ մնալով մարդկանց մեծաքանակ խմբերի վարքի հոգեբանական դետերմինանտ: Այս առնչությամբ Ա. Ս. Պանարինը նշում է, որ, եթե մենթալիտետը մեկնաբանվի որպես մշակույթ, ապա այդ մշակույթը մի կողմից հանդես է գալիս որպես ավանդույթ, մյուս կողմից՝ որպես «եկեղեցի»:⁹⁷ Ընդամիս, Ա. Ս. Պանարինը գտնում է, որ ավանդույթները կարող են արգելակել որոշակի նորարարությունների ներմուծմանը, եթե դրանք չեն համապատասխանում ավանդույթների նախնական հիմքերին ու նորմերին: Մենթալիտետի մյուս՝ «եկեղեցական», մասը ընդունակ է լեգիտիմացնել այս կամ այն նախաձեռնությունները, հաճախ հոգևոր սանկցիաներ տրամադրել կատարվող փոփոխություններին: Պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ վերափոխիչ կամքը բախվելով սոցիոմշակութային թաքնված արգելապատնեշին, ի սպառ անհետացել է: Այս դեպքում խոսքը վերաբերում է սոցիալական կեցության ինվարիանտներին, որոնց մկատմամբ ոտնձգությունը հղի է վտանգավոր ձևախեղումներով: «Պատմության կամքի» կամայականությունները, ինչպես վկայում են սոցիալական էկոլոգիան և մշակութային մարդաբանությունը, այսօր ուղղված են բնության, մշակույթի ու պատմության վտանգավոր ձևափոխմանը, երբեմն էլ դրանց ձևախեղմանը:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ սոցիալական հիշողությունը օբյեկտիվացված և ինտերսուբյեկտիվացված բնույթի փոխգործակցության գործընթացների ամբողջությունն է, որի միջոցով իրականացվում է որոշակի տեղեկատվության պահպանումը, մեկնաբա-

⁹⁷ См. А. С. Панарин, «Народ без элиты», М., Алгоритм, «Эксмо», 2006, էջ 96:

նումը և փոխանցումը: Պետք է ընդգծել, որ տարիներով, անգամ հարյուրամյակներով պահպանված ցանկացած տեղեկատվություն ժամանակակիցներին և ապագա սերունդներին անհրաժեշտ է նրա համար, որպեսզի կուտակված գիտելիքների և փորձի հիման վրա, հաշվառելով դրանց դրական և բացասական նշանակությունը, հնարավոր լինի պահպանելով ինքնությունը՝ այն արդիականացնել: Հետևաբար, բնական է, որ ցանկացած հասարակության սոցիալական հիշողությունը կապվում է այդ հիշողության, այսպես կոչված, արտաքին և ներքին կողմերի հետ: Ամբողջականությունը, որի մասին վերը խոսվում էր, ստեղծվում է առանձին մասերից, ընդ որում, ոչ թե որպես դրանց գումար, այլ որպես դրանց փոխներթափանցում: Սոցիալական հիշողությունը կապվում է ոչ միայն առանձին հանրույթների իրավական և մշակութային նորմերի մասին գիտելիքների և փորձի հետ, այլ այդ հասարակությունը կազմող առանձին ընտանիքների և անհատների կողմից դրանց ընկալման և գործադրման հետ:

Համակարգային որոշակի կարգը պահպանելու առումով սոցիալական հիշողությունը բավականին կարևոր գործիք է, առավել ևս, որ այդ հիշողությունը պարբերաբար լրացվելու է նաև սոցիալական սուբյեկտների շահերից բխող նոր մեկնաբանություններով: Անցյալի իրադարձությունների մասին որևէ անհատի մեկնաբանությունները նրա հաջորդող սերունդներին հնարավորություն կընձեռեն իրենց կյանքի պայմանները համադրել պատմական անցած փուլերի հետ: Այդ դեպքում, որպես կանոն, նրանք ձգտում են գտնել այն որոշակի առանցքը, որի շուրջը կարելի է համախմբվել և, հաշվի առնելով նախորդ սերունդների փորձը, հիմքեր նախապատրաստել սեփական փորձով հարստացված արժեհամակարգը ապագա սերունդներին փոխանցելու համար:

Ժամանակակից աշխարհում մման ձևով սոցիալական հիշողության օգտագործման օրինակները բազմաթիվ են, դրանցից գուցե ամենավառը կրթության խորհրդային նախապատերազմյան համակարգն է, որը ներառել էր Ռուսական կայսրության մեջ դարերով ձևավորված ավանդույթները: Այդ ավանդույթները արդյունավետորեն իրացվում էին նաև խորհրդային շրջանում (իհարկե, գաղափարախո-

սակյան հստակ ճշգրտումներից հետո): Այս օրինակը վկայում է, որ սովանդույթները փոխանցվել են սուբյեկտ-սուբյեկտային մակարդակում:

Սուբյեկտի և սոցիալական հասարակության փոխազդեցությունը պայմանավորված է կոնկրետ պետությունում տվյալ պատմական փուլում գերիշխող գաղափարախոսության ընդունման կամ մերժման հանգամանքով: Միայն այդ դեպքում կարելի է խոսել սոցիալական հիշողության ներքին կողմի մասին: Սոցիալական հիշողության ներքին կողմը կապված է առանձին սուբյեկտների և հասարակության փոխգործակցության հետ՝ սակայն հակառակ հերթականությամբ, այսինքն՝ սոցիալական հասարակություն-սոցիալական խումբ-սուբյեկտ (դու): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ սոցիալական հիշողության մասին խոսելու համար անհրաժեշտ է անդրադառնալ առանձին սուբյեկտների հիշողության մակարդակում հասարակության հիշողությանը՝ անպայմանորեն հաշվի առնելով հասարակության և առանձին մարդկանց հիշողության վրա համակարգի և սոցիալական նորմերի ազդեցությունը: Հասարակության մեջ տեղի ունեցող բոլոր փոխակերպումները այս կամ այն կերպ անդրադառնում են առանձին սուբյեկտների և սոցիալական խմբերի պահանջ-մունքների փոփոխության վրա, որոնցով էլ պայմանավորված՝ համապատասխան փոփոխություններ են տեղի ունենում նաև հասարակության վարքի նորմերի և արժեքների մասին պատկերացումներում:

Քննարկելով սոցիալական հիշողության հիմնախնդիրը, անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու քաղաքական, տնտեսական, մշակութային բնույթի տեղեկատվությանը, քանի որ, ոչ քաղաքականությունը, ոչ տնտեսությունը չեն կարող գոյատևել առանց սոցիալական նորմերի: Հայտնի է, որ «սոցիոմշակութային» հասկացությունը ինչ-որ բանի նկարագրության հնարավորությունն է մշակույթի և սոցիալականության միասնության տեսանկյունից: Այդ միասնությունը ձևավորվում և վերափոխվում է մարդկային գործունեության հիմքի վրա: Մշակույթը, ընդհանուր առմամբ, կարելի է դիտարկել որպես մարդկային գործունեության կայուն ձևերի ամբողջություն, առանց որի այն չի կարող վերարտադրվել, ուստի և՛ գոյություն ունե-

նալ: Այլ կերպ ասած, սոցիոմշակութային գործընթացը նպատակամղված է համակեցության նորմերի և սկզբունքների ուղղորդված զարգացմանը:

Յանկացած սոցիալական գործընթաց ունի զարգացման իր տրամաբանությունը՝ օրինաչափ է, փուլային, պայմանավորված է ներքին գործոններով և արտաքին պայմաններով: Այդ տեսակետից, օրինակ, սոցիոմշակութային գործընթացների բնույթը որոշվում է հասարակության մեջ մարդու գոյության օբյեկտիվ և սուբյեկտիվ օրինաչափությունների համատեքստում: Ընդ որում, մարդու գոյության օբյեկտիվ օրինաչափությունները դիտարկվում են որպես կոնկրետ միջավայրին բնորոշ գործընթացների ամբողջություն, որպես կյանքին բնորոշ կեցության օրենքներ, իսկ սուբյեկտիվ օրինաչափությունները, որոնք պայմանավորված են գործունեության կոնկրետ սուբյեկտին բնորոշ առանձնահատկություններով. որպես գործունեության տեսակի, բովանդակության և ձևերի ամբողջություն: Այս դեպքում սուբյեկտիվ օրինաչափությունները մեծապես կախված են տվյալ հասարակության մեջ գործող սուբյեկտների ինտելեկտուալ, ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական մակարդակներից: Բացի այդ, սուբյեկտիվ օրինաչափությունների դրսևորումը կախված է այն հանգամանքից, թե որքանով են մարդիկ գիտակցում իրենց գոյության և գործունեության նպատակների ամբողջականությունը և օգտագործում են այդ նպատակներին հասնելու համար համապատասխան մեթոդներ և միջոցներ:

Ինչ վերաբերում է սոցիոմշակութային գործընթացների փուլայնության խնդրին, ապա պետք է նշել, որ որոշակի փուլերի զարգացման առնչությամբ գիտնականները տարբեր կարծիքներ ունեն, նրանցից ոմանք գտնում են, որ սոցիոմշակութային գործընթացները անհավասարաչափ գծային գործընթացներ են, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ ժամանակի մեջ ծավալվող իրավիճակների հաջորդականություն: Չարգացման յուրաքանչյուր փուլ մյուսներից որակապես տարբերվում է գործընթացների և նրա մեջ ներառված սուբյեկտների նոր իրավիճակով, իսկ մի փուլից մյուսին անցման մեխանիզմը հանդես է գալիս համաձայն քանակական փոփոխություններից որակականին

անցման սկզբունքի: Համակարգի զարգացումը ոչ միայն հավասարաչափ չէ, այլև նույն տեմպով գործընթացի և նրա մեջ ներառված սուբյեկտների կատարելագործման «վերընթաց» ուղի չէ: Մի փուլից մյուսին անցումը իրականացվում է այսպես կոչված «ճգնաժամային կետերում», երբ որակական մի վիճակից մյուսին անցումը կատարվում է կտրուկ անցման միջոցով: Այս դեպքում սոցիոմշակութային գործընթացը ներկայանում է որպես հարաբերականորեն հանգիստ փուլերի և կտրուկ թռիչքների հերթագայություն, որպես զարգացման յուրահատուկ «ընդմիջում», որը գործընթացի մի շրջափուլը գատում է մյուսից: Այսպիսով, սոցիոմշակութային գործընթացները կարելի է դիտարկել որպես հասարակության զարգացմանն ուղղված դինամիկ փոփոխություններով հագեցված վերափոխիչ գործունեություն: Սոցիոմշակութային գործընթացների կարևոր գործոններից մեկը սուբյեկտների վերիրադրային ակտիվությունն է, որն ուղղորդում է հասարակության և այն կազմավորող անձանց դինամիկ զարգացման գործընթացները: «Վերիրադրային ակտիվությունը» համակարգում իրադրության հանդեպ անձնային ակտիվության այն տեսակն է, որը կարելի է դիտարկել որպես իրացվող գործունեության շրջանակներում նորի, չպլանավորվածի հանդեպ ձգտում: Դա իրադրային (կենսական, մասնագիտական, պատմական, մշակութային և այլն) պահանջների մակարդակից վեր կանգնելու մարդկային կարողությունն է:

Տվյալ հետազոտության շրջանակներում սոցիոմշակութային գործընթացի արտաքին պայմանների դերում հանդես է գալիս պահանջարկված հեռանկարային ուղղությամբ սոցիալական համակարգի՝ դինամիկ զարգացման առնչությամբ հասարակության շահագրգռությունը: Այդ իմաստով, սոցիոմշակութային գործընթացը իրականության նկարագրության եղանակներից մեկն է, որի դեպքում հետազոտողը հիմնվում է այն ակտուալ սկզբունքների վրա, որոնք իր սեփական փորձի և աշխարհայացքի արդյունքն են: Սոցիոմշակութային գործընթացի հիմնական սկզբունքներն են.

Homo activus սկզբունքը, որի համաձայն մարդը կենսասոցիոմշակութային արարած է, որը գիտակցում է, որ իր գործողությունները

այլ սուբյեկտների հետ փոխգործակցության տարր են:⁹⁸ Ի տարբերություն օբյեկտիվիստական հարացույցի, որտեղ հասարակությունն ընկալվում է որպես անհատի կամքից և գործողություններից անկախ գոյություն ունեցող և զարգացող համակարգ, սուբյեկտիվիստական մոտեցման դեպքում անհատը, որպես սոցիալական գործողության անմիջական մասնակից, դառնում է հետազոտության անմիջական օբյեկտ և դիտարկվում է որպես կամքի ազատությամբ օժտված առաջնային և ինքնաբավ ռեալություն, որն իր գործողություններով ազդում է սոցիալական նորմերի ձևավորման և գործառնության վրա:

Էվոլյուցիայի սկզբունքը նախորդ սկզբունքի տրամաբանական զարգացումն է: Այն ներկայացնում է որևէ համակարգի զարգացման այնպիսի կարողականությունը, որը կարող է հետազոտվել ինչպես դասական, այնպես էլ սինթեզետիկական մեթոդաբանության շրջանակներում: «Գլխավորը Էվոլյուցիայի, որպես գծային գործընթացի, և այդ հասկացության շրջափուլային (ցիկլիկ) մեկնաբանության տարբերակն է»:⁹⁹

Անպրոպոսոցիետիկալ սկզբունքը հնարավորություն է ընձեռում բացահայտել հասարակության Էվոլյուցիայի շարժիչ ուժերը և այդ գործընթացում homo activus-ի դերն ու նշանակությունը: Այդ սկզբունքի համաձայն homo activus-ը կարող է համապատասխանել (կամ չհամապատասխանել) այն հասարակությանը, որտեղ նա ապրում է: Սոցիոմշակութային միջավայրի փոփոխությունը պայմանավորված է հենց այդ հանգամանքով:

Սոցիոմշակութային մոտեցումը, դրսևորման տարբեր ձևերով հանդերձ, հիմնվում է պատմականության սկզբունքի վրա, որը հասարակական ինստիտուտների գործառնության առանձնահատկություններն ընթրնելիս խիստ կարևորում է հասարակության պատմական հիշողության անհրաժեշտությունը: Ընդամին, պետք է ընդգծել, որ սոցիոմշակութային մոտեցման պարագայում հասարակությունը և մշա-

⁹⁸ Стів Лэппин Н.И., Социокультурный подход и социально-функциональные структуры// Социологические исследования, № 7, 2000, էջ 7:

⁹⁹ Sorokin P., Toynbee's Philosophy of History // The Pattern of the Past: can we determine it?-Boston:The Beacon Press, 1949, էջ 96:

կույթը պետք է միտված լինեն փոխկապակցող շփման կայուն կետերի որոնումներին, քանի որ շփման այդ կետերը ապահովում են մշակութային մեխանիզմների փոխգործակցության կայունության որոշակի աճին, ուստի նաև՝ հասարակության ամբողջականության պահպանմանը: Սակայն, սոցիումի և նրա տարրերի տիպականացման և դասակարգման դեպքում սոցիոմշակութային մոտեցումը բախվում է որոշակի խնդիրների հետ (խոսքը վերաբերում է «ավանդականի» և «նորարարականի» փոխհարաբերությունը)¹⁰⁰:

Ելնելով սոցիալական համակարգի կառուցարկման եղանակից, սոցիոմշակութային հիշողությունը, ինչպես և մարդկային սովորական հիշողությունը, կապված է որոշակի թեմատիկ տեղեկատվական փոխանակության հետ և նպաստում է սոցիոմշակութային հիշողության կողմից ստեղծված տեղեկատվական պաշարի զարգացմանը: Որպես կանոն, տեղեկատվական պաշարի միջավայրը ձևավորում է նախորդ սերունդների կողմից թողնված բանավոր, գրավոր աղբյուրների և գեղարվեստական ստեղծագործությունների հիման վրա: Ընդ որում, այդ միջավայրը կազմված է անցյալի, ներկայի և ապագայի արժեքներից: Նկատենք, սակայն, որ եռանդամ ժամանակի բաղադրիչներից (անցյալ, ներկա, ապագա) մեկը՝ ներկան, ավանդական ապրելակերպի կտրուկ փոխակերպումների հետևանքով, սկսում է ավելի դերակատարում ունենալ հասարակական կյանքում: Թեև պետք է նշել, որ դա հատուկ՝ դեպի անցյալն ուղղված և պատմական իրադարձությունների կասկածները փոխհատուցող ներկա է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ «հիշողության մարտահրավեր»: Այս առնչությամբ հատուկ իմաստ և նշանակություն է ստանում այսպես կոչված «տեղեկատվական–հաղորդակցական հեղափոխությունը»:

Փաստորեն ժամանակակից սոցիալական համակարգերում և ենթահամակարգերում տարածաժամանակային կապերն ու փոխհարաբերությունները բոլորովին այլ կերպ են կառուցվում: Մասնավորապես, ապագայի հեռանկարի կառուցարկման պարագայում այժմ

¹⁰⁰ Стен **Лапин Н.И., Беляев Л.А.**, Кризисный социум. Наше общество в трех изменениях, М., ИФРАН, 1994, էջ 36:

ավելի շատ կողմնորոշվում են դեպի «իրականության զանգվածային լրատվական միասնական» կառուցակարգը (Ն.Լուման):¹⁰¹ Մի բան, սակայն, ակնհայտ է, որ այն ամենը, ինչը ստեղծվում է ներկայում, հիմնվում է տվյալ հասարակության սոցիոմշակութային ավանդույթների վրա, ինչը վկայում է, որ սոցիոմշակութային հիշողությունը հանդես է գալիս որպես հասարակության սոցիալական, կրթական, մշակութային, քաղաքական, գեղարվեստական ավանդույթների հետազոտման գործիք, որի օգնությամբ պետության և ազգի սոցիոմշակութային հիշողության մեջ ամրագրված ավանդական մեթոդների հիմքի վրա ձևավորվում է նորարարական նոր համակարգը:

Սոցիալական համակարգի կառուցարկման մեջ դիմամիկ փոփոխությունները, որպես կանոն, տեղի են ունենում ժամանակի ընթացքում սոցիալական նորմերի և օրենքների փոփոխություններին զուգընթաց: Բնական է, որ այդ կոնկրետ համակարգը կազմավորող անհատների զարգացումը կարող է տարբեր լինել: Այդ տարբերությունը, ինչպես վկայում է պրակտիկան, պայմանավորված է այն հանգամանքով, թե մեկնարկային ինչ պայմաններից է տվյալ սուբյեկտը սկսել իր գործունեությունը (զարգացման պայմանները, դաստիարակության միջոցները և այլն): Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ զարգացման ընթացքը կախված է նրանից, թե մարդիկ տվյալ համակարգի տարբեր ներկայացուցիչների հետ երկխոսության մեջ ներառվելիս ինչ կենսադիրքորոշումներ ունեն: Բանն այն է, որ սոցիալական համակարգի կառուցարկման արդյունավետությունը, զարգացման որակն ու փոխակերպվելու ներունակությունները կախված են փոխազդեցությունների ընկալման հնարավորությունից և որոշակի հոգեբանական միջավայրի ստեղծումից: Որպես կանոն, այդ փոխազդեցությունները կառուցվում են սոցիոմշակութային հիշողության հիմքի վրա և հանդիսանում են սոցիալական տվյալ համակարգի արմատական, ավանդական արժեքների ստեղծման շարժիչ ուժերը:

¹⁰¹ St'u Луман Н., Общество общества. Часть 1, Общество как социальная система. М., «Логос», 2004, էջ 161:

Հիմք ընդունելով այն դրույթը, որ ցանկացած սոցիալական հանակարգ կենդանի օրգանիզմ է, կարելի է ենթադրել, որ սոցիոմշակութային հիշողությունը պետք է օժտված լինի այնպիսի հատկություններով, ինչպիսիք են կարճատևությունը, երկարատևությունը և օպերատիվությունը: Ավելին, ելնելով այն պնդումից, որ սոցիոմշակութային հիշողությունը ազդում է հասարակության զարգացման օրենքների և նորմերի մասին ավանդական պատկերացումների ձևավորման վրա, կարելի է եզրահանգել, որ ավանդույթները նույնպես կարող են լինել երկարատև, կարճատև և օպերատիվ: Այս առնչությամբ ծագում է սոցիոմշակութային հիշողության և ավանդույթների վերոնշյալ բնութագրերն առանձին–առանձին քննարկելու անհրաժեշտություն:

Սոցիոմշակութային կարճատև հիշողությունը հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում կրկնվող իրադարձությունների, հարաբերությունների և արժեքների ամբողջության ամրագրումն է: Սոցիոմշակութային կարճատև հիշողության առանձնահատկությունն այն է, որ կարող է արտամղել (կամ փոխարինել) դեռևս չամրագրված տեղեկատվությունը: Այս հատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր տեղեկատվության ի հայտ գալը, կոնկրետ իրադարձությունների կրկնության անհնարինությունը անդառնալիորեն արտամղում են այն տեղեկատվությունը, որը միաժամանակ արդիական էր:

Երկարատև սոցիոմշակութային հիշողությունը որևէ տեղեկատվության երկարաժամկետ պահպանման և փոխանցման գործառույթ է կատարում և օգտագործում է ոչ միայն կոնկրետ հասարակությանը բնորոշ ներքին, տեղային, այլև արտաքին, համաքաղաքակրթական արժեքներ ու նորմեր: Սոցիոմշակութային երկարատև հիշողության մեջ պահպանվող տեղեկատվությունը անընդհատ վերարտադրվում է, ընդ որում, տվյալ հանակարգի սոցիալական սուբյեկտները դրա համար վերհիշման հատուկ ջանքեր չեն գործադրում: Սոցիոմշակութային երկարատև հիշողությունը հնարավորություն է ընձեռում անհրաժեշտ պահին օգտագործել նախորդ սերունդների կողմից ամբարված նախընթաց փորձն ու գիտելիքները, հմտություններն ու կարողությունները:

Սոցիոմշակութային օպերատիվ հիշողությունը երկարատև հիշողության այն տեսակն է, որը հնարավորություն է ընձեռնում արագորեն գտնել կոնկրետ իրավիճակին բնորոշ խնդրի անհրաժեշտ լուծումը: Երբեմն սոցիոմշակութային մնան հիշողությունն անվանում են արտակարգ, անհետաձգելի, քանի որ դրա անհրաժեշտությունն առաջանում է հասարակության մեջ ծագող բեկումնային, ճգնաժամային իրավիճակներում:

Տևական փորձի հիման վրա ստեղծված ավանդույթները սերնդեսերունդ փոխանցվելով ներառվում են մարդկանց ամենօրյա կենսագործունեության մեջ: Հաջորդող սերունդների կողմից ավանդույթների պահանջված լինելու հանգամանքը դրանց երկարատևության գրավականն է: Այսպիսով, երկար ժամանակ գործառնող ավանդույթները սոցիոմշակութային երկարատև հիշողության արդյունք են և հենց այդ պատճառով էլ դրանք պահպանում են իրենց մասին կուտակված տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է կարճատև ավանդույթներին, ապա դրանք հաջորդ սերունդների կենսագործունեության մեջ արձագանք չգտած այն արժեքներն ու հարաբերություններն են, որոնք գործառնական նշանակություն ունեն միայն հարաբերականորեն կարճ պատմական ժամանակահատվածում: Սովորաբար մնան ավանդույթներից կամ հրաժարվում են, կամ փոխակերպում և նոր իմաստ են հաղորդում:

Օպերատիվ (կամ անհրաժեշտ) ավանդույթները շրջանառվում են հատկապես այն ժամանակ, երբ անհրաժեշտ է իրականացնել գործունեության կոնկրետ տեսակ: Հասարակական համակարգի անցումային փուլերում, օրինակ, մարդիկ ապավինում են օպերատիվ ավանդույթներին, քանի որ դրանք ընկալվում են որպես կյանքի կազմակերպման ավելի արդյունավետ միջոցներ: Այսպիսով, սոցիալական հիշողության յուրաքանչյուր տեսակ պայմանավորում է ավանդույթների գոյության ու գործառության ժամկետը:

Հիշել, նշանակում է ոչ միայն ընդունել, ստանալ անցյալի կերպարը, այլև փնտրել, ինչ-որ բան անել: Սա նշանակում է, որ հիշողությունը աշխատում է: Հիշողության իրականացումը նրա օգտագործումն է, հետևաբար հիշողության ոչ ճիշտ օգտագործումը ենթադրում

է նաև խախտման հնարավորություն: «Հիշողության ոչ ճիշտ օգտագործումից բխում է, որ ճշմարտությունը վտանգվում է: Բազմաթիվ արհեստավարժներ՝ բժիշկներ, գիտնականներ, իրավաբաններ, ինժեներներ, ուսուցիչներ հաճախ խուսափում են տեղեկատվություն հիշելուց, որը պարունակվում է արձանագրություններում, հարցման թերթիկներում: Նրանք բոլորը օգտվում են գործող հիշողությունից»¹⁰²:

Սոցիալական համակարգի կառուցարկման մեջ ցանկացած երկարաժամկետ առաքելություն՝ կապված սերունդների շարունակական գործունեության հետ, ենթադրում է այդ առաքելության գիտակցման, պահպանման և անաղարտ փոխանցման շարունակական գործընթաց: Հակառակ պարագայում առաքելությունն ընդհատվում է և խափանվում: Իսկ պահպանել և փոխանցել, նշանակում է սերնդեսերունդ համակողմանի իրազեկել նախորդ պատմությունը, դաստիարակել և ուսուցանել այնպես, որ յուրաքանչյուր սերունդ օրգանապես զգա մի ընդհանուր պատմական շղթայի մեջ իր, որպես հերթական օղակի, անելիքն ու պատասխանատվությունը: Ակնհայտ է, որ սերնդափոխության հիմքում պետք է ընկած լինեն ոչ թե մարդու հարավոփոխ անձնական նախասիրություններն, այլ նախնիներից ժառանգած կենսափորձն ու համամարդկային արժեքները:

Ելնելով վերոգրյալից, կարելի է եզրակացնել, որ հասարակությունը սոցիոմշակութային հիշողությունն ու ավանդույթները օգտագործում է ոչ միայն համակարգի բարեփոխման խնդիրների լուծման նպատակով, այլև դրանց օգնությամբ հաջորդ սերունդների արդյունավետ կենսագործունեության համար հիմքեր է նախապատրաստում նորանալով և կամրջելով անցյալն ու գալիքը:

Բայց որպեսզի ավանդույթները սոցիալական վերարտադրության բարդ ու հակասական գործընթացի մաս կազմեն, պետք է ներառվեն սոցիոմշակութային առօրեականության մեջ:

¹⁰² Рикёр П., Память, история, забвение. М., «Наука», 2004, с. 89:

2.2 Ավանդույթները որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմ

Սոցիոմշակութային առօրեականության մեջ մարդկանց ներառվածության խնդիրը հետազոտելու համար նախևառաջ անհրաժեշտ է հասկանալ, թե ի՞նչ է առօրեականությունը: Բանն այն է, որ այդ եզրույթի միջոցով, որպես կանոն, ներկայացվում է սոցիալական իրականությունը, մարդու կենսագործունեության բնական միջավայրը, սոցիոմշակութային ամբողջական աշխարհը: Դա սովորական դարձած այն ոլորտն է, որը ամենօրյա կյանքում ընկալվում է որպես հարմարավետության գոտի: Սոցիալական առօրեականությունը կապված է մարդու մարդկայնացման գործընթացի հետ: «Ինչպե՞ս ապրել» հարցադրումը, որպես կանոն, այստեղ է առաջանում, այստեղ է, որ յուրաքանչյուր մարդ փորձի և սխալի մեթոդով ձեռք է բերում այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են սեփական, մտերմիկ աշխարհը ստեղծելու համար: Առօրեականության ոլորտում են ծագում և գործում ավանդույթները, որով էլ ընդգծվում է ավանդույթների ռեալ կապվածությունը ամենօրյա հետաքրքրությունների ու պահանջմունքների հետ:

Առօրեականությունը մի կողմից կապված է մարդու կողմից աշխարհի բնական ընկալման ամենօրյա խնդիրների, իսկ մյուս կողմից դրանց իմաստավորման և վերամշակման հետ: Է. Հուսեռլը իր «Եվրոպական գիտությունների ճգնաժամը և տրանսցենդենտալ ֆենոմենոլոգիան» աշխատության մեջ կոչ է անում ճանաչողության մեջ ոչ միայն ընդգրկել, այլև հենվել նախագիտական տվյալների, մարդու «կենսաաշխարհի» նախապրեդիկատային փորձի վրա:¹⁰³ Է. Հուսեռլի համար կենսաաշխարհը բնական առօրյա գիտակցության մինչդեռֆլեքսային ակնհայտությունների աշխարհն է, որն ընկալված է բնական դիրքորոշմամբ: Է. Հուսեռլը առաջ է քաշում բնական դիրքորոշման սկզբունքը՝ որպես աշխարհի հանդեպ նախվ վերաբերմունք, հա-

¹⁰³ Гуссерль Э., Кризис Европейских наук и трансцендентальная феноменология. Санкт Петербургский университет, «Владимир Даль», 2004, с.154.

մածայն որի՝ իրերը դիտվում են որպես սուբյեկտից դուրս, տարածության և ժամանակի մեջ գոյություն ունեցող: Այսպիսի բնական ընկալման դեպքում մարդն իրեն ընդունում է ոչ թե որպես իր գիտակցության մեջ գոյություն ունեցող պատկերներ, այլ որպես գիտակցությանը տրանսցենդենտ ֆիզիկական իրականություն: Կենսաշխարհի ուսումնասիրությունը անհրաժեշտ է որպեսզի հասկանալի դառնա, թե ինչպես են նրա հիմքի վրա ձևավորվում գիտելիքի բոլոր համակարգերը: Քանի որ մարդու «կենսաշխարհը» անմիջական ակնհայտությունների, սպրումների աշխարհ է, ուստի առօրեականությունը կապված է «կենսաշխարհ» հասկացության հետ:

Առօրյա սոցիոմշակութային կենսաշխարհը մարդկային կենսագործունեության «բնական», ակնհայտ պայման և սոցիալական իրականության յուրահատուկ ոլորտ է:

Սոցիալական ֆենոմենոլոգիայի դպրոցի հիմնադիրներից Ա. Շյուցը անդրադարձել է կենսաշխարհի առօրյա բնույթին, ինչը հնարավորություն տվեց ներմուծելու *առօրեականություն* հասկացությունը: Ա. Շյուցը ցույց է տալիս, որ մարդկային սուբյեկտիվությունն առավել ամբողջական և հաջորդական իրագործվում է առօրեականության աշխարհում: Առօրեականությունը մարդկային փորձի ոլորտներից մեկն է, որը բնորոշվում է ընկալման ձևերով և աշխարհի իմաստավորմամբ, որը առաջ է գալիս աշխատանքի արդյունքում: Որպես այդպիսին առօրեականությունը «բարձրագույն իրականություն» է, այն հիմք է, որի միջոցով ձևավորվում են մյուս փորձերի աշխարհները: Ա. Շյուցը գտնում էր, որ առօրեականության ոլորտի առանձնահատկություններից են աշխատանքային գործունեությունը, աշխարհի գոյության հանդեպ վստահությունը, կյանքի նկատմամբ լարված վերաբերմունքը, սոցիալականության յուրահատուկ ձևը և այլն:¹⁰⁴ Առօրեականությունը մարդկային փորձի այն ոլորտն է, որը նկարագրվում է աշխատանքային գործունեության հիման վրա ձևա-

¹⁰⁴ Стів Шюці А., Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии, М., «Общественное мнение», 2003, էջ 289:

վորված՝ աշխարհի ընկալման և իմաստավորման յուրահատուկ ձևով:

Ի. Տ. Կասավինի կարծիքով անճնային կյանքի կազմակերպումը գործունեության և գիտելիքի (ռացիոնալ, թե արտառացիոնալ) հատուկ ինտեգրալ տիպ է:¹⁰⁵ Ի դեպ, առօրեականության հետազոտությունը պետք է իրականացվի կեցության ամենօրյա-պրակտիկ ըմբռնման տեսանկյունից, ըստ որի առօրեականությունն ընկալվում է որպես սովորական, կանոնակարգված և մտերմիկ իրողություն: Այն մարդկային կյանքի կարգավորվածությունն է, կարգավորված իրականությունը, որտեղ երևույթները արդեն իսկ որոշակիորեն դասակարգված են, ինչը կախված չէ անհատի կամքից ու ցանկությունից: Փաստորեն, առօրեականությունը օբյեկտիվացված է, արտաքին է անհատի նկատմամբ:

Առօրեականության հիմնախնդրին անդրադարձել են Պիտեր Բերգերը և Թոմաս Լուկմանը: Առօրեականությունը դիտարկելով իբրև յուրահատուկ տիպի իրականություն, այն բնութագրում են որպես իրականության մի տեսակ, որը մեկնաբանվում է հասարակության շարքային անդամների կողմից՝ ստանալով սուբյեկտիվ իմաստ, իբրև մի ընդհանրական պատկեր: Սուբյեկտն այն ընկալում է բնական դիքորոշմամբ՝ որպես կարգավորված ռեալություն:¹⁰⁶ Հասարակության անդամներն, իրենց սուբյեկտիվորեն իմաստավորված վարքում, առօրյա կյանքի աշխարհը համարում են ոչ միայն ինքնին հասկացվող իրականություն. դա աշխարհ է, որը ստեղծվում է նրանց մտքերում ու գործողություններում: Առօրյա կյանքի իրականությունը կազմակերպվում է «այստեղ»՝ մարդու մարմնի. և «այս պահին»՝ մարդու ներկա ժամանակի շուրջ, սակայն իրականությունն անմիջական ներկայությամբ չի սահմանափակվում, այն իր մեջ ներառում է նաև երևույթներ, որոնք տրված չեն «այստեղ» և «այս պահին»:¹⁰⁷

¹⁰⁵ St' u Касавин И.Т., Щавелев С.П., Анализ повседневности М., «Канон», 2004, էջ 186:

¹⁰⁶ St' u Бергер П, Лукман Т., Социальное конструирование реальности: Трактат по социологии знания, М., «Медиум», 1995, с. 67:

¹⁰⁷ St' u նշվ. աշխ., էջ 41-43:

Նկատենք նաև, որ առօրեականությունն անխափան հարկապարհում է անձնային ներուժի, կյանքի կոնկրետ ընթացքի հետ, դա այն է, ինչը կարող է տեղի ունենալ հենց այստեղ և հենց այս պահին: Երևույթները ու գործընթացները այնքանով են իրական, որքանով մոտեցված են անհատին ժամանակի ու տարածության մեջ: Մակայն, առօրեականությունը և նրա հատկանիշները կապված են ոչ միայն հասարակության նյութական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների, այլև անձի կոնկրետ դիրքորոշումների և բարոյական կեցության փոխակերպումների հետ: Առօրեականությունը կարելի է ներկայացնել որպես կոնկրետ համակարգում գտնվող մարդու նյութական և հոգևոր գործունեության համադրություն, ինչի արդյունքում հասարակության մեջ ձևավորվում են սոցիոմշակութային կողմնորոշումները:

Մարդն ինչպիսի գործով էլ զբաղվի, միշտ մնում է ընդգրկված ամենօրյա սովորական կենսագործունեության մեջ՝ միաժամանակ կողմնորոշվելով անհատական ու անկրկնելի իրավիճակների բարդություններում, որոնք կազմում են նրա «առկա կեցության» աշխարհը: Մարդիկ իրենց առօրյա կյանքում չեն կարող իրականացնել համատեղ գործունեություն, շփում, եթե չառաջնորդվեն հասարակական որոշակի դիրքորոշումներով, քանի որ մարդկանց վարքի սոցիալական կարգավորումը պայմանավորված է նրանց կենսագործունեության պահանջմունքներով: Ավանդույթները ներառում են մարդկանց վարքի կանոններն ու նորմերը և այդ տեսանկյունից հանդես են գալիս որպես մարդկանց կենսագործունեության կարգավորիչներ: Եվ, քանի որ, ավանդույթները սերնդեսերունդ ապահովում են մարդկային փորձի պահպանումը, վերարտադրումը և փոխանցումը ուստի դրանք հանդես են գալիս, որպես սոցիոմշակութային առօրեականության կարևոր բաղադրիչներ, որոնք հնարավորություն են ընձեռում մարդկանց ներառվելու սոցիոմշակութային առօրեականության մեջ:

Ժամանակակից փիլիսոփայության տեսանկյունից առօրեականության աշխարհի փիլիսոփայական-մեթոդաբանական հիմքերի որոշարկումը անհրաժեշտ է այնպիսի եզրույթների փիլիսոփայական բովանդակությունը ներկայացնելու համար, ինչպիսիք են առօրյա

գիտելիք և առօրեական գիտակցություն հասկացությունները: Առօրյա գիտելիքը իրականության կառուցարկման հիմնական միջոց է: Ցանկացած գիտելիք, կախված սոցիալական համատեքստից, փոխանցվում է սերնդեսերունդ, ձևավոխվում է և պայմանավորում անհատների գործողությունները և այն, թե ինչպես կրնկալի անհատն այդ իրականությունը: Առօրյայում անհատների վարքը պայմանավորված է հենց այն գիտելիքով, որը անհատը ստանում է ապրելով հենց այդ իրականությունում, խոսքը հենց առօրեական գիտելիքի մասին է: Հենց այստեղ է առաջ գալիս առօրեական գիտելիքի անհրաժեշտությունը, քանի որ հիմնական մեխանիզմը, որով առօրեականության մեջ մարդիկ գործում են հենց առօրեական գիտելիքն է և ոչ թե մասնագիտականը: Առօրեականության մեջ մարդիկ գործում են առաջնորդվելով առօրեական գիտելիքով, որը հիմնվում է առողջ բանականության և փորձի վրա: Սա անհատի համար կողմնորոշիչ հիմք է հանդիսանում: «Քանի որ առօրեականությունը ձևավորվում է անհատների փոխազդեցությունից և փոխհարաբերություններից, առօրյա գիտելիքի առաջացումը ընկած է հենց այդ փոխազդեցության և փոխհարաբերությունների հիմքում»:¹⁰⁸ Անհատները փոխազդում են միմյանց հետ միևնույն ժամանակ կիսելով իրենց փորձը, իրենց արդեն ունեցած, կյանքի ընթացքում ձևավորված և ձեռք բերված գիտելիքները: Ոչ միայն գիտելիքն է ձևավորվում փոխազդեցության ընթացքում, այլև գիտելիքի սոցիալական պաշարը ազդում է անհատների փոխազդեցությունների վրա: Լինելով ամենօրյա փորձի և առողջ դատողության համադրություն, առօրեական գիտակցությունը առանձնացնում է առարկաների և երևույթների ընդհանուր հատկանիշները և ընտրում էականները: Ելնելով էության և երևույթի դիալեկտիկական սկզբունքից սխալ կլիներ հաստատելը, որ ավանդույթները ինչ-որ կատարյալ, մաքուր էության արտահայտումն են: Լինելով որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ՝ ավանդույթների խորությունն ու հարստությունն այն է, որ բազմատեսակ երևույթների ամրապնդման միջոցով «բյուրեղանում» է ավանդույթի

¹⁰⁸ Бергер П, Лукман Т., նշվ. աշխ., с. 47.

էութիւնը: Այդ էութիւնը հնարավորութիւն է տալիս ճիշտ ըմբռնելու իրերի և երևոյթների կանխատեսումն ու ընդհանրացումը: Ուշադրութիւնը սնեւում է օբյեկտների առավել էական հատկութիւնների վրա, որոնք էլ առօրեական աշխարհընկալման նախահիմքն են: Առօրեականութիւնը ավանդական, անմիջական և կրկնվող կենսա-իրագործումն է: Հասարակութեան ներդաշնակ զարգացման համար կարևոր են սոցիոկեցութեան թե՛ նյութական, թե՛ հոգևոր բաղադրիչները: Միայն այդպէս է հնարավոր համակարգի ինքնակատարելագործումը և ներդաշնակ զարգացումը: Հայտնի է, որ հոգևորը «բարձրացում է էմպիրիկ աշխարհի վրա», սակայն, պայմանավորված այն հանգամանքով, որ մարդկանց հոգևոր դիրքորոշումները հակադրվում են իրենց էմպիրիկ զգացումներին, հաճախ սրանց (հոգևորի և էմպիրիկի) միջև հակասութիւններ են առաջանում: Այդ հակասութիւնները հնարավոր է հաղթահարել միայն այն դեպքում, եթե արտաքին աշխարհից ստացված տպավորութիւնները անցնեն ես-ի պրիզմայով, փոխակերպվեն և դառնան ներաշխարհի կարևոր բաղադրամասեր: Ազատութեան զգացումը հենց այդպիսի փոփոխութիւնների ընթացքում է դրսևորվում, այդ պայմաններում է, որ մարդն ուզում է անկախ լինել որոշակի հանգամանքներից, կանոններից և նորմերից: Սակայն, ազատութիւնը չի կարող լինել լրիվ կամայականութեան և անհրաժեշտութեան ժխտում, այլ այն իմաստավորման, պատճառավորման և արժեքավորման անհրաժեշտութեան մի տեսակ է, ինչպէս նաև ներքին պայմանավորվածութեան և ինքնաիմաստավորման ուրույն միջոց, որը գիտակցվելով մարդու կողմից, դրսևորվում է իբրև նրա կամքի ազատ, ստեղծագործ ինքնարտահայտման իրական գործոն, որը հաստատում է նրա ազատութեան բնույթը: Ազատութիւնն իր հերթին այն կարգավիճակի արժեքիացումն է, որն ընկած է անձի պահանջմունքների հիմքում: Այստեղից կարելի է եզրահանգել, որ առօրեականութիւնը մարմնավորում է անձի հավատո հանգանակը, հոգևոր հենահարթակը, այսինքն՝ արժեքների այն համախումբը, որն անձը ընդունում է որպէս բարոյական օրենք:

Առօրյա իրողությունների աշխարհը հագեցվում է մշակութային և հոգևոր իմաստներով, երբ մարդը հանդիպում է մեկին, որն իր համար ոչ թե «շատերից մեկն է», այլ «բոլորի մեջ միակն է», այսինքն՝ հոգեպես հարուստ առօրեականությունը ընդգծում է էկզիստենցիալ անկրկնելիությունը: Դաժանության հետ առնչվելով, որպես կանոն, մարդն ապավինում է հոգևոր կյանքի սուբստանցիային՝ բարոյականությանը, սակայն դա բոլորովին էլ չի վկայում «բարոյական պոստուլատի» անխախտության մասին: Դա նշանակում է, որ մարդը կոչված է առաջնորդվելու խղճի գերակայության օրենքով՝ ձգտելով հասնել ավելի վեհին, «գուտ» տրանսցենդենտալին: Չընկրկելով անհաջողությունների առջև՝ մարդն իր առօրյա կյանքում կարևորում է ինքնորոշման ներուժը, քանի որ միայն հնարավորությունների որոշարկումից հետո կարելի է խոսել ինչպես անձի, այնպես էլ ամբողջության մեջ վերցված հասարակության առաջադիմական զարգացման մասին:

Առօրեականությունը սոցիալական հարաբերությունների առանձնահատուկ ոլորտ է, որտեղ դրսևորվում են հասարակությանը բնորոշ սոցիոմշակութային հակասությունները և կոնֆլիկտները, որտեղ բախվում են գիտակցության տարբեր տիպերին ներհատուկ արժեքներն ու սկզբունքները: Հասարակության կառուցվածքային յուրաքանչյուր շերտ ունի առօրյայի կազմակերպման իր սկզբունքները, դրանք տարբեր են տարիքային տարբեր խմբերի, մայրաքաղաքի և մարզերի (հատկապես հեռավոր և սահմանամերձ գյուղերի) ազգաբնակչության, նյութապես ապահովված և անապահով, հավատացյալ և աթեիստ, կրթական տարբեր ցենզ ունեցող մարդկանց համար: Այս ամենի հետևանքով «առօրյան ապակազմակերպվում է, դառնում իրականության հետ ոչ նույնական, հաճախ չի ենթարկվում տրամաբանական, սպեկուլյատիվ կառուցարկման և այլն»:¹⁰⁹

Սոցիալական համակարգի կառուցարկման տեսանկյունից առօրեականությունը ներառում է ոչ միայն մարդկային կեցության

¹⁰⁹ Տե՛ս **Ахмезер А.С.**, Социокультурные механизмы циклов культуры // Искусство ситуации смены циклов: Междисциплин. аспекты исслед. художеств. культуры в переходных процессах, М., «Наука», 2002, էջ 116:

կենցաղային և սոցիոմշակութային եղելությունները, այլև մարդկային վոլիսհարաբերությունների ողջ դիալեկտիկան, որը լիովին չի ենթարկվում ռացիոնալ մոդելավորման: Այս դեպքում պետք է խոսել անձի ողջախոհության վրա հիմնված որոշակի կենսաադիքորոշման ստեղծման մասին: Առօրեականության վերին սահմանը ամենից առաջ կապված է մշակութային և բարոյական փորձի հետ: Մարդիկ նախ և առաջ կողմնորոշվում են «կենսական իմաստնությամբ», և հետո միայն անդրադառնում ամենօրյա գոյության սովորական խնդիրներին: Մինչդեռ, ստորին սահմանը կապված է առօրյա գիտակցությամբ, այդ իսկ պատճառով առօրեականությունը հարաբերակցելի է այն ամենին, ինչը պատկանում է ցանկության, հնարավորության ոլորտին:

Սոցիալական համակարգի կառուցարկման տեսանկյունից ողջամտությունը հանդես է գալիս իբրև ժողովրդական իմացության էական բնութագիր: Այն առօրեական մտածողության եղանակ է, քանի որ ի վիճակի է իր գործառույթներն իրականացնել իրեն անմիջականորեն հասանելի ամենօրյա կենսագործունեության բնագավառում: Առօրեական գիտակցության բազմաշերտ, հակասական կառուցվածքում ողջամտությունը, որպես մտածողության մեթոդ, նախ և առաջ գոյություն ունի ժողովրդական իմաստության մեջ: Չնավորվելով առօրեական գիտակցությունում, հենվելով առօրեական ողջամտության վրա՝ այն մարդկանց կողմից ընդունված հասկացման և գնահատման կանոնների համախումբ է: Ժողովրդական իմաստությունը ողջամտությունից դուրս չի կարող գոյություն ունենալ, իսկ ժողովրդական իմաստության մեջ հաստատվածն ունի իր բանական հիմքերը: Սա վերաբերում է սովորույթներին ու ավանդույթներին: Մրանք հայեցակետորեն ձևակերպված չեն, սակայն շատ սերունդների փորձի հիման վրա էմպիրիկորեն դասակարգված են: Սա ժողովրդական բազմադարյան փորձի համադրություն է, որը մարդիկ օգտագործում են առօրեականության տարբեր բնագավառներում: Ողջամտությունն է որոշում բարոյական նորմերի, արժեքային կողմնորոշումների, դիքթորոշումների, գեղեցկության, ներդաշնակության, իմաստավորված կյանքի, այս կամ այն որոշումների հիմնավորվա-

ծության մասին պատկերացումների համապատասխանության աստիճանը: Այն նոր փորձի, նոր հայացքների, վարքի և շփումների նորմերի հնարավորություն է տալիս: Ավանդույթները դառնում են ոչ միայն աշխարհի արտացոլման գործոն, այլև արտացոլում են վերաբերմունքը իրականության հանդեպ: Որպես սոցիալական առօրեականության մեջ ներառման մեխանիզմ ավանդույթները գործում և ձևավորվում են այնտեղ, որտեղ առաջանում են ժողովրդի ամենօրյա կենսագործունեության արժեքները:

Առօրյան, լինելով անհատական և հասարակական կյանքի անբաժան ու էական բաղադրիչը, մի շարք գործառույթներ է կատարում: Որպես առօրեականության ոլորտի անմիջական բովանդակություն հանդես է գալիս մարդկային կյանքի վերարտադրությունը: Այդ գործընթացում մարդկանց մեջ առաջանում են որոշակի նորմեր, հարաբերություններ ու համոզումներ, սկզբունքներ և գաղափարներ, ավանդույթներ և սովորույթներ: Առօրյայի գլխավոր գործառույթը մարդու և հասարակության վերարտադրությունն է, իսկ առօրյայի հարմարվողականության գործառույթը ուղղակիորեն բխում է այդ գործառույթից: Ամենօրյա գործունեության շնորհիվ ապահովվում են մարդկային տեսակի շարունակականությունն ու կենսունակությունը: Մարդն իր կյանքի ընթացքում ձգտում է հարմարավետ կյանքի, գնում է այնպիսի գործողությունների, որոնցից անմիջական օգուտ է քաղում: Օգտակարության ռազմավարությունից հետևում է, որ աշխարհի նկատմամբ գերակշռող հարաբերությունը հարմարվողականությունն է, այսինքն՝ հակվածությունը դեպի սպառումը, ոչ թե արարումը: Գնահատելի են դառնում միայն այն նորմերն ու արժեքները, որոնք մարդն արժևորում է իր օգուտի տեսանկյունից: Առօրյայում մարդը ձգտում է ներառվել գոյություն ունեցող կառույցների ու կառուցվածքների մեջ, սակայն չի ձգտում դրանք վերափոխել:

Դիտարկելով ավանդույթները որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմ, ակնհայտ է դառնում, որ առօրյային բնորոշ մյուս առանձնահատկությունը ինտերսուբյեկտիվությունն է, որը ենթադրում է մշտական հաղորդակցություն: «Առօրեականության աշխարհը ոչ թե պարզապես սուբյեկտիվ

է, այլ մշակույթի ինտերսուբյեկտիվ աշխարհն է»:¹¹⁰ Ինտերսուբյեկտիվ, որովհետև մենք ապրում ենք այլ մարդկանց մեջ, նրանց հետ մեզ միավորում է փոխըմբռնման և հոգսերի ընդհանրությունը: Առօրյան բոլորի համար ընդհանուր իրականությունն է, այն գոյություն ունի մշտական նորացող մարդկային հարաբերություններում: Սոցիալական աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, կառուցվում է այնտեղ գործող մարդկանց փոխհարաբերությունների ու փոխգործունեության շնորհիվ: Մարդու ամբողջ գործունեությունը կախված է այլ մարդկանց հետ նրա ուղղակի և անուղղակի, հաճախակի և հազվադեպ, պայքարող ու հանդուրժող հարաբերություններից: Հասարակությունը մարդկանցից սպասում է վարքի ընդունված կանոնների կատարում, տալիս է դերեր դրանք իրականացնելու կոնկրետ, հաստատված միջոցներ: Մեր պահվածքը, դերերը միայն ներքին Ես-ի արտացոլումն են: Յուրաքանչյուր դերի հետևում կանգնած է կատարող, ով կերտում է այն:

Մարդկային էությունն ավելի ուժգին դրսևորվում է տոտալ հասարակություններում, որտեղ գործում են վարքագծի խիստ կանոններ և պահելաձևեր: Համապատասխանաբար տոտալ կազմակերպություններում ներքին Ես-ը ենթարկվողի կերպարն է, ով կատարում է հիերարխիկ կառուցվածքում պահանջվող բոլոր պարտականությունները: Աշխարհի մասին առօրյայի մեր պատկերացումներն անխուսափելիորեն տեսակավորված են: Մենք շարժվում ենք սովորույթներին ու ավանդույթներին համապատասխան, կողմնորոշվում ենք բոլորի կողմից ընդունված և բոլորին հասկանալի նորմերով: Առօրյան համաձայնեցված գործողությունների այնպիսի վարքի ոլորտ է, որտեղ բոլորը փոխկապակցված են և աշխարհը միասին են մեկնաբանում:

Առօրյայի մյուս առանձնահատկությունը սուբյեկտակենտրոնությունն է, այսինքն՝ առօրյայի ուսումնասիրության կենտրոնում սուբյեկտն է, հաշվարկման միավորը նրա այստեղն ու այս պահն են,

¹¹⁰ Տե՛ս **Шюта А.**, Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии, М., «Общественное мнение», 2003, էջ 47:

դիտարկումը տեղի է ունենում նրա ներսից: Մեր ամբողջ առօրյան ձևավորվում է բազմաթիվ «ես»-երի փոխներգործությունից: Կորցնելով հանգստությունը՝ մարդը կորցնում է իր և խմբի միանմանության զգացումը: Իսկ փոխհամագործակցության համակարգը ձեռք է բերում ճկունություն, ստիպելով, որ փոխհամագործակցության անդամը փոխի, իսկ ավելի կոնկրետ թարմացնի իր «կադապարը»: Այս գործընթացում կարևոր դեր են խաղում այն քայլերը, որոնք մարդը գործածում է իր սեփական Ես-ը վերագտնելու համար: Անհատը տիրապետում է մի շարք տարաբնույթ մեթոդների և միջոցների, որոնք անհրաժեշտ են որոշակի հեռավորություն պահպանելու համար, ինքն իր և այն կերպարի միջև, որով նրան ընդունում ու ճանաչում են շրջապատի անձինք: Կեցության իմաստով փորձի աշխարհն առօրյա սուբյեկտի, կոնկրետ մարդու արտոնությունն է, ով ունի սեփական Ես: Կոնկրետ մարդը իր առօրյայի կրողն է ու աղբյուրը: Միայն մարդկային էության առաջացման բազմաթիվ տարբերակների ընդունմամբ է հնարավոր դառնում մարդու էմպիրիկ ուսումնասիրությունը, ով ապրում և ստեղծում է իր ճակատագիրը այս աշխարհում:

Ելնելով ավանդույթի՝ որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմի դիտանկյունից հասկանալի է դառնում, որ մարդու համար ավելի հեշտ է ապրել կայուն, մշտապես գործառույթ ավանդույթների պայմաններում, քանի որ դրանք յուրացրած անհատը վստահ է իր գործողություններում: Սակայն հասարակական հարաշարժության բեկումնային փուլերում, երբ տարատեսակ փոխակերպումների հետևանքով փոխվում է սոցիոմշակութային կյանքի նախկին հստակությունն ու որոշակիությունը, մարդիկ հաճախ չեն հասցնում հարմարվել վերափոխված նոր պայմաններին և ամենօրյա կյանքի կազմակերպումը դառնում է խնդրահարույց: Սոցիոմշակութային փոփոխությունների և տարբեր տեսակի ավանդույթների վրա դրանց ազդեցության համատեքստում ժամանակակից մարդու կյանքն ընթանում է մի այնպիսի իրականության մեջ, որը սոցիալապես խստորեն կառուցարկված է ինչի հետևանքով միջանձնային հարաբերությունների և հաղորդակցման մեխանիզմների կազմակերպման խնդիրը դառնում է խնդրահարույց: Բանն այն է, որ

քեն առօրյան կյանքի ամենաթափանցիկ և պարզ ոլորտն է, սակայն այդ պարզությունը թվացյալ է: «Սովորական կյանքը» չի ենթարկվում վերլուծության այնքան ժամանակ, մինչև չի բախվում առօրեականության որևէ խախտման հետ: Առօրյա գործունեությունը փորձում է կարգավորել և բերել այն նախնական ձևի:

Տեխնիկատեխնոլոգիական ամենատարատեսակ ձեռքբերումների շնորհիվ ժամանակակից մարդու կենցաղն ու առօրյան զգալիորեն փոխվել են, նվազել է առտնին հոգսերը հոգալու ժամանակը, կրճատվել են գործադրվող ջանքերը և այս ամենով պայմանավորված՝ մեծացել է ազատ ժամանակի քանակը՝ փոխելով առօրյա կյանքի կազմակերպման չափորոշիչներն ու բովանդակությունը: Փաստորեն տեղի է ունենցել հիմնարար արժեքների, սոցիալական նորմերի և վարքի կարծրատիպերի վերիմաստավորում: Օրինակ՝ բջջային հեռախոսը կամ սմարթֆոնը ոչ միայն տեխնոլոգիական փոփոխությունների սոսկական բաղադրիչ են, այլև շփման անընդհատությունն ու որակը ապահովող միջոցներ, որոնք բացահայտում են առօրյայի կազմակերպման սկզբունքորեն նոր, մինչ այժմ անհայտ հեռանկարներ:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ պատմական ցանկացած ժամանակաշրջանում սոցիոմշակութային առօրեականության մեջ ներառվելը կապված է որոշակի դժվարությունների հետ: Նոր միջավայրին հարմարվելու գործընթացը սովորաբար ուղեկցվում է տարատեսակ սթրեսներով: Որպես կանոն, սոցիոմշակութային միջավայրը կամ ինքնուրույն է ընտրվում (գիտակցաբար) կամ հարկադրաբար (մարդիկ այդ ընտրությունը կատարում են իրենց շուրջ ձևավորված որոշակի հանգամանքների ազդեցությամբ): Մարդը գիտակցաբար կամ ինտուիտիվ ձևով ըմբռնում է, որ ինչ-ինչ արդյունքների հասնելու համար պետք է այլ մարդկանց հետ համատեղել գործունեության ծավալը:

Այլ կերպ ասած՝ ցանկացած նպատակի կարելի է հասնել միայն այլ մարդկանց հետ ունեցած միասնական գործունեության արդյունքում: Միայն համընդհանուր ուժերով կարելի է իրագործել նպատակը, հասնել նպատակաուղղվածության: Այստեղ կարևորվում է կազ-

մակերպության մեջ մարդու վարքի գործունեությունը, որը սոցիալական վարքի հատուկ ձև է: Սոցիալական կազմակերպության բնույթը հասկանալու համար պետք է բացահայտել, թե կազմակերպության շրջանակներում ինչպե՞ս է ձևավորվում մարդկանց միացյալ գործունեությունը: Սովորաբար սոցիալական կազմակերպությունը դիտվում է որպես համակարգի հատուկ ձև, որպես շարժուն համակարգ, որը կարող է գտնվել տարբեր իրավիճակներում, կախված նրանից, թե ինչ պարամետրեր է նրան տրված: Համակարգը ձևավորվում է այն պահանջմունքների հիման վրա, որոնք առաջադրում են հասարակությունը և սոցիալական խմբերը: Համակարգի գործառության հիմնական նպատակը պահանջմունքների բավարարումն է: Բայց այստեղ մենք բախվում ենք մի հիմնախնդրի հետ, ըստ որի յուրաքանչյուր անհատ իր հետաքրքրություններն ու հիմնախնդիրներն ունի և դրանց լուծումն ու բավարարումը յուրովի մոտեցում է պահանջում: Ավանդույթներում այս կարծրատիպը երևում է անհատների նախնական ձգտումների իրագործմանից: Այդ ձգտումները կարող են բավարարվել միավորվելու ճանապարհով: «Կազմակերպությունները հանդես են գալիս որպես մարդկանց նպատակաուղղված համակարգեր, որոնք համագործակցում են հանուն անհատի անձնական բարեկեցության»¹¹¹: Բայց այս կազմակերպությունները չեն ձևավորվում այս կամ այն անհատի կամքով կամ նպատակների իրագործման համար: Սոցիալական համակարգերը ծագում են հասարակական օբյեկտիվ պահանջմունքներից, որը հասարակական գիտակցության մեջ արտացոլվում է ոչ թե անհատական, այլ հասարակական նպատակների ձևով: Սակայն դա չի նշանակում, որ կազմակերպության նպատակները չեն կարող լինել այս կամ այն անհատի նպատակ: Կազմակերպության կարևոր խնդիրներից մեկը իր անհատների վրա ունեցած ազդեցությունն է: Մտնելով այս կամ այն կազմակերպության մեջ, մարդիկ կարող են առաջադրել նաև անձնական նպատակներ, և կազմակերպությունները չպետք է խոչընդոտեն դրանց

¹¹¹ Янг С., Системное управление организаций. М., «Советское радио», 1972, с. 48-49.

իրագործմանը: «Սոցիալական համակարգի առանձնահատկությունն այն է, որ այստեղ կան ն՛անհատական, ն՛ սոցիալական նպատակներ: Սոցիալական գործողությունները, որ կատարվում են միկրոմակարդակում, փոխում են հասարակության մակրոքնութագրերը, և այդ բնութագրերի փոփոխությունն իր հերթին ազդում է այդ գործընթացների սուբյեկտների կյանքի և գործունեության վրա»:¹¹²

Ավանդույթի, որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակի և որպես սոցիալաշակութային առօրեականության մեջ անձի ներառման համար, փոխակերպված միջավայրի պայմաններին հարմարվելու առնչությամբ, կարևորվում է ադապտացիայի հիմնախնդրի հետազոտությունը: Նոր պայմաններին ադապտացվելու ժամանակահատվածը կախված է նրանից, թե ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել կենսագործունեության ծավալման մակրո և միկրո միջավայրերում, ներառում այդ միջավայրեր ուղեկցվել է սթրեսներով, թե ոչ, եթե այո, ապա դրսևորման ի՞նչ առանձնահատկություններ են դրանք ունեցել: Եվ վերջապես, սթրեսային իրավիճակը հաղթահարելուց և նոր պայմաններին հարմարվելուց հետո ինչպե՞ս է մարդը կայունացնում իր դիրքը և անցնում արդյունավետ գործունեության:

Սոցիալաշակութային առօրեականության ամբողջական համակարգի մեջ ներառումը կապված է միկրոմիջավայրերի դինամիկ փոփոխությունների հետ, որոնք պայմանավորված են.

- արտադրության մեջ անսպասելի փոփոխություններով (աղետ, արտակարգ իրադրություն, վերստուգում), ընտանիքում՝ մտերիմներից որևէ մեկի հիվանդությունը կամ մահը կամ սոցիալական դրության փոփոխությունը,
- մշտապես տեղի ունեցող, այսպես կոչված «ընթացիկ», սպասելի փոփոխություններով (կատարված գործողություններ, պիտանելիության առնչությամբ օբյեկտների վերահսկողություն և այլն):

¹¹² **Заславская Т.И.**, Социетальная трансформация российского общества: деятельно-структурная концепция. М., «Дело», 2002, с.193.

Առօրյա կյանքի սոցիոմշակութային գործընթացների մեջ մարդիկ կարող են ներառվել երկխոսության միջոցով, որոնք կապված են համակարգի այլ ներկայացուցիչների հետ անմիջական շփման հնարավորության հետ: Սա թույլ է տալիս տվյալ հանրության շրջանակներում իրականացնել նույնականության գործողություններ: Այդ մեխանիզմների շնորհիվ բացահայտվում են ինչպես յուրայինների հետ նույնականացման հիմքերը, այնպես էլ զարգացման այլ օրենքներին ենթակա այլ միկրոաշխարհի ներկայացուցիչներից տարբերությունը: Երկխոսությունը բավականաչափ բարդ գործընթաց է: Երկխոսական շփումը հիմնված է ինքնին արժեք ունեցող այլ սուբյեկտի ապրիորի, ներքին ընկալման ու ընդունման վրա: Երկխոսական մշակույթը պայմանավորված է ժամանակակից մարդու գիտակցության, մտածողության և աշխարհընկալման փոփոխություններով: Ջարգացման ցանկացած մակարդակ, որը համապատասխանում է ավանդույթների և արդիականության պահանջներին, պետք է լինի երկխոսական: Մարդկային գործունեության ցանկացած ձևի իրականացում անհնարին է առանց երկխոսական գիտակցության վրա հիմնված արժեքաիմաստային շփման: Երկխոսությունը հատկապես կարևորվում է որևէ սոցիոմշակութային առօրեականություն մուտք գործելու սկզբնական փուլում: Երկխոսությունը իրականության գիտակցական յուրացման այնպիսի ձև է, որը կապված է արժևորման գործընթացում իրականության իմաստային բովանդակության բացահայտման հետ: Ընդ որում, երկխոսության իմաստաարժեքային ակտուալացումը, իրավիճակի վերապրումը պետք է նույնական լինի բոլոր մասնակիցների համար: Որպես կանոն, խնդրի լուծման ընտրության հիմքում ընկած է մարդու հոգևոր կյանքում դրսևորվող արժեքների աստիճանակարգությունը, որտեղ որոշվում է ոչ միայն նրա սուբյեկտիվ ակտիվությունը, այլև այդ ակտիվության իմաստային բովանդակությունը: Նկատենք նաև, որ գործողությունների իմաստը սերտորեն կապված է արժեքների հետ և ցույց է տալիս մարդու համար որևէ բանի անձնական նշանակալիությունը: Ընդամին, արժեքները որոշում են միջանձնային հարաբերությունների և փոխգործակցության որակը, ինչպես նաև ազդում են ինքնորոշման և կենսական դիրքորո-

շումների դրսևորման վրա: Արժեքներն ուրվագծում են գործողությունների ուղղվածության շառավիղը, ուստի պատահական չէ, որ երկխոսության ընթացքում դրանք շատ կարևոր նշանակություն ունեն: Պայմանավորված անձնական ըմբռնման առանձնահատկություններով՝ իրականացվում է երևույթների, իրադարձությունների և վարքի մեկնաբանությունը: Այդպիսի մեկնաբանությունն իրականացվում է իրադրության (իրավիճակի) ամրագրված կամ դինամիկորեն փոփոխվող պարամետրերի շրջանակներում: Մեկնաբանության տվյալ տեսակը կարող է տարբեր բնույթ ունենալ, այն կարող է լինել բննադատական, ինքնատիպ կամ բազմանշանակ:

Երկխոսությունը, որպես որոշակի էթնիկական արժեքներ կրող սուբյեկտների շփում և փոխգործակցություն, անպայմանորեն բարոյական գործընթաց է: Տարբեր իրավիճակների վերլուծության ժամանակ պետք է հստակորեն երևան երկխոսության մասնակիցների բարոյական դիրքորոշումները և վարքի որոշակի տիպերի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը: Հաղորդակցության երկխոսական մեխանիզմների կիրառության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել *ընկրության ազատության և ազատ ընկրության* հասկացությունները: Ընտրության ազատությունը որոշակի պայմանների շրջանակում երկխոսության մասնակիցների կողմից այս կամ այն բարոյական դիրքորոշումը ինքնուրույնորեն ընտրելու հնարավորության վկայությունն է: Ազատ ընտրությունը զարգացման ավելի բարձր մակարդակի կատեգորիա է, երբ իրագործումը կապվում և համաձայնեցվում է «բարձրագույն բարոյական արժեքներին հետևելու» պահանջների հետ:

Բացի այդ, երկխոսական հաղորդակցությանը մասնակցող անձանց համար գլխավոր չափանիշներից մեկը բարոյական ժառանգորդումն է, այսպես կոչված բարոյական շենը, ըստ որի անձը կամ հերքում է ստեղծված իրավիճակը կամ ներառվում դրա մեջ: Այս դեպքում կարևորվում է այն հարցը, թե խնդրահարույց իրավիճակների լուծման ժամանակ սուբյեկտն ի՞նչ բարոյական ջանքեր է գործադրում, ի՞նչ նոր արժեքային հարաբերություններ է կառուցում: Այս դեպքում երկխոսական հարաբերությունները դառնում են անձի հու-

մանիտար փորձի բաղադրատարր, որը ծառայում է երկխոսության մասնակիցների բաց, գիտակցական, արժեքաիմաստային, կառուցողական փոխգործակցության իրականացմանը:

Ընդունված է համարել, որ գիտակցվածությունը ժամանակի որոշակի միավորի ընթացքում արտաքին աշխարհից եկող տեղեկատվության հոսքի ընկալման և թվայնացման մարդկային կարողությունն է: Գիտակցվածության ցածր մակարդակի դեպքում մարդը ընթացիկ իրավիճակի նկատմամբ դառնում է ոչ ադեկվատ, նրա գործողությունները դառնում են ավտոմատիկ, որպես ռոբոտ նա գործում է ըստ հանձնարարված ծրագրի: Ավտոմատիզմը չի նպաստում շրջապատող իրականության և ընթացիկ իրավիճակի համարժեք ադեկվատ ընկալմանը:

Հայտնի է, որ սոցիումի նկատմամբ գործառական ադապտացիայից զատ մարդն իր գործունեության միջոցով պետք է նաև ներգրավվի մշակույթի տարածություն, յուրացնի դրա իմաստն ու արժեքները: Հումանիտարացման շնորհիվ է ձևավորվում հոգևորը, մարդու աշխարհայացքը, հասարակության մեջ նրա տեղի և դերի մասին ըմբռնումը:

Սոցիոմշակութային առօրեականության մեջ սուբյեկտների ցանկացած ներառումը կախված է նրանց առօրյա գործունեությունից: Բացի այդ, սոցիոմշակութային առօրեականության որակը կախված է սուբյեկտների կենսագործունեության մեջ օգտագործվող առօրյա համակարգերի ավանդույթներից, ինչպես նաև այն ավանդույթներից, որոնց հիմքի վրա դաստիարակվել է սուբյեկտը: Սոցիոմշակութային առօրեականությունը կարող է կապված լինել նաև դրսից, այսինքն՝ այլ համակարգերից եկած ավանդույթների հետ, որոնց հետ մինչ այդ որևէ համագործակցություն չի եղել: Հետևաբար, կարելի է պնդել, որ սոցիոմշակութային տարածության, ուստի նաև սոցիոմշակութային առօրեականության մեջ ներառվելու համար որպես միջոց հնարավոր է օգտագործել տարբեր տեսակի ավանդույթներ:

Ակնհայտ է, որ առավել նշանակալի ազդեցություն են ունենում կոնկրետ համակարգի պատմական ավանդույթները, քանի որ

դրանց վերինաստավորումը դառնում է ապագայի արարման հուսալի երաշխավորը: Բացի այդ, պետք է նշել, որ ավանդույթների պահպանումը, նոր նորմերի և կանոնների ստեղծումը և մշակումը կախված է համակարգի հոգևոր-քարոշական դիրքորոշման մակարդակից, ինչպես նաև ժառանգություն ստացված արժեհամակարգը հաջորդ սերունդներին անկորուստ փոխանցելու ցանկությունից ու ջանքերից: Հենց սրանից է կախված, թե ինչ տեղեկատվություն (և ինչպիսի մեկնաբանմամբ) կստանան հաջորդ սերունդները և, որ ամենակարևորն է, թե ինչպես այն կօգտագործեն:

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող նշանակալի փոփոխությունների հետևանքով խախտվում է հասարակության կայունությունը: Մշակույթի և բնության ռիթմերին ենթարկվող առօրյա կյանքում մարդու ապագան անհայտ է մնում, և նա մասամբ ապրում է կուրորեն՝ չիմանալով, թե ինչ կարող է պատահել իրեն վաղը: Նա անօգնական է բոլոր այն հանկարծակի ու չկանխատեսված իրադրությունների առջև, որոնք կարող են փոխել նրա հեռանկարային ծրագրերը, այս պատճառով իր առօրյա կյանքը փորձում է դարձնել հնարավորինս կանխատեսելի ու համակարգված: Առօրյայի կանխատեսելիությունն ու ակնհայտությունը ուղղակիորեն անհրաժեշտ են մարդուն այս աշխարհում գոյատևելու, թեկուզև իրականության և փորձի այլ ոլորտներում ստեղծագործելու, արարելու, նորույթներ ու հայտնագործություններ անելու համար, քանզի առօրյան իրականության այն ոլորտն է, որը մարդուն կապում է այլ իրականությունների հետ՝ մնալով դրանց միջև: Ինչքան էլ մարդը փորձի հեռանալ առօրյա իրականությունից, միևնույն է, որոշակի պահի նա վերադառնում է այնտեղ: Թեև առօրյան մարդու կեցության անփոփոխ, կրկնելի ու միջինացված կենցաղի ոլորտն է, բայց մարդկային և հասարակական կյանքի գոյատևման ու վերարտադրման ամենաանհրաժեշտ հիմքն ու նախապայմանն է:

2.3 Ավանդույթների և նորարարության փոխհարաբերությունը փոխակերպվող հասարակությունում

21-րդ դարի սկզբը աչքի է ընկնում հասարակության սոցիալական և հոգևոր կյանքի բարդ տեղաշարժերով, որոնք հանգեցնում են մարդկային կեցության վերափոխման՝ նոր տեխնոլոգիաների, մարդկանց միջև համագործակցության նոր ձևերի, մշակութային ավանդույթների վերափոխման: Փոխվում են նաև իրերի և իրադարձությունների ընթացքն ու տրամաբանությունը, նորացվում է դրանց էությունական հիմքերը, և հասարակությունը մտնում է գործառության մի գոտի, որտեղ անկանխատեսելիությունը և դրանով պայմանավորված վարքի անորոշությունը դառնում է գոյության մշտական ձև, ինչի արդյունքում կյանքի և կենսագործունեության յուրաքանչյուր կողմը վերածվում է խնդրի: Ի հավելումն ասվածի, մի կողմից ինտեգրիայով շարունակում են գործել հին ինստիտուտները և դրանց բնորոշ արժեքներն ու հարաբերությունները, մյուս կողմից՝ ձևավորվում են սոցիալական նոր ինստիտուտներ և միջանձնային նոր հարաբերություններ: Հին ու նոր իրողությունների համատեղման այս դժվարին գործընթացը նախադրյալ է ստեղծում երկփեղկված աշխարհայացքի և երկակի սոցիալական դիրքորոշումների ձևավորման համար: Դժվար չէ նկատել, որ սոցիալականությանն առնչվող հետևյալ փոխակերպումները հիմնականում առնչվում է մարդկային համակեցության գոյության, վերարտադրության ու գործառության հիմունքներին, ինչը նշանակում է, որ սոցիալականության նոր պայմանները այս կամ այն չափով կանդրադառնան նաև մարդկային հարաբերությունների բնույթի ու բովանդակության վրա:

Որոշակի պատմական շրջափուլին համապատասխանող ցանկացած հասարակություն կրում է արդիականության ազդեցությունը: Եթե դադարում է գոյություն ունենալ «մարդկային գործունեության ընդհանուր հայեցակարգը» կարգավորող իրականության կառուցվածքը, ապա որպես ժամանակակից հասարակության գլխավոր սկզբունք կարող է հանդես գալ «բացարձակ ինքնուրույնությունը», որը հետագայում կարող է դառնալ «բոլորի դեմ անողորք պատերազ-

մի» պատճառ: Մշտապես առկա այս սպառնալիքը կարող է չեզոքացվել կարգը ձևավորող և պահպանող տարրեր (ինստիտուցիոնալ, հոգևոր և այլն) միջոցներով: Որպես ազատության և կարգի կոնկրետ հիմնախնդիրների վերախմբագրում՝ արդիականության ինստիտուցիոնալ միջոցների տարրերի համադրությունները ձևավորվել են կոնկրետ իրավիճակներում: Ընդ որում, այդ միջոցները փոխվել են նոր իրավիճակի (կամ հնի փոխակերպման) ձևավորման և հասարակության մեջ կատարվող փոփոխությունների հետ միաժամանակ: Անկասկած, հասարակության զարգացումն ու առաջընթացը կարելի է ներկայացնել որպես աճի և կատարելագործման գործընթաց: Ընդամիս, ինչպես նշում են բազմաթիվ գիտնականներ, ինստիտուցիոնալ «մասնավոր» պատմություններից և ոչ մեկը (ամգամ «իդեալական-տիպական» կամ վերջինիս ռեպրեզենտատիվ արտացոլման առումով) արդիականության պատմություն չէ: «Արդիականացման տեսությունները հիմնվում են այնպիսի մեթոդաբանական թողություն վրա, որ բոլոր երկրների և ժողովուրդների զարգացման գործընթացը ունի համընդհանրական բնույթ, այսինքն ծավալվում է նույն ուղղությամբ, ունի նույն փուլերը և օրինաչափությունները: Աշխարհի բոլոր երկրները զարգանում են միևնույն ընդհանուր սխեմայով՝ արդիականացման որոշ փուլերի հաջորդափոխությամբ: Խոսքն առաջին հերթին ագրարային (ավանդական) հասարակությունից արդյունաբերական (ժամանակակից) հասարակության անցման մասին է»:¹¹³

Արդիականության զարգացման էությունը պարզաբանելու այն փորձերը, որոնք կապված են միայն խնդրի ինստիտուտային տեսանկյան հետ, ինչը հանգեցրել է արդիականությունը կապիտալիզմի, սոցիալիզմի, արդյունաբերական կամ տեղեկատվական հասարակության հետ նույնացմանը, բնականաբար կատարյալ չեն: Պատահական չէ, որ խնդրո առարկան քննարկվել է նաև նորմատիվ տեսանկյունից: Արդյունքում՝ արդիականությունը նույնացվել է աշխարհիկացման, ռացիոնալացման և «պոզիտիվ» աշխարհայացքի հաղ-

¹¹³ Հարությունյան Մ. Ա., Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., «Նաիրի» հրատ., 2014 թ., էջ 172-173:

քանակի հետ: Ցանկացած արդիականություն մեկընդմիջտ տրված որևէ վերջնական իրողություն չի ընդունում: Արդիականությունը միայն սեփական հիմքերի վրա կարող է կայունանալ, այսինքն՝ այն հիմքերի վրա, որոնք իրենց մեջ նորացման ծիլեր են պարունակում: Կայունացումը կարող է արտահայտվել արդիականության տարբեր դրսևորումներում:

Առաջին՝ արդիականությունը կայուն բնույթ չի ունենա, եթե միայն ապավինենք անցյալի հեղինակություններին: Արդիականության հիմքը պետք է կազմեն գործնականորեն գտնված, պրագմատիկորեն պահպանվող և, որ ամենակրևորն է, ստուգելի իրողությունները: Այդ իսկ պատճառով արդիականությունը պատմաքաղաքական գործընթաց է, որով պայմանավորվում են բարոյական հարաբերությունները, գեղագիտական ըմբռումներն ու տնտեսական կազմակերպման ձևերը:

Երկրորդ՝ արդիականությունը ինքնաանդրադարձի և ինքնաբնադատության կարողություն և պատրաստակամություն է: Սակայն սա չի նշանակում, թե արդիականությունը խոչընդոտում է մարդկանց շփման ձևերի առօրեականացմանը, նրանց արձագանքների «ավտոմատիզմին» և սուբյեկտների կամքի նկատմամբ սոցիալական նորմերի և ինստիտուտների հարկադրանքին, առանց որի հասարակության մեջ կարգի գոյությունն անհնարին է: Արդիականությունը կանխադրում է, որ հասարակության մեջ կարգն ու կանոնը ապահովող միջոցների գոյությունը չի կարող արդարացվել միայն նրանով, թե «դրանք միշտ եղել են», այսինքն՝ արդիականությունը ենթադրում է, որ օգտագործվող բոլոր ձևերն ու միջոցները պարբերաբար պետք է «ռեկվայի» ենթարկվեն:

Երրորդ՝ ճիշտ չէ արդիականությունը դիտարկել որպես համաշխարհային պատմության մի առանձնահատուկ փուլ, որի գոյությունն ու գործառությունը պայմանավորված է անփոփոխ օրենքներով: Արդիականությունը ձևավորվում և գործում է համաձայն իրադարձությունների «ժանրի» օրենքների, այն պայմանավորված չէ տարբեր ծրագրերի ու շրջափուլերի իրացման և գիտական հայտնագործությունների ծավալման հետ: Այդ իսկ իմաստով արդիականությունն ի-

րենից ներկայացնում է «պատահականությունների», «հանգամանքների համընկնման» և սուբյեկտների պայքարի ամբողջություն:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է պնդել, որ արդիականությունը պետք է հենվի որոշակի փորձի և օրենքների վրա, որոնք հասարակության մեջ ապրող սուբյեկտների պահանջմունքներից կախված՝ կարող են փոխակերպվել և զարգանալ: Որոշակի ժամանակահատվածում տնտեսական, քաղաքական, մշակութային (ներպետական, թե համաշխարհային) փոփոխությունները համապատասխան փոփոխություններ են առաջացնում մաս մարդկանց գիտակցության մեջ:

Փիլիսոփայական գրականության մեջ «ավանդույթ» հասկացությունը մեկնաբանվում է որպես սոցիալ-մշակութային ժառանգության փոխանցում, այսինքն՝ որպես տվյալ հասարակության մեջ հաստատված սոցիալական հարաբերությունների կայունացման միջոց: Սակայն այդ հասկացության նման մեկնաբանությունը շատ սահմանափակ է, քանի որ հասարակության զարգացման ժամանակակից փուլում, երբ սոցիալական առաջընթացի տեմպերը շատ բարձր են, կարելի է մշել, որ չնայած փոխակերպումների արագահոս ընթացքին, երբ թվում է, թե մեկընդմիջտ տրված որևէ կայուն բան այլևս չի մնացել, հասարակությունը, ինչպես և նախկինում, կայունության կղզյակների կարիք ունի: Ուստի պատահական չէ, որ «հոսող արդիականության» (Ջ.Բաուման) պայմաններում անգամ հաճախ ձևավորվում են նոր ավանդույթներ, որոնցից շատերը տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից փուլում չեն հասցնում տվյալ հասարակության մեջ ներկայացնել իրենց արդյունավետությունը:

Ավանդույթների մեկնաբանության դիխոտոմիստական հայեցակարգը, որը մշակել էին դեռևս էվոյուցիոնիստները, իր շարունակությունը գտավ նորարարական (մոդեռնիստական) տեսության մեջ: Այս տեսության համաձայն՝ ազգային ավանդույթները առավելապես բացասական երևույթներ են, որովհետև խոչընդոտում են պատմական վերընթաց զարգացմանը: Մ. Վեբերը, Գ. Տերբորնը, Ս. Հանթինգտոնը ընդգծում են նորարարության համապարփակեցնող,

ստանդարտացնող այն ազդեցությունը, որի արդյունքում տարածաշրջանային և էթնիկական բոլոր տարբերությունները աստիճանաբար, սակայն անխուսափելիորեն պետք է վերանան, անհետանան: Մշակութային զարգացման նորարարական հայեցակարգերը եվրոպական գիտության մեջ ազգային ավանդույթի մասին ձևավորեցին այնպիսի պատկերացումներ, համաձայն որոնց դրանք, որպես անշարժ, քարացած սոցիալական ֆենոմեններ համարժեք են մշակույթի զարգացման նախաժամանակակից փուլին:

1980-ական թվականների սկզբին նորորարական տեսության մեջ ձևավորվում է «նեոնոդեռնիզմը», որի շրջանակներում «ազգային ավանդույթ» հասկացությունը մեկնաբանության նոր երանգ է ստանում: Ռ. Դարենդորֆի, Պ. Շտոմպկայի, Շ.Էյզենշտադի և այլոց հետազոտություններում զարգացվում է ավանդույթների դրական ներուժի մասին գաղափարը, վիճարկվում են դասական մոդեռնիզմի հակաավանդական դիրքորոշումները: Նոր մեկնաբանություններում ավանդույթը դիտարկվում է որպես մշակույթի անշարժ, անփոփոխ առանցք, որի շուրջը համախմբվում է շարժուն, փոփոխական մշակութային արվարձանը: Ավանդույթի կառուցվածքում ներառված են կրեատիվ (ստեղծագործական) և պահպանողական երկմիասնական բաղադրիչներ:

Որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ ավանդույթը, հետարդիական մոտեցման շրջանակներում, դիտարկվում է որպես յուրահատուկ սիմվոլիկ կառույց, որն անընդհատ արարում են այս պահին ապրող սերունդները, այն կարող է փոխվել միայն դրա սուբյեկտիվ մեկնաբանության և վերաիմաստավորման արդյունքում: Հետարդիական փիլիսոփայությունը բացառում է մշակութային ցանկացած որոշակիություն, համարելով, որ ավանդույթը ըստ էության սուբյեկտիվ ընկալման իրողություն է: Նրա նշանային համակարգը գուրկ է բովանդակային հազեցվածությունից, ուստի այն չի կարող իրացնել մշակութային ժառանգորդման որևէ մեխանիզմ:

Այսպիսով, հետարդիական հայեցակարգերը կասկածի տակ դնելով «ազգային ավանդույթ» հասկացությունը, ոչ միայն սրեցին ժամանակակից մշակույթում ավանդույթի դերի և նշանակության

մասին բանավեճերը, այլև ավելի արդիական ու հրատապ դարձրեցին ազգային-մշակութային և էթնիկական նույնականության ու ինքնության խնդիրները:

Արևմտյան հեղինակների փաստարկներից ելնելով՝ կարելի է եզրահանգել, որ արևմտյան ժամանակակից հումանիտար գիտելիքում գերիշխող է դարձել ավանդական մշակույթի և նրա արժեքային պոտենցիալի մարման տեսակետը. էթնիկական ավանդույթը դիտարկվում է որպես նորարարությունների ներդրմանը խոչընդոտող հանգամանք: Միաժամանակ, ակտիվորեն քննարկվում են նաև ազգային ավանդույթի արդիականացնող ներունակությունները ներկայացնող գիտական հետազոտությունները, որտեղ ավանդույթը սահմանվում է որպես էթնոմշակութային փորձի պահպանման և փոխանցման խորհրդանշական ծածկագիր: Այս դրույթը համահունչ է էթնոմշակութային ժամանակակից հետազոտություններին, որտեղ ներկայացվում է այն միտքը, որ էթնիկական ավանդույթները ոչ միայն էթնոսի կայուն «հիմնականախթն» է, այլև նրա նորացման հիմքը (Գ. Պոմերանց, Յու. Վ. Չերնյավսկայա, Տ. Ա. Մազանև և այլն):

Ավանդույթների դուալիստական բնույթը արտահայտվում է նրանում, որ մի կողմից արտահայտում են կայունությունը և որպես այդպիսին օժտված են մի սերնդից մյուսը փոխանցվող նորմերի մշտականության հատկությամբ, մյուս կողմից՝ դրանք հանդիսանում են նորարարությունների բազային հենահարթակ: Նկատենք նաև, որ ավանդույթները, ներդրվելով պրակտիկ կյանք, փոխվում են և մշտատրոփ կյանքի արագափոխ պահանջմունքներից ելնելով՝ զգալիորեն հարստանում: Ընդամենը, ավանդույթը պետք է դիտարկել որպես մարդկային գործունեության ձևայնացված կառուցվածքների շարժում, որն ամենարին է առանց դրա իրացմանը նպաստող որոշակի գիտական գիտելիքների և տեղեկատվության գոյության: Այդ իսկ պատճառով այդպիսի գործունեության բարդացումը և զարգացումը ենթադրում է պահանջարկված փորձի պահպանման և վերարտադրության անընդհատություն, որը հետագա սերունդների համար հնարավորություն կընձեռի ծագող հիմնախնդիրները լուծել նախորդների կուտակած տեսական և պրակտիկ ժառանգության արդյունա-

վետ օգտագործման միջոցով: Հետևաբար, ավանդույթը կարելի է դիտարկել որպես փորձում դրսևորվող առաջադիմական գաղափարների վրա հիմնված որոշ կարծրատիպերի ընտրողական ամրագրման ձև, որը օգտագործվում, պահպանվում և փոխանցվում է ժամանակակից այլընտրանքային պրակտիկայում:

Որոշակի փուլում ձևավորված ավանդույթներն իրենց վրա կրում են ժամանակի կնիքը, ուստի սահմանափակված են նախորդ գործունեության շրջանակներում: Ավանդույթներում ծրագրերի, օրենքների և կանոնների տեսքով ամրագրված նորարարությունները, որոնք կանոնակարգում են գործունեության որևէ կոնկրետ տեսակ, աստիճանաբար սպառում են իրենց արդյունավետ կարողությունները: Այդ ամենը հանգեցնում է նրան, որ քիչ առ քիչ գործունեության մեջ ներառվում են գործողությունների նոր ծրագրերի մշակման կարիք ունեցող կազմակերպման ոչ ավանդական համակարգեր, ինչը սուբյեկտների գոյության և գործառության մեջ համապատասխան փոփոխություններ առաջացնելով, նպաստում է նրանց կենսական և ինտելեկտուալ էներգիայի զարգացմանը և անհրաժեշտ ուղղությամբ սրանց ծավալմանը:

Հասարակության զարգացման որոշակի փուլերում այսպիսի իրավիճակներ առաջանում են նյութական աշխարհի նոր մակարդակների և տեսակների յուրացման ժամանակ: Նոր մակարդակի խնդիրների լուծման համար անհրաժեշտ են նորարարական մոտեցումներ, որոնց էությունը գործունեության ձևերի և միջոցների այնպիսի կազմակերպումն է, որը թույլ է տալիս ավանդույթի միջոցով արագորեն հարմարվել անկանխատեսելի իրավիճակին, յուրացնել այն օբյեկտները, գործողությունների այն հնարքներն ու միջոցները, որոնք նախատեսված չէին ավանդական, թող թույլ տրվի ասել, ստացիոնար պայմանների համար:

Որպես կանոն, նորարարական մոդելները ձևավորվում են զարգացած վերիրադրային ակտիվությամբ օժտված սուբյեկտների նորարարական գործողությունների ընթացքում: Նորարարությունը մարդկային գործունեության առանձնահատուկ տեսակն արտացոլող երևույթ է, որն ուղղված է գործունեության ավանդական ձևերի

ձևավոխմանը և նորերի արարմանը, որոնք պետք է նոր ուղղությամբ կարգավորեն և ուղղորդեն սուբյեկտի գործունեությունը: Այսպիսով, նորարարության հատկանիշներն են՝ նորույթը և գործունեության արդյունքների հասարակական նշանակալիությունը:

Նորարարական գործունեության արդյունքը ավանդականի կատարելագործումն է կամ նախկինում երբևէ չօգտագործված ծրագրերի կիրառումը: Նորարարության գլխավոր հատկանիշը գործունեության ձևավորված կարծրատիպային ծրագրերի հաղթահարման և անհատական կամ կոլեկտիվ ստեղծագործության միջոցով մշակութային ինքնատիպ արժեքների և ձևերի ստեղծումն է: Մշակութային ավանդույթների և սոցիոմշակութային գործոնների հետազոտությունը հնարավորություն է ընձեռում նորամուծությունների և նորարարության առնչությամբ կատարել որոշ նախնական եզրակացություններ:

Ավանդույթի, որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակի, ինչպես նաև սոցիալական ճանաչողության ամբողջական գործընթացի համար շատ կարևոր է նորարարության և ավանդույթների, որպես զարգացումն ապահովող տարրերի, համեմատական վերլուծությունը: Դրա համար անհրաժեշտ է հրաժարվել «ավանդույթ-նորարարություն» հակադրությունից: Ընդունված է համարել, որ ավանդույթն ապահովում է սոցիալական կյանքի համար անհրաժեշտ կայունությունը, իսկ նորարարությունը ծառայում է առաջընթացին: Հասարակական հարաբերությունների նոր որակի անցումը ուղեկցվում է անցյալի վերիմաստավորման և ապագայի խնդիրների ինտենսիվ քննարկումներով:

«Ավանդույթ-նորարարություն» ամբողջությունը ներամփոփում է մարդկային փորձի ժառանգորդման և իրականության նպատակադիր վերափոխման խնդիրները: «Ժառանգորդման շնորհիվ ամեն անգամ նոր սերունդը չի որոնում արդեն գտնվածը, հայտնագործում հայտնագործվածը: Ժառանգորդման միջոցով է իրականանում կապը տարբեր սերունդների միջև: Որպեսզի ժառանգորդունը դառնա մշակույթի զարգացման գործոն անհրաժեշտ է՝ ազգը, ժողովուրդը, անհատը ժառանգի այն, ինչ կենսահաստատ է, առաջադիմական,

պահպանում ու հարստացնում է ազգի, հասարակության, անհատի էությունը, բնույթը, կերպը, ինչով ներկայանում է դարին, մարդկությանը, և հակառակը՝ ազատվի նրանից, ինչը սպառել է իրեն, ժամանակավրեպ է: ...ժխտվում է իրեն սպառածը, վերցվում է կենսունակը»:¹¹⁴ Ընդամին, նորարարականը, անկախ նրանից, թե այն մշակույթի կողմից ընդունվում է, թե ոչ, որպես նոր այլևս չի դիտարկվում, այն դառնում է անընդհատ փոխակերպելի: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ավանդույթը և նորարարությունը միմյանց փոխլրացնում են: Այս առնչությամբ Ա. Ն. Ավերյանովը նկատում է, որ ավանդույթները և նորարարությունները փոխներթափանցող գործընթացներ են: Նորարարությունը ժառանգորդման այնպիսի կարգ է, երբ ժառանգորդվողը նոր իմաստ է կրում, որպես այդպիսին, այլ կոչում ունի: Ընդ որում, նորարարական գործընթացների ուղղվածությունը որոշվում է ոչ թե հնի տակական նորացմամբ, այլ նոր բովանդակության ձևավորմամբ:¹¹⁵ Նորարարությունը հնարավորություն է ընձեռում տրոհելու նախկին կարծրատիպի ամբողջականությունն ու աղեկվատությունը և կամ այլ կարծրատիպերի հետ նրա միավորումը: Նկատենք մաս, որ ավանդույթները կարող են կորցնել ինքնանույնականությունը, ավանդական այլ ձևերի հետ իրենց նախկին իմաստային հարաբերակցությունը: Եթե մշակույթում որոշիչ նշանակություն ունենա նորարարությունը, ապա կկորսվի ոչ միայն ժամանակի ընթացքում կուտակված հին բովանդակությունը, այլև կխզվի սերունդների կապը: Արժեքաիմաստային հին համակարգի շրջանակներում անհնարին է նոր խնդիրների արդյունավետ լուծումը:

Այսպիսով, թեև ավանդույթների և նորարարության փոխադարձ կապն անխուսափելի է, սակայն այդ կապը հազվադեպ է ներդաշնակորեն հավասարակշռված լինում, քանի որ պատմական որոշակի շրջափուլում մերթ ավանդական արժեքներն են գերիշխում, մերթ՝ նորարական: Ըստ այդմ, թե՛ ավանդույթները, և թե՛ նորարարություններ-

¹¹⁴ **Սարգսյան Ա. Հ.**, Մշակույթի տեսություն. Ուսումնական ձեռնարկ: Եր., «Տնտեսագետ», 2003, էջ 77:

¹¹⁵ **Տե՛ս Аверьянов А.Н.**, Системное познание мира: методологические проблемы. М., «Политиздат», 1985, էջ 263:

րը կարող են հանդես գալ ինչպես հասարակական, այնպես էլ առօրյա կյանքի կազմակերպման կենտրոնաձիգ ուժերի դերում, պայմանով, որ դրանք նպատակամղված լինեն հասարակության կողմից պահանջարկված պրակտիկ խնդիրների արդյունավետ լուծմանը: Այսպիսով, «ավանդականության և նորարարության ամբողջականությունը կարող է նպաստել հասարակական համակարգի անարգել զարգացմանը»:¹¹⁶

Ժամանակակից փիլիսոփայական և պատմամշակութաբանական հետազոտությունները փաստում են, որ մշակութապատմական տարածության ժամանակավոր գործընթացները ոչ միայն առաջ են ընթանում, այլև երբեմն հետ՝ ներկայից անցյալ, այսինքն՝ տեղի է ունենում «հետընթաց»: Կուտակվում են տարատեսակ հակասություններ, որոնք «հղի են այնպիսի սոցիալ-քաղաքական լարվածությամբ և օտարվածության դրսևորումներով, որ կարող են ներքուստ պայթեցնել իրադրությունը և զարգացումը մի քանի տասնամյակ ետ շարտել»:¹¹⁷ Դա պայմանավորված է անցյալի մասին տեղեկատվության չընդհատվող կուտակմամբ: Պատմական շատ շրջափուլերի ընթացքում պահպանվում և վերարտադրվում են միայն այն կարծրատիպերը, որոնք համապատասխանում են ժամանակակից կյանքի պայմաններին: Հայ հասարակության օրինակով, սոցիոլոգ Գ. Պողոսյանը նշում է. ««արդիականացման հետընթացը»՝ տնտեսության որոշ ոլորտների ապարդյունաբերականացումը և արխաիկացումը, սոցիալական բևեռացումն ու սոցիալական կառուցվածքի որակական վատթարացումը, բնակչության ծայրաստիճան աղքատացումը, աճող արտագաղթը և սոցիալ-մարզինալ շերտերի ավելացումը, հետխորհրդային զարգացումների համար բնորոշ և օրինաչափ փուլ: Արդիականացման դասական արևմտյան մոդելների կիրառումը հետխորհրդային հասարակություններում անխուսափելիորեն հանգեցրեց դրանց սոցիալական կառուցաքանդմանը: Խնդիրն այն է, որ

¹¹⁶ **Заславская Т. И.**, Современное российское общество: социальный механизм трансформации. М., «Дело», 2004, с. 505.

¹¹⁷ Տե՛ս **Հարությունյան Մ. Ա.**, Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., «Նաիրի», 2014, էջ 174:

մեզանում չմշակվեցին սեփական էթնոմշակութային մոդելներ»:¹¹⁸ Ստացվում է այնպես, որ վարքային նորամուծությունների ընտրասերմամբ իրականացվում է ավանդույթների արդիականացումը:

Շատ հաճախ մշակութային որևէ ավանդույթ կարող է հակադրվել նորամուծություններին, սակայն մնան հակադրությունը հարաբերական բնույթ ունի, մշակութային հարաշարժության մեջ մեկընդմիջ տրված, բացարձակ ոչինչ չի կարող լինել: «Իրավիճակը հարուցում է մարդու սոցիալական դիրքորոշումների անորոշություն, նրա դրության երկակիության, որը մի կողմից, կարող է կյանքի կոչել կարոտախտ՝ ձգտումներ, իղձեր և դրանք իրականացնելու անհնարիմություն, իսկ մյուս կողմից՝ չհիմնավորված, գերաճած սպասումներ, որոնք հակասում են մարդկանց ռեալ հնարավորություններին և ռեալ իրադրությանը»:¹¹⁹ Մարդկային որևէ խմբի կողմից ընդունված ցանկացած նորամուծություն աստիճանաբար վերածվում է ավանդույթի: Թեև առօրյա կյանքում ավանդույթն ընկալվում է որպես կայուն և անփոփոխ իրողություն, սակայն իրականում այն շարժուն է, ավանդույթի փոփոխությունը մեկից մյուսին անընդհատ է: Ավելին, որոշ ավանդույթների մասին հաջորդող սերունդներն ընդհանրապես չեն հիշում: Դա կարելի է դիտարկել որպես հարմարման յուրահաստուկ գործընթաց: Իսկ դա նշանակում է, որ պահպանվում են այն կարծրատիպերը, որոնք պահանջարկված են հասարակության կողմից: Ավանդույթների վերը նշված «հետընթացը» վկայում է դրանց արդյունավետության մասին:

Սոցիալական համակարգի կառուցարկման մեջ ավանդույթը հիմնականում ըմբռնվում է որպես աշխարհայացքային սկզբունքների, արժեքային դիրքորոշումների և նորմատիվների ամբողջություն, ուստի այն կարելի է դիտարկել որպես այն նորամուծությունների ընտրության սոցիալական չափանիշ, որոնք կարող են ապահովել գոյություն ունեցող նորմատիվ համակարգի զարգացումը կամ նորի ստեղծումը: Դրա շնորհիվ փոխակերպումների, արդիականացման և

¹¹⁸ Տե՛ս **Պողոսյան Գ. Ա.**, Արդի հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին: Եր., «Լուսաբաց», 2006, էջ 354:

¹¹⁹ **Հարությունյան Մ. Ա.**, նշվ. աշխ., էջ 186:

նորամուծությունների հետ կապված գործունեությունը կարելի է դիտարկել որպես սոցիալականորեն կազմակերպված գործընթաց, որի ռացիոնալ և օպտիմալ կառավարումը նպաստում է հասարակության մեջ բարոյական-հոգեբանական հարաբերությունների արդյունավետ միջոցների մշակմանը:

Ավանդույթների և նորարարությունների փոխհարաբերություններին առնչվող որոշ հետազոտողներ նորամուծությունը դիտարկում են որպես ավանդույթի կառուցվածքային տարր: Նման մոտեցումը որոշակի թերություններ ունի: Բանն այն է, որ նման դեպքում նորարարական գործունեությունը կորցնում է իր ինքնուրույն բնույթը՝ սահմանափակվելով սոսկ այս կամ այն ավանդույթի շրջանակներում: Այս դեպքում դժվարանում է որակապես նոր ավանդույթին անցման մեխանիզմի բացահայտումը, ինչպես նաև մի վիճակից մյուսին անցման հնարավորությունների հիմնավորումը:

Ավանդույթի և նորարարության հարաբերակցությունը կարելի է դիտարկել որպես մշակութային և գիտական առաջընթացի դիալեկտիկական հակասության դրսևորում: Այս առնչությամբ կարելի է ասել, որ նորարարականի և ավանդականի փոխգործակցությունը նպաստում է հասարակության անընդմեջ զարգացմանը, քանի որ «առաջընթացը հնարավոր է միայն ձևավորված ավանդույթի հիմքի վրա: Բանն այն է, որ ավանդույթը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախկինում առաջադիմական համարվող գործունեության արդյունք»:¹²⁰

Մասնագիտական գրականության մեջ տարբերակում են նորարարական-ավանդական երևույթների երկու տիպ՝ ինտենսիվ և էքստենսիվ: Ավանդույթի և նորարարության դիալեկտիկական փոխհարաբերության էքստենսիվ տիպը կապված է գոյություն ունեցող գիտական ավանդույթի համակարգի զարգացման հետ, որը մշակութային և նորմատիվ առկա համակարգի ընձեռնած հնարավորությունների շրջանակում հետագայում ձևափոխվում է: Արդյունքում՝ գիտական ճանաչողության մեջ ձևավորվում են որոշ ինվարիանտներ,

¹²⁰ **Гавров С.**, Социокультурная традиция и модернизация российского общества. М., МГУКИ, 2002, с. 48.

որոնք գիտական գործունեության իրական գործընթացում ստեղծագործական նորամուծությունների շնորհիվ էվոլյուցիայի են ենթարկվում, ինչը վկայում է համակարգի ինքնապահպանման կարողության մասին:

Սոցիալական համակարգի կառուցարկման մեջ նորարարությունների մեխանիզմի միջոցով իրականացվող գիտական ավանդույթի զարգացումը հիմնվում է մի կանխադրույթի վրա, համաձայն որի ավանդույթը համակարգային կազմավորում է: Ստեղծագործական նորարարության մեխանիզմը թույլ է տալիս գիտական ավանդույթը ներկայացնելու որպես ճկուն համակարգ, որն ապահովում է ոչ միայն նրա կայունությունը, այլև զարգացումը: Ավանդույթի դինամիկ զարգացումը կապված է նրա գիտական ճանաչողության մեջ (որպես ինվարիանտ) գործառության հնարավորության հետ, երբ ավանդույթն այն կայուն հիմքն է, որից կարող են արտածվել նորարարական գործունեության բազմաթիվ տարբերակներ: Սակայն, հասարակական նորմատիվների կողմից չառաջադրված և դրանց պահանջներին չհամապատասխանող նորարարությունը հանրությունը չի կարող ընդունել: Որպեսզի նորարարությունը դառնա գիտության առաջադիմական զարգացման աստիճան, այն պետք է միջնորդավորվի գոյություն ունեցող ավանդույթներով, այսինքն՝ նորարարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հնի ու նորի արդյունավետ համադրություն: Ելնելով վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ ավանդույթի և նորարարության էքստենսիվ տիպը փոփոխելիի և անփոփոխի դիալեկտիկական միասնությունն է: Ընդ որում, ինվարիանտը դիտարկվում է որպես նորարարությունների ձևավորման հիմք, որն իրացվում է ավանդույթների միջոցով: Բացի այդ, ինվարիանտը նաև ընտրության այն չափանիշն է, որից ելնելով նորարարությունները, ներածվելով և ամրակալվելով գոյություն ունեցող ավանդույթների մեջ, զարգանում են: Գոյություն ունեցող նորմատիվների և արժեքների ձևափոխման հետ կապված՝ ավանդույթների և նորարարության փոխգործակցության տվյալ տիպի առանձնացումը, սակայն, չի ամփոփում գիտական գործընթացի իրական զարգացումը: Այն դեպքում, երբ ավանդույթների նորմատիվ ֆոնդը սպառված է, օրինաչափ

է անցումը նոր նորմատիվ համակարգի: Ավանդույթների և նորարարության փոխհարաբերության բնույթի պարզաբանման համար անհրաժեշտ է, ըստ ամենայնի, ներկայացնել հնի և նորի բովանդակային տարբերությունները: Էքստենսիվ տիպի դեպքում դրանք հիմնականում դրսևորվում են ներգիտական ավանդույթների մակարդակում, մինչդեռ ինտենսիվ տիպի դեպքում տարբերությունների առաջացումը պայմանավորված է համագիտական ավանդույթի և մշակութային իդեալների և արժեքների փոփոխություններով: Դեռևս Կոպեռնիկոսն էր նշում, որ փոփոխությունները կարող են հանգեցնել արժեքների և տարբեր կատեգորիաների փոխհարաբերությունների վերաարժևորմանը, ինչը բնականաբար կփոխի մաս արարման նպատակների և խնդիրների մասին հասարակության պատկերացումները: Այդ հեղաշրջումն անխուսափելի է:

Ավանդական-նորարարական փոխգործակցության մեկ այլ տիպ կարելի է համարել տարբեր համակարգերի խաչասերումը: Այս դեպքում փոխակերպման են ենթարկվում նորմատիվ-արժեքային բննարկվող բոլոր համակարգերը և մասն փոխգործակցության արդյունքում առաջանում է հետագոտության նոր բնագավառ՝ իրեն բնորոշ նոր ավանդույթներով:

Սոցիալական համակարգի կառուցարկման մեջ նորարարությունների ներառումը ենթադրում է նորույթի չափանիշների հստակեցում: Այս դեպքում ավանդույթն ըմբռնվում է որպես տարբեր գործընթացները կարգավորող աշխարհայացքային սկզբունքների, արժեքային դիրքորոշումների համակարգ: Գիտական ավանդույթների համատեքստում նորարարական գործունեությունը կարելի է դիտարկել որպես մի գործընթաց, որը կարող է ապահովել կարծրատիպերը կարգավորող արդյունավետ միջոցների մշակումը:

Բնութագրելով նորարարական գործունեության էությունը՝ ավանդույթն ապահովում է հասարակության զարգացման մեջ նորարարության ներառումը՝ ինչը համակարգին հաղորդում է դինամիկ կայունություն: Սա ավանդույթի մեկ այլ առանձնահատկություն է: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հոգեկերտվածքում արտացոլված առանձնահատուկ արժեքների և ավանդույթների սերնդեսե-

րունդ փոխանցելու կարողությունը ցանկացած հանրության ինքնավերարտադրության այն որոշիչ գործոնն է, որը պատմականորեն տևական մի փուլում ապահովում է տվյալ հասարակական համակարգի գոյությունն ու զարգացումը:

Ավանդական հասարակությունից ժամանակակից հասարակության անցման գործընթացը բավականին բարդ է: Հասարակության մեջ բոլոր նշանակալի փոխկերպումների առանձնահատկությունն այն է, որ դրանք ընթանում են ցավոտ, սոցիալ-հոգեբանական լարված մթնոլորտում: Երբևէ որևէ արդիականացում միանգամայն հարթ ու սահուն չի ընթացել: «Ժամանակակից աշխարհում ժողովուրդների, երկրների, ամբողջ մարդկության կյանքում կատարված փոփոխությունների բնույթը անհնարին է ըմբռնել, առանց անդրադառնալու ժամանակակից աշխարհին բնորոշ «ավանդական-ազատական գերքաղաքակրթություն» երկակի հակադրությանը: Բոլոր կարևորագույն գործընթացները պետք է իմաստավորվեն այս հակադրության տեսանկյունից»:¹²¹ Ավանդական հասարակությունից ժամանակակիցին անցման ժամանակ պրակտիկորեն փոխվում են կենսական բոլոր պատկերացումները, առաջնահերթությունների համակարգը, ռացիոնալության տիպը, անձի հոգեկերտվածքը և այլն: «Ակնհայտ դարձավ, որ գլոբալ մասշտաբով տարածվում են զարգացած երկրներում ձևավորված և նրանց աշխարհաքաղաքական առաջատար դիրքը պայմանավորող որոշակի սոցիոմշակութային միտումներ, որոնք դրսևորվում են հասարակության սոցիալական կազմակերպման բոլոր մակարդակներում: Սոցիոմշակութային այդ համընդհանուր միտումներն ընդունված է անվանել արդիականացում (մոդեռնացում)»:¹²² «Երկրորդ» (նախկին սոցիալիստական) և «երրորդ» աշխարհի երկրների առնչությամբ արդիականացումը կարելի է դիտարկել որպես ներքին և արտաքին գործոններով պայմանավորված փոխակերպումների ամբողջություն: Այդ երկրների ինտելեկտուալ և

¹²¹ Гавров С., Социокультурная традиция и модернизация российского общества. М., МГУКИ, 2002, с.76.

¹²² Տե՛ս Հարությունյան Մ. Ա., Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., «Նաիրի», 2014, էջ 78:

քաղաքական ընտրանին, որն օժտված է տեղեկացվածության բարձր մակարդակով, կողմնորոշվելով դեպի մոդեռնի երկրները, ջանում է հասարակության զարգացումն ուղղորդել դեպի նոր, ավելի բարձր մակարդակի: Արդիականացումը, այսպիսով, ինքնառաջադիմող գործընթաց չէ, մեծամասամբ դա զարգացած երկրների նվաճումները սեփական երկիր տեղափոխելու փորձ է: Բացի այդ, արդիականացման հարացույցը որոշվում է մրցակցությամբ, նրա ներուժով, հետևաբար արդիականացման առարկան ոչ միայն զարգացման մոդելներ են, այլև արժեքային կողմնորոշումներ:

Դ. Բերգերը և Լուկմանը առանձնացնում են արդիականացման հետևյալ սկզբունքները.

- արդիականացումը նախ և առաջ տվյալ հասարակության ներքին նվաճումն է,
- սոցիոմշակութային ոլորտում ծավալվող արդիականացման գործընթացները կոմպլեմենտար բնույթ ունեն, այսինքն՝ աջակցում են միմյանց,
- արդիականացման գործընթացում առաջատար դիրքեր գրավող երկրները չեն խոչընդոտում ավելի վաղ փուլում գտնվող երկրներին,
- արդիականացման գործընթացներն ունեն ընդհանուր ուղղվածություն:¹²³

Ավանդական հասարակություններում «ավանդույթ-նորարարություն-կարծրատիպ» շրթայի փոխակերպումները հիմնականում ունեցել են ներածին (էնդոգեն), այսինքն՝ ներքին պատճառներով պայմանավորվածություն: Ինչ վերաբերում է արտածին (էկզոգեն) գործոնին, ապա այն պայմանավորված է եղել օտար կամ սեփական ռազմական ագրեսիայի, կամ այլ պետությունների հետ առևտրական հարաբերությունների հանգամանքով: Բոլոր դեպքերում, սակայն, փոփոխությունների ներածին գործոնը արտածինի նկատմամբ գերիշխել է, քանի որ ավանդական հասարակությունները հիմնական

¹²³ Տե՛ս **Бергер П. Лукман.**, Социальное конструирование реальности. М., «Медиум», 1995, էջ 323:

նուն ինքնաբավ էին, ինչի պատճառով էլ նրանցում նորոգարությունները շատ դանդաղ էին վերածվում կարծրատիպերի: Այս առնչությամբ Պ. Բուրդյեն իրավացիորեն նկատում է, որ հաճախ մարդիկ «անհամեմատ ավելի մեծ նշանակություն են տալիս նախընթաց փորձին, քանի որ կենսագործունեության ընթացքում առաջանում է այսպես կոչված վարքի կարծրատիպացման էֆեկտ, երբ մարդիկ նախընտրում են վարքի հարմարվողական այն մոդելները, որոնք անցյալում ինչ-որ դրական արդյունք են տվել, թեև նոր պայմաններում դրանք այլևս ոչ ռացիոնալ են և անարդյունավետ»: ¹²⁴ Ասվածի օրինակ կարող է ծառայել հետխորհրդային հասարակություններում ավագ սերնդի սոցիալականացման դժվարությունները, որոնք, մասնավորապես, պայմանավորված են սոցիոմշակութային նոր պայմաններում ավանդական հասարակության և խորհրդային վարչահրամայական համակարգի տրամաբանությամբ գործելու հանգամանքով: Այլ կերպ ասած՝ հասարակական գիտակցությունը միշտ չէ, որ կարողանում է համընթաց քայլել տնտեսական ու քաղաքական վերափոխումներին: Հին արժեքները նորերով փոխարինելը կամ նորացնելը դժվարին ընթացք է, որն ուղեկցվում է հիվանդագին դրսևորումներով: Դժվարություն հարուցող պատճառներից մեկը «արժեքների արմատական փոփոխության» պահանջն է, որը անհարկի արժեզրկելով հինը, չափից ավելի է արժևորում նորը: Բոլոր դեպքերում, սակայն, մշակութային օտար փորձը, արժեքները, խորհրդանիշային իմաստներն ու կողերը յուրացնելիս՝ ազգային սոցիոմշակութային ավանդույթներն աստիճանաբար հարմարվում են դրանց: Ճապոնիայում և Ասիայի «արդյունաբերական երկրներում» արդիականացման գործընթացների հաջողությունները ցույց տվեցին, որ այդ երկրների սոցիոմշակութային կյանքի դինամիկական աստիճանաբար համաժամանակեցվում է արևմտյան քաղաքակրթության սոցիոմշակութային հարաշարժությանը: Ի դեպ, այդ գործընթացները վերաբերում են նաև արժեքների համակարգի, վարքի մոդելների, անգամ անձի մարդածին (անտրոպոգեն) բնութագրերի փոփոխությանը: Բանն այն է,

¹²⁴ Бурдые П., Социология социального пространства, М., «Алтейя», 2005, с. 89 .

որ ցանկացած սոցիոմշակութային ավանդույթ բաղկացած է պահպանողական և ստեղծագործական (կրեատիվ) բաղադրիչներից, որոնցից կրեատիվ բաղադրիչը պայմանավորում է մշակույթի նորամուծությունները գեներացնելու, ըստ էության՝ դրանց վերարտադրումը կազմակերպելու կարողությունը:

Արդիականության կարևոր սկզբունքներից մեկն էլ ազդեցության ոլորտների ընդլայնման ձգտումն է, ինչը դիտարկվում է որպես համաշխարհայնացում: Խնդիրն այն է, որ համաշխարհայնացման ժամանակակից միտումները ոչ այլ ինչ են, եթե ոչ արդիականացման պատմական որոշակի փուլ, երբ փոփոխությունների վեկտորային ամբողջական հոսքն ուղղված է տվյալ քաղաքակրթության արժեքների և ինստիտուտների վրա հիմնված փոխկապակցված և փոխըացնող աշխարհի ստեղծմանը: Հաշվի առնելով արդի հաղորդակցային և տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, կարելի է ասել, որ ձևավորվում է միասնական տեղեկատվական տարածություն, որն իր հերթին հանգեցնում է միօրինակ աշխարհընկալման՝ քաղաքակրթությունը գնալով ձեռք է բերում էլ ավելի մեծ ներքին միատեսակություն: Պետք է նկատել, սակայն, որ «ամեն մի հասարակություն և սոցիալական խումբ նախ և առաջ համամարդկային փորձից փոխառնում է միայն կյանքի այն ձևերը, որոնք ընկալելի են տվյալ սոցիալ-քաղաքական, տնտեսական և մշակութային հնարավորությունների շրջանակներում: Երկրորդ, համաշխարհայնացման հակազդեցությունը հասարակությունների սեփական նույնականության պահպանման բնագոյային ձգտումն է, որը հատկապես ավելի վառ է դրսևորվում մշակութային ոլորտում, կրոնում, ազգային գիտակցության մեջ: Երրորդ, քաղաքակրթությունների և հասարակությունների շարքը, գտնվելով զարգացման նախաարդյունաբերական փուլում, դեռ թույլ է ընդգրկվում փոխհարաբերությունների կապերում և համակարգերում»:¹²⁵

¹²⁵ **Ирхин Ю. В.**, К вопросу о кросскультурных исследованиях: Восток-Запад//Социологические исследования. 2005, №2, с.131-132.

Արդի հասարակության մեջ մի կողմից ձևավորվում են միասնական տնտեսական, քաղաքական ու մշակութային համակարգեր, իսկ մյուս կողմից հարաբերականորեն անկախ տնտեսական, սոցիալական համակարգեր ու կրոնական համայնքներ: Եթե ավանդական հասարակության մեջ, որտեղ տիրում էր միատարրությունը և անխախտ սկզբունքները, մարդկային հարաբերությունները կարգավորվում էին նախապես սահմանված ավանդույթների միջոցով, ապա հետավանդական հասարակության մեջ՝ օրենքի ուժով: Եթե նախկինում մարդիկ ապավինում էին գերբնական ուժերին, ճակատագրին կամ առաջնորդի իմաստությանը, ապա ժամանակակից պայմաններում նրանք ստիպված են անձամբ կայացնել որոշումներ՝ հենվելով սեփական փորձին և ինտուիցիային: Քանի որ քաղաքակրթության հիմքում ընկած են մարդու կենսական պահանջմունքները, ապա դրանք էլ խթան են հանդիսանում մարդու կյանքն ավելի ակտիվացնելու համար: Կենսագործունեության այս ձևն ապահովում է ինչպես անհատի, այնպես էլ հասարակության վերարտադրությունը: «Մարդը գնահատվում է ըստ սոցիալապես օգտակար առարկաներ ստեղծելու, բազմացնելու և բարելավելու իր ընդունակության: Այսպիսով, արտադրողականությամբ է որոշվում բնությանը տիրելու և այն վերափոխելու աստիճանը, չկարգավորվող բնական միջավայրի առաջադիմական փոխարինումը կարգավորվող տեխնիկական շրջապատով»:¹²⁶

Այսօր շուկաներն ամեն ինչ վերածում են ապրանքի և մարդկային հարաբերությունները փոխարինում զուտ շահերով: Եթե ավանդական հասարակության մեջ շեշտը դրվում է գործելու եղանակի, միջոցների, ռեսուրսների վրա, որտեղ առաջնորդվում են բոլորի նման ապրելու և բոլորից չտարբերվելու սկզբունքով, ապա ժամանակակից հասարակության մեջ շեշտը դրվում է գործունեության նպատակի արդյունքների վրա, կարևորվում է գործարարության սկզբունքը: Ազատ մարդու գործունեությունը և նպատակի վերջնական ար-

¹²⁶ **Маркузе Г.**, Эрос и цивилизация. Одномерный человек. Исследование идеологии развитого индустриального общества, М., «АСТ», 2003, с. 319.

դյունքը որոշվում են շուկայում ունեցած նրա հաջողությամբ կամ անհաջողությամբ: Այդ պատճառով էլ հիմնական սկզբունքը դառնում է առաջարկն ու պահանջարկը:

Ժամանակակից հասարակությունը ավանդական հասարակության բազմակողմանի փոխակերպման արդյունք է: Ինչպես նշում է Յու. Հաբերմասը «կապիտալիզմը ձևավորեց արտադրողական ուժերի զարգացման ինստիտուտային մեխանիզմներ և դրանով իսկ այն դարձրեց կայուն ու հուսալի: Արտադրության շուկայական եղանակը տնտեսությունը դարձնում է հարաբերականորեն ինքնավար համակարգ, այն տարանջատում է քաղաքական և սոցիոմշակութային համակարգից, ինչի շնորհիվ անխուսափելի է դառնում ավանդույթներից ու բարոյական նորմատիվ համակարգից առանձին մասնավոր իրավունքի համակարգի ստեղծումը: Ավանդական հասարակության բնորոշ բարոյականությունը փոխարինվում է ռացիոնալության սկզբունքով կառուցված բարոյականության»:¹²⁷

Տեխնիկական բաղադրամասը ժամանակակից մշակույթում հատուկ տեղ է զբաղեցնում, իսկ մարդու տեխնիկայի հետ փոխազդեցության խնդիրը ձեռք է բերում յուրահատուկ այժմեականություն, քանի որ սոցիոմշակութային փորձի փոխանցման հարցում տեխնիկական առումները երկրորդականից դառնում են գլխավոր: Տեխնիկական քաղաքակրթության ազդեցության տակ անձը վերածվում է զանգվածային մարդու, ինչի հետևանքով նվազում են ավանդական մշակույթի գործառական հնարավորությունները: Ժամանակակից հասարակությունը դառնում է բազմակարծիքային ու այլընտրանքային և ստեղծվում է այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, երբ մարդը ոչ միայն չի զգում մշակութային թերարժեքություն, այլև դառնում է նոր կացութաձևին ու սպրեյակերպին առավել հարմարվող էակ: Մարդը ոչ թե սոցիալական պատկանելիություն է մատնանշում, այլև բնութագրում է որոշակի աշխարհըմբռնում, մտածողության ձև ու կենսատո: Իհարկե, այս ամենը հասարակության համար ծառայում է որպես գործառության ու վերարտադրության նախա-

¹²⁷ Տե՛ս **Хабермас Ю.**, Концепции модерна. Ретроспектива двух традиций. Политические работы. М., «Праксис», 1995, с. 284-285.

դրյալներ, քանի որ կյանքի դինամիզմը, ինտեգրացման միտումների ուժեղացումը, հեռահաղորդակցական կապերի տարածումը կյանքը դարձնում են ավելի հարմարավետ, միակերպ ու մատչելի: Սակայն, ավանդական հասարակությունից արդյունաբերական հասարակության անցման ժամանակահատվածում հայտնվեցին մարդկային հոծ զանգվածներ, որոնք չհաղորդակցվեցին ավանդական մշակույթի հետ: Տեխնոժին քաղաքակրթությունը ստեղծեց կրթական նոր համակարգ, որը թեև մասսաներին սովորեցնում է նոր տեխնիկայից օգտվելու հիմունքները, բայց լինելով մատչելի ու մասսայական, չի կարողանում զբաղվել դաստիարակչական հարցերով և չի կարողանում մասսաներին փոխանցել պատմական մեծ խնդիրների, մշակույթի ու բարոյականության իմաստն ու բովանդակությունը: Մի կողմից տեխնիկան, որպես ժամանակակից զարգացած հասարակությունում մարդու շրջակա միջավայրի անբաժանելի մաս, ընդլայնում է նրա հնարավորությունները արտադրության գործընթացում, իսկ մյուս կողմից՝ մարդը դառնում է տեխնիկական համակարգերի սպառման արդյունք, որոնց սպասարկման համար նա ծախսում է իր կարողությունները: Նույնիսկ, եթե ուշադրություն չդարձնենք հաղորդակցական ցանցերին և մարդու վարքի և վիճակի դեկավարման համար ռեալ գոյություն ունեցող հատուկ տեխնիկական համակարգերին, այնուամենայնիվ ակնհայտ է տեխնիկայի՝ մարդու մշակույթի վրա ազդեցության փաստը, նրա մտածելակերպի և աշխարհի գեղարվեստական-գեղագիտական ընկալումը և, հետևաբար, ավանդական մշակութային գործընթացների փոփոխության վրա նրա ազդեցությունը: Ինչպես նշում է Վ. Միրզոյանը. «կարևոր է հասկանալ, որ «տեխնոկրատիզմը» ոչ թե ինքնին կառավարիչի գործելակերպն է, այլ մտածելակերպը: Վերջինս՝ մեքենայական մտածելակերպը, կամ ավելի ստույգ՝ մտածելակերպի մեքենայականությունը, վերջիվերջո ոչ թե սոսկ դրսևորվում է գործնական միջոցառումների մեջ, այլ պայմանավորում է դրանց հիմնական ուղղվածությունը: Գործելակերպը ոչ թե սոսկ նպատակադրում է, այլ նաև մտածելակերպի առարկայական արդյունք, որի մեջ վճռորոշ է ժամանակի գործոնը»:¹²⁸

¹²⁸ Միրզոյան Վ., Ժամանակակից կառավարաբանության մեթոդաբանական ճգնա-

Սոցիալական կապիտալը, որը ստեղծվել ու ավանդույթի շնորհիվ ժառանգաբար փոխանցվել է, մշտապես լրացվում է և նորացվում: Երբեմն գիտատեխնիկական առաջընթացը մեր կյանքը ավելի որոշակի ու կանխատեսելի դարձնելու փոխարեն հարուցում է բացասական հետևանքներ: Հենց նույն նորարարությունը, որ բարձրացնում է արտադրողականությունը կամ ստեղծում արդյունաբերության նոր ճյուղ, քայքայում է գոյություն ունեցող համակեցությունը կամ ողջ սպրեյակերպը դարձնում հնացած: Եվ ահա տեխնոլոգիական առաջընթացի սանդուղքին կանգնած հասարակությունը ստիպված է հասնողի դերում լինել: Մարդկությունը քայլ առ քայլ առաջանում է դեպի առաջադիմությունը և ամեն մի նոր ավելի լավ է, քան հինը: Այս մշակույթի տարածմանը զուգահեռ խորանում է սերունդների միջև հակասությունը, մոռացության են մատնվում ավանդույթներն ու սովորույթները: Արդիականության հիմքում ընկած հիմնարար սկզբունքներից մեկը դառնում է անհատի առաջնայնության սկզբունքը: Մարդն ազատվում է խմբային կապերի պարտադրանքից և հնարավորություն է ընձեռվում, որ նա ազատորեն ընտրի նույնականացման խմբեր, ինքնուրույն որոշի իր գործողությունները: Շուկայական կողմնորոշման պայմաններում մարդն իր անհատականության զգացումը փնտրում է ոչ թե իր մեջ, իր ստեղծարար ունակությունների մեջ, այլ իր մասին ուրիշների կարծիքի մեջ: «Իմ եսը կարելի է որոշել այն գնով, որ ինձ համար տվել են»:¹²⁹ Անորոշության մեջ հայտնված մարդը կորցնում է սեփական կյանքի տնտեսական պայմանների նկատմամբ վերահսկողությունը, ինչը նրան պարտադրում է վերանայել նաև սեփական իմաստաարժեքային ողջ համակարգը: Չգտելով հարմարվել փոխակերպվող պայմաններին, մարդիկ սկսում են մերժել կայունությունն ու տևականությունը, որպես բնականոն գոյության կարևոր պայմաններ: Անհնարին է դառնում գոյատևել վարքի ավանդական ընդունված ձևով:

ժամի աշխարհայացքային հիմքերը, «Բանքեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 131.4, 2010, էջ 27:

¹²⁹ **Фромм Э.**, Бегство от свободы. Человек для себя. Минск, «Попорри», 2000, с. 461.

Համաշխարհայնացումը ստեղծում է նոր պայմաններ, որտեղ միասնական մշակույթ չկա, և այս բազմարժեքության մեջ կողմնորոշման հենակետ չունենալով, անհատի գիտակցությունը երկատվում է, որին բնորոշ են ոչ միայն հակասական, այլև իրար բացառող դիրքորոշումները: Այսօր մարդը միայնակ է, ասես շրջապատված չէ բարեկամության մթնոլորտով: Ֆ. Նիցշեի օրինակով, չկարողանալով հենարան գտնել ոչ մախկին, ոչ ներկա սերունդներում, կտրված իրական կյանքի ավանդույթներից, մարդը զբաղվելով հոգևոր գործունեությամբ չի կարող որևէ ուղու ավարտող լինել: Նրան սպառնում է պատահականությունը և դրա մեջ նա չի կարող առաջ շարժվել և կորցնում է իրեն: Աշխարհը չի տալիս նրան առաջադրանքներ, որով նա կապվում է: Հենվելով ռիսկի, ինչպես նաև վախի վրա, նա ինքն իրեն պետք է առաջադրանք տա: Եվ ստիպված իր կյանքի ուղին անցնում է ոլորապտույտ ճանապարհով, ունենալով մշտապես կորուստներ: Այն աշխարհը, որը հիմնված էր ավանդույթների, հավատի բանիմացության ու հեղինակության վրա, դուրս է եկել իր սահմաններից և դարձել է ոչ թե ավելի կառավարելի, այլ հսկողությունից դուրս: «Անհետացող աշխարհ» այսպես է այն անվանել Է. Գիդդենսը:¹³⁰

Նկատենք նաև, որ մարդիկ, որպես կանոն, հակված են իրենց նույնականացնել ավելի կայունի, տևականի, հիմնարարի, քան վերջավոր կյանքի հետ, և այդ պատճառով էլ նրանք ձգտում են համերաշխության, խմբային նույնականության: Ժամանակակից աշխարհում ձևավորվում են կոլեկտիվ նույնականության նոր ձևեր, որոնք օրեցօր հագեցվում են զանգվածային գլոբալ մշակույթի նոր տարրերով: Այդ գործընթացները պայմանավորված են մի շարք հանգամանքներով. առաջին՝ ազգային պետության գործառույթները (կապ, կրթական համակարգեր, ոստիկանական գործառույթներ և այլն) աստիճանաբար փոխարինվում են տեղական ինքնակառավարման գործառույթներով: Երկրորդ՝ սեփական տարածքում աշխարհաքաղաքական ինքնիշխանության լրիվության գաղափարը արմատապես

¹³⁰ Տե՛ս **Гидденс Э.** Ускользящий мир как глобализация меняет нашу жизнь. М., «Весь мир», էջ 19:

վերինաստավորվում և ընկալվում է որպես հնացած, ժամանակավրեպ գաղափար: Երրորդ՝ կոլեկտիվ նույնականությունը դուրս գալով ազգային սահմաններից՝ ձեռք է բերում դրսևորման գլոբալ ձևեր, ինչը նպաստում է ազատության մակարդակի բարձրացմանը, ազգային հանրությունների և մշակութային ավանդույթների վերակառուցապատկերմանը: Չորրորդ՝ ձևավորվող տեղեկատվական և մշակութային գլոբալ տարածության շրջանակներում արդիականացվում են սոցիալական հեղինակության (հարգի) ձևերը, վարքի ռեֆերենտ մոդելները, արժեքներն ու նորմերը: Հինգերորդ՝ ժամանակակից զանգվածային-սպառողական հասարակություններում մարդը ստանում է սոցիալական համերաշխության տրանսմշակութային գլոբալ նոր դրսևորումների հետ իրեն նույնականացնելու նոր հնարավորություններ, որոնք էապես փոխարինում են նույնականացման մախկին գործոններին (համաշխարհային կրոններ, ազգեր, ազգային պետություններ):

Ի մի բերելով ասվածը, կարելի է եզրակացնել, որ պատմական դինամիկայի վեկտորը սոցիալական համերաշխության ինստիտուցիոնալացված, ուղղահայաց ինտեգրված ձևերից տեղափոխվել է դեպի ցանցային ձևերը, հասարակական շարժումները, գլոբալ նորմերը, վարքի մոդելները, արժեքային համակարգերը: Նոր դարաշրջանի մարդն իրեն կարող է նույնականացնել անդրազգային (տրանսնացիոնալ) շարժումների, այդ թվում՝ հակագլոբալիստների, էկոլոգիստների(Գրինպիս), սեքսուալ փոքրամասնությունների, նոն-կոնֆորմիստական տիպի սպրանքների և ծառայությունների սպառող անձանց հետ: Ինքնանույնականացման և համերաշխության նոր ձևերը հնարավորություն են ստեղծում սեփական անձը նույնացնելու կինոարդյունաբերության և շոու բիզնեսի կողմից արտադրվող և գլոբալ մասշտաբով հաղորդակցության և տեղեկատվության զանգվածային միջոցներով տարածվող մշակութային արտադրանքի հետ: Անձը կարող է իրեն գիտակցել որպես գովազդի ամենատարբեր ձևերի միջոցով ստեղծվող և վերարտադրվող սոցիալական հեղինակավոր խմբի մասնակից:

Իրային, առարկայական աշխարհը աստիճանաբար կորցնում է իր որոշակիությունը և գոյության տևողությունը: XXI դարում մարդ-

կությունը հայտնվել է շատ բարդ և հետևանքների առումով խիստ կարևոր՝ զարգացման երկու ուղիների ընտրության առջև: Առաջինը ենթադրում է տնտեսության զարգացման և սոցիոմշակութային դինամիկայի հետագա արագացում, ինչը կանխատեսելի հեռանկարում մոլորակի բիոցենոզի, այդ թվում և մարդկության, համար կարող է աղետալի հետևանքների հանգեցնել: Երկրորդ ուղին ենթադրում է անցում սոցիումի ավելի կայուն վիճակի, որը բնութագրվում է ոչ միայն նոր, ռեսուրսախնայ տեխնոլոգիաների օգտագործմամբ, այլև ենթադրում է մարդկությանը բնորոշ դինամիկայի բոլոր ձևերի դանդաղեցում, ըստ էության հրաժարում առաջադիմության գաղափարախոսությունից: Չանգվածային գլոբալ մշակույթը շահույթ ստանալու ուտիլիտար խնդիրներից գատ նպաստում է արևմտյան քաղաքակրթության պատմական գլոբալ խնդրի ընդարձակմանը: Այդ խնդիրը միատեսակ նորարարության ձևավորումն է համաշխարհային միասնական քաղաքակրթության ստեղծումը, որը հիմնված է արժեքանորմատիվային միասնական համակարգի վարքի մոդելների, արտադրության և սպառման միասնական ձևերի վրա: Նոր մշակութային ռեալությունն առաջարկում է արժեքների, իմաստների, վարքի կարծրատիպերի ունիվերսալ հավաքակազմ: Նոր մշակույթի շրջանակներում գոյանում են ենթամշակույթներ, որոնցից յուրաքանչյուրը պատմական նոր իրողությունների համատեքստում ջանում է յուրովի մեկնաբանել արդիականությունը:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից հասարակության մեջ ավանդույթների և նորարարության փոխհարաբերության հետ կապված հարցերը դինամիկ բնույթ ունեն: Ընդամին, ցանկացած նորարարություն ստեղծվում է հասարակության զարգացման մասին (որպես դրա կատարելագործում կամ ի հակադրություն դրա) ավանդական պատկերացումների հիմքի վրա: Նորարարական գործունեություն ծավալող մարդիկ միշտ պետք է հիշեն հաջորդ սերունդների առջև իրենց պատասխանատվության մասին, նրանք պետք է աշխատեն, որ նորամուծությունները հասարակության հետագա զարգացման համար դառնան ամուր հիմք և բարի ավանդույթ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Արդի գրքալ փոփոխությունների, սոցիալ-քաղաքական խոր տեղաշարժերի և տեխնոլոգիական հեղափոխությունների փուլում անցյալի ժառանգությունն ու փորձը նորովի իմաստավորելու, գնահատելու և հետագա զարգացման առավել արդյունավետ ուղիներ որոնելու բարդ խնդիրները տեսական և գործնական նոր հնչեղություն են ձեռք բերել: Քաղաքակրթության ճգնաժամային երևույթներին, սոցիալական նոր իրականությանը, երրորդ հազարամյակի մարտահրավերներին արձագանքելու և համապատասխան ռազմավարություն մշակելու համար անհրաժեշտ է նորովի գնահատել և իմաստավորել անցյալի ժառանգությունը՝ այն դիտարկել արդի դարաշրջանի առանձնահատկությունների, սոցիալ-պատմական նոր իրողությունների, մարդու և հասարակության միջև կապերի նոր բնույթի հիմնախնդիրների համատեքստում:

Ժամանակակից փոխակերպվող և համաշխարհայնացվող աշխարհում, ուր ներհամակարգային կայունության և հուսալիության հարցերը ազգային ու պետական համակարգերի անվտանգության հայեցակարգերի կարևոր բաղկացուցիչ են, ավանդույթների սոցիոմշակութային գործառույթների նորովի մեկնաբանումը ձեռք է բերել տեսական ու գործնական նոր հնչեղություն: Այս կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում հասարակական կյանքի կառուցարկման և կանոնակարգման, համակեցության սոցիոմշակութային սկզբունքների գործառության, կենսափորձի ընտրասերման և փոխանցման, ազգային ինքնության և նույնականության ձևավորման գործում ավանդույթների դերի և գործառույթների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը:

Որպես ամբողջական համակարգ՝ կայուն և հավասարակշռված պայմաններում հասարակությունը օժտված չէ ինքնաշարժման, ինքնազարգացման ներքին մեխանիզմներով ու հնարավորություններով: Հասարակական համակարգային փոփոխությունները և գործառության հնարավորությունը բացատրվում են համակարգին ներհատուկ կառուցվածքային, գործառական, վերարտադրական գործընթացներ-

րով և սոցիոմշակութային փոփոխություններով: Համաշխարհայնացման գործընթացները, թափանցելով հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային ոլորտներ, վերափոխում են նաև մարդկանց կենսակերպը, ձևավորում են համագործակցության նոր ձևեր ու սոցիոմշակութային նոր ավանդույթներ: Այդ է պատճառը, որ ուսումնական ձեռնարկում ավանդույթների գործառական առանձնահատկությունները քննարկվել են որպես հասարակության կառուցարկման եղանակ և արվել են հետևյալ եզրակացությունները.

✓ Ելնելով ավանդույթների հասարակագիտական, մշակութաբանական, ազգագրական, գեղագիտական և փիլիսոփայական ըմբռնումների վերլուծությունից, ավանդույթները պատմական զարգացման ընթացքում վերածվում են յուրահատուկ սոցիալական հաստատության, յուրահատուկ սոցիոմշակութային մեխանիզմի, որի օգնությամբ կառուցարկվում է հասարակության արժեքային-նորմատիվ համակարգը և նրա անվթար գործառության պայմանները: Հանդես գալով որպես կոլեկտիվ գործունեության կարծրատիպեր, ավանդույթները կազմակերպում են կենսագործունեության եղանակների, մտածողության և վարքի տիպերի վերարտադրության գործընթացը: Եվ, քանի որ, ժամանակակից մարդու ինքնորոշումն ու ինքնակառավարումը հենվում է նախորդ սերնդի ժառանգության վրա, ուստի խնդիր է առաջանում նոր սերնդի գիտակցությունը ձևավորել այնպես, որ այն ի վիճակի լինի լուծելու երկու հիմնական խնդիր. առաջին՝ հարմարվի անընդհատ փոփոխվող սոցիալական միջավայրին և երկրորդ՝ պահպանի, իրենից հետո եկող սերնդին փոխանցի նախորդ սերնդի փորձը: Արդյունքում ստացվում է, որ սոցիալական բարդ ու շարժուն ցանցում ձևավորվում են միասնական գործունեության եղանակները, որոնք նոր սոցիոմշակութային ավանդույթների ստեղծման հիմք են հանդիսանում:

✓ Պատմության տարբեր ժամանակահատվածներում սոցիալական համակարգերը գոյատևում են այն բանի շնորհիվ, որ նրանք որոշակի մեխանիզմների օգնությամբ համալրվում են նոր սոցիոմշակութային արժեքներով: Լինելով սերունդների կենսափորձի փոխանց-

ման եղանակ, սոցիալական կենսավորձի ընտրության, փորձարկման և կուտակման սոցիոմշակութային համակարգ, ավանդույթները, կենսավորձի ընտրողական ամրագրման միջոցով, օրինականացում և գործողության մեջ են դնում մարդկային կենսավորձի այն տարրերը, որոնք նպաստում են սոցիալական համակարգի ներքին կազմակերպմանն ու կայուն զարգացմանը: Ավանդույթը մի կողմից հանդես է գալիս որպես սոցիումին անհատի հարմարման եղանակ, մյուս կողմից՝ որպես հասարակության մեջ հարաբերությունների կարգավորման սոցիոմշակութային գործիք:

✓ Արդի քաղաքակրթական իրադարձությունների խառնարանում ճիշտ կողմնորոշվելու, առաջատարներին հասնելու, սակայն նրանց արժեհամակարգերի մեջ չտարալուծվելու համար կարևորվում է ազգային ինքնության, ազգային տիպի, տեսակի պահպանումը: Ավանդույթների հիմնախնդիրը քննարկելով ինչպես քաղաքակրթական, այնպես էլ մշակութաբանական գործոնների համատեքստում, նկատելի է դառնում այն փաստը, որ ազգային կենսագործունեության նախընթաց փորձը սերնդեսերունդ փոխանցվում է քաղաքակրթական և մշակութային՝ նույնականության պահպանման երկփեղկված կառույցների միջոցով: Ուստի ավանդույթների քաղաքակրթական ուղղվածությունը նպաստում է ազգային կյանքի արդիականացմանը, իսկ մշակութային հենքը՝ ազգային կյանքի ինքնության և ինքնատիպության պահպանմանը:

✓ Ավանդույթների վերարտադրման հիմնահարցը քննարկելով սոցիոմշակութային հիշողության համատեքստում, վերլուծելով դրա կառուցվածքն ու զարգացման ներքին տրամաբանությունը, ակնհայտ է դառնում, որ սոցիոմշակութային հիշողությունը անցյալը վերծանելու այն հոգևոր պատրաստվածությունն է, որի օգնությամբ մարդկության նախորդ կենսավորձը ներառվում է ժամանակակից սոցիոմշակութային համակարգի մեջ և նպաստում սոցիալական աշխարհի արդիականացմանը՝ պահպանելով անցյալի, ներկայի և ապագայի շարունակականությունն ու համակեցության ինտերսուբյեկտիվ բնույթը: Սոցիոմշակութային հիշողությունը դիտարկվում է որպես որոշակի չափորոշիչ, ինչը հնարավորություն է ընձեռնում ա-

վանդույթների վերարտադրությանը, ինչը հնարավորություն է տալիս հասկանալու սոցիոմշակութային գործընթացների բնութագիրը: Քաղաքակրթական զարգացման արդի փուլում սոցիոմշակութային հիշողությունը դիտարկվում է նաև որպես կյանքի արդիականացման և ապագայի ծրագրավորման միջոց: Դիշտ է, ժամանակակից մարդը օտարվելով տնտեսական, սոցիալական և հոգևոր կյանքից, փորձում է իր կյանքը ձևավորել ու կազմակերպել անհատական հարթության վրա, բայց ունենալով որոշակի ազգային ու սոցիալական ինքնություն ու պատկանելիություն (կոլեկտիվ հիշողություն), ի վերջո կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործունեության մեջ ղեկավարվում է սոցիոմշակութային հիշողության հարացույցներով: Այս իրողությունը մեկ անգամ ևս փաստում է, որ անցյալը վերակերտվում է ներկայի պահանջներին համապատասխան և հակառակը՝ ներկան չի կարող անտեսել անցյալը: Սոցիոմշակութային հիշողությունը ներկայի և անցյալի կապը դարձնում է անընդհատ և հնարավորություն է տալիս կողմնորոշվել անցյալից ներկա և ներկայից անցյալ «ուղևորվելու» դժվարին գործընթացում: Երբ համակարգը չի ղեկավարվում անցյալն ու ներկան կապող սոցիոմշակութային մեխանիզմներով, խզվում է ժառանգորդման հաջորդականությունը, և փոխակերպումները հարուցում են սոցիոմշակութային տատանումներ ու ճգնաժամային իրավիճակներ:

✓ Մարդկային կենսագործունեության ամենօրյա կյանքը առօրեականությունն է, ուր և գործառում են ավանդույթներն ու սովորույթները, որոնք սերնդեսերունդ ապահովում են մարդկային փորձի պահպանումը, վերարտադրումը և փոխանցումը: Դրանք հանդես են գալիս, որպես սոցիոմշակութային առօրեականության կարևոր բաղադրիչներ, որոնք հնարավորություն են ընձեռում մարդկանց ներառվելու սոցիոմշակութային առօրեականության մեջ: Ավանդույթները համակեցության այնպիսի տարրեր են, որոնք առօրյա կյանքում մարդուն հաղորդում են հուսալիություն, վստահություն և ապահովվածություն, քանի որ ամենօրյա կյանքը այն մտերմիկ հարաբերությունների աշխարհն է, ուր մարդը իր արարքների ու վարքի համար պատասխանատվությունը ասես կիսում է նախնիների հետ: Ուստի

ուրվագծվում է այն տեսանկյունը, ըստ որի ավանդույթները դիտարկվում են որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմ:

✓ Ժամանակակից փոխակերպվող հասարակություններում ավանդույթների և նորարարական գործընթացների փոխհարաբերություններն ունեն հակասական բնույթ: Ինչպես ցույց են տալիս քաղաքակրթական արդի գործընթացները, հասարակության զարգացման միտումները երկփեղկվում են՝ մի կողմից հասարակական կապերի զարգացման շնորհիվ, ինչպես նաև նոր տիպի հաղորդակցման միջոցների ներդրմամբ, աշխարհը ձեռք է բերում միասնական, ամբողջական բնույթ: Սկսում է աճել մարդկային համընդհանուր պահանջ-մոնքների գիտակցական մակարդակը, ինչը ստանում է կենտրոնամետ որակներ, գործընթաց, որտեղ ժամանակակից մարդը հանդիսանում է համամարդկային ամբողջի անքակտելի ու մասնակից մասնիկը: Իսկ մյուս կողմից, ազգային և անհատական ինքնագիտակցության մակարդակի բարձրացման արդյունքում տեղի է ունենում հանրույթների պառակտում և մասնատում, ինչը խոսում է կենտրոնախույս այնպիսի երևույթների առկայության մասին, որոնք հասարակական կյանքում դրսևորվում են տարբեր հակասություններով: Մարդկանց մտածողությունն ու վարքը կարգավորող հին, փորձարկված արժեքներն ու նորմերը բախվում են նոր անձանոթ արժեքներին, որտեղ մի կողմից պահպանողականությունն ապահովում է ներհասարակական կայունություն, մյուս կողմից արդիականությունը որդեգրելով նոր արժեքներ, ձգտում է շարժունության և նորարարության: Ի հայտ է գալիս նոր «ընտրանի», որը հասարակական կարծիքը, ազգային ավանդույթներն ու սովորույթներն ընկալում է որպես իր գործունեությունը խոչընդոտող հանգամանքներ և չի ընդունում վարքը կարգավորող սոցիոմշակութային որևէ արժեք ու պարտադրանք: Արմատական փոխակերպումների մման պայմաններում ավանդույթները կատարում են սոցիոմշակութային ճգնաժամերի հաղթահարման, նոր պայմաններին հարմարման, հնի և նորի միջև պայքարի մեղմացման կարևոր գործառույթ՝ պահպանելով ազգային համակեցության կենսավորձը, միաժամանակ նպաստելով նրա արդիականացմանը:

Ելնելով մեկնաբանման այս դիտանկյունից, արդի փոխակերպվող հասարակություններից յուրաքանչյուրը, ելնելով իր ազգային կեցության առանձնահատկություններից և կենսափորձից, մշակում է կենսագործունեության կանոնակարգման իր սոցիոմշակութային հիմունքը, որի հուսալիության գլխավոր չափորոշիչը էթնոմշակութային ժառանգության և քաղաքակրթական հիմնարար արժեքների հավասարակշռությունն է: Այս տեսակետից՝ ավանդույթը ոչ միայն ազգային հասարակության կայուն և հուսալի հիմնակմախքն է, այլև նրա նորացման ու արդիականացման հիմքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբրահամյան Լ. Հ.**, Ազգային ինքնությունը որպես պրոցես, «Ինքնություն», Եր., 1995, 21-25 էջ:
2. **Աբրահամյան Լ. Հ.**, Ազգային ինքնության հաստատման չորս հարացույցները, Ինքնության հարցեր, Տարեգիրք, Եր., 2002, էջ 43-57:
3. **Գևորգյան Հ. Ա.**, Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2005,-528 էջ:
4. **Գևորգյան Հ. Ա.**, Եկեղեցին որպես հասարակական հաստատություն և ազգային կյանքը // «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2002, №2, էջ 17-25:
5. **Չաքարյան Ս. Ա.**, Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի կառուցաստեղծման պատմությունից (Եղիշե), «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 135.1, Երևան, 2011, էջ 3-15:
6. **Զեքիեան Պ. Լ.**, Հայ ինքնություն. Ինքնության հարցեր, Տարեգիրք, Եր., «Զանգակ-97», 2002, էջ 32-43:
7. **Հարությունյան Էդ. Ա.**, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., ԵՊՀ, 2000, 268 էջ:
8. **Հարությունյան Էդ. Ա.**, Ազգային կենսափիլիսոփայության պատմափիլիսոփայական վերլուծություն //Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ, հոդվածների ժողովածու, Պրակ I, Եր., 2002, էջ 7-22:
9. **Հարությունյան Էդ. Ա.**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, «Մակմիլան-Արմենիա», Եր., 2004 թ., 152 էջ:
10. **Հարությունյան Էդ. Ա.**, Համակեցության սոցիոմշակութային ինքնության տարատեսակները, Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ: (Հոդվածների ժողովածու).- Պրակ 4, Եր., «Լիմուշ», 2008, էջ 3-17:
11. **Հարությունյան Էդ. Ա.**, «Էթնոմշակութային ապաստանը» որպես գոյատևման գեղազիտական նախագիծ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 132.4, 2010, էջ 5-15:
12. **Հարությունյան Մ. Ա.**, Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., «Նաիրի», 2014թ., 648 էջ :
13. **Մարտիայան Հ. Տ.**, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2006, 89 էջ:

14. **Մարքս Կ., Էնգելս Ֆ.**, Երկեր, հ. 2, Եր., «Հայաստան», 1986թ., 736 էջ:
15. **Միրզոյան Վ. Ա.**, Կառավարման փիլիսոփայություն, 3-րդ հրատ., Եր., «Իրավունք», 2010, - 384 էջ:
16. **Միրզոյան Վ. Ա.** Ժամանակակից կառավարաբանության մեթոդաբանական ճգնաժամի աշխարհայացքային հիմքերը, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 131.4, 2010, էջ 21-34:
17. **Նժդեհ Գ.**, Հատընտիր, Եր., «Հայաստան», 2001, 405 էջ:
18. **Ոսկանյան Ա. Վ.**, Ազգային ինքնության հիմնահարցը և մտավորականության կոչումը, «Ինքնություն», Եր., 1995, էջ 11-20:
19. **Պետրոսյան Ս. Ս.**, Ինքնության հիմնահարցի փիլիսոփայական վերլուծության որոշ խնդիրներ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 136.4, Եր., 2012, էջ 3-15:
20. **Պողոսյան Գ. Ա.**, Արդի հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին: Եր., «Լուսարաց», 2006, -376 էջ:
21. **Սարգսյան Ա. Հ.**, Մշակույթի տեսություն. Ուսումնական ձեռնարկ: Եր., «Տնտեսագետ», 2003, -176 էջ:
22. **Սողոմոնյան Գ. Ա.**, Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Եր., 2005, 160 էջ:
23. **Սողոմոնյան Գ. Ա.**, Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 141.4, 2013, էջ 14-26:
24. **Аверьянов А. Н.**, Системное познание мира: методологические проблемы. М., Политиздат, 1985. -263с.
25. **Аверьянов В. В.**, Традиция и динамический консерватизм. М., ИДК, 2012.-696.
26. **Алексеев В. П., Дебец Г. Ф.**, Краниометрия. Методика антропологических исследований. М., «Медия», 2012, -128с.
27. **Андряков П. А.**, Онтологические основания традиции в зеркале социально-философского анализа //Известия Саратовского университета. Серия: Философия. Педагогика. Психология, 2013, т. 13, № 1, с. 3-6.
28. **Атаян Э. П.**, Потенции и тенденции национальной жизни (очерки проблематики) //Ինքնություն, Եր., 1995, էջ 68-76:
29. **Ахизер А. С.**, Социокультурные механизмы циклов культуры. // Искусство ситуации смены циклов: Междисциплинарные аспекты

исследования художественной культуры в переходных процессах, М., «Наука», 2002, с.116-135.

30. **Балдина О. Д., Быкова Э. В., Гавриляченко Е. Э.**, Народная культура в современных условиях//Традиция как способ формирования и функционирования народной культуры. М., Рос.ин.-т культурологии, 2000.-219 с.

31. **Бауман З.**, Идентичность в глобализирующемся мире. //Индивидуализированное общество. М., «Логос», 2005.-390с.

32. **Бергер П., Лукман Т.**, Социальное конструирование реальности: Трактат по социологии знания, «Центр-Медиум», М.,1995.-323с.

33. **Бергер П., Хантингтон С.**, (ред.) Многоликая глобализация: Культурное разнообразие в современном мире. М., «Аспект Пресс», 2004.-379.

34. **Бодрийяр Ж.**, В тени молчаливого большинства, или Конец социального. Екатеринбург: Изд-во Уральского университета, 2000. -96с.

35. **Бондырева С. К., Колесов Д. В.**, Традиции: стабильность и преемственность в жизни общества , М., «МОДЭК», 2004, -280 с.

36. **Бромлей Ю. В.**, О некоторых актуальных задачах этнографического изучения современности//Советская этнография, 1983, №6, с.10-23.

37. **Бромлей Ю. В.**, Очерки теории этноса, изд.4, М., «Наука», 2012.-440с.

38. **Бромлей Ю. В.**, Этнографические аспекты изучения человека. Человек в системе наук. М., «Наука», 1989,- 165 с.

39. **Бурдье П.**, Социология социального пространства. М., «Алетейя», 2005,-288.

40. **Бухаева А. А.**, К вопросу об истоках категории "идентичности" // Саясат Policy. - 2010, № 5, с. 63-67 .

41. **Быкова Э. В.**, Традиция как способ формирования и функционирования народной культуры//Народная культура в современных условиях, М., «Прогресс», 2001, с.32.

42. **Василенко И. А.**, Политическая философия, М.,ИНФРА-М, 2010. -320с.

43. **Вебер М.**, Избранные произведения, М., «Прогресс», 1990.-808с.

44. **Вебер М.**, Основные понятия стратификации//Социс. 1994, №5, с.147-156.
45. **Власова В. Б.**, Традиция как социально-философская категория, Философские науки, 1980, №4, с. 30-39.
46. **Власова В. Б.**, Об исторических типах традиционной ориентации, //Советская этнография, 1981, №2, с.113.
47. **Воротилина Т. Л., Мурахтанов А. В.**, Понятие традиций в социальных науках: содержание, структура, значение. Вестник Нижегородского государственного университета им. Н.И. Лобачевского: Серия: Право. - Нижний Новгород: Изд-во ННГУ, 2002, Вып1(5), с.53-58.
48. **Гадамер Х. Г.**, Истина и метод: Основы философской герменевтики: М., «Прогресс», 1988.-704с.
49. **Гавров С.**, Социокультурная традиция и модернизация российского общества. М., МГУКИ, 2002.-146с.
50. **Гегель Г. В. Ф.**, Феноменология духа // Соч., т.IV, М., 1959.- 440 с.
51. **Гердер И. Г.**, Идеи к философии истории человечества. М., «Наука», 2013.-768с.
52. **Гидденс Э.**, Устроение общества: Очерк теории структуризации. М., «Академический Проект», 2005.-528с.
53. **Гидденс Э.**, Ускользящий мир как глобализация меняет нашу жизнь. М., «Весь мир», 2004.-120с.
54. **Гумилёв Л. Н.**, Этногенез и биосфера Земли. Л., «Айрис-Пресс», 2007.-560с.
55. **Гумилёв Л. Н.**, От Руси до России: очерки этнической истории. М., «Айрис-Пресс». 2011.-320с.
56. **Гуссерль Э.**, Идея феноменологии. М., «Гуманитарная Академия», 2008.- 224с.
57. **Гуссерль Э.**, Кризис Европейских наук и трансцендентальная феноменология./пер. с немец. Складнева Д.В., Санкт Петербургский университет, «Владимир Даль», 2004.-398 с.
58. **Девятко И., Фомина В.**, Глобализация и социальные институты. М., «Наука», 2010.-335с.
59. **Дильтей В.**, Сущность философии. М., «Интрада», 2002.-159 с.

60. **Дугин А. Г.**, Этносоциология, М., МГУ, 2010.-80с.
61. **Дюркгейм Э.**, Социология. Ее предмет, метод, предназначение, М., «Канон», 1995.-352с.
62. **Дюфрен М.**, Вклад эстетики в философию // Эстетика и теория искусства XX века. М., «Прогресс-Традиция», 2008,с. 152-161.
63. **Ерасов Б. С.**, Цивилизация: слово-термин-смысл. //Цивилизации и культуры. М., 1995, Вып. 1., с. 3-27.
64. **Заславская Т. И.**, Современное российское общество: социальный механизм трансформации. М., «Дело», 2004.-400с.
65. **Заславская Т. И.**, Социетальная трансформация российского общества: деятельно-структурная концепция. М., «Дело», 2002, 568 с.
66. **Захарченко М. В.**, Христианство: духовная традиция в истории и культуре: СПб: «СПбГУПМ», 2002.-356с.
67. **Захарченко М. В.**, Традиция в истории: опыт типологической интерпритации. СПб: «СПбГУПМ», 2002.-192с.
68. **Зогова О. М.**, Идея европейского единства и национальная идентичность. Вестник МГУ. Серия 18, Социология и политология, 1999, №3, с.154-162.
69. **Иваненков С. П.**, Традиция и будущее. «Credo»,1997, №1,с.128.
70. **Ионин Л. Г.**, Социология культуры: путь новое тысячелетие. М., «Логос», 2000.-432с.
71. **Ирхин Ю. В.**, К вопросу о кросскультурных исследования: Восток-Запад //Социологические исследования. 2005, №2.с.131-134.
72. **Каиров В. М.**, Традиции и исторический процесс, М., «Луч», 1994.-190 с.
73. **Кайуа Р.**, Миф и человек.Человек и сокральное. М., «ОГИ», 2003. -294с.
74. **Касавин И. Т., Щавелев С. П.**, Анализ повседневности. М: «Канон», 2004.-432.
75. **Кассирер Э.**, Опыт о человеке. Введение в философию человеческой культуры//Проблема человека в западной философии. М., «Прогресс», 1988.-552.

76. Календарные обычаи и обряды народов Восточной Азии. Новый год. М., «Наука», 1985.-264с.
77. **Кознова И.**, Наследие как историческая память // Вечное и преходящее в культурном наследии России. М.: ИФРАН, 2010. -152 с.
78. **Корнев С. В.**, Постмодерн-фундаментализм. М., «Мысль», 1999. 34 с.
79. **Лапин Н. И.**, Социокультурный подход и социетально-функциональные структуры// Социологические исследования. №7, 2000, с. 3-24.
80. **Лапин Н. И., Беляев Л. А.**, Кризисный социум. Наше общество в трех измерениях, М., «ИФРАН», 1994.-245с.
81. **Липпман У.**, Публичная философия. М.,«Идея-Пресс», 2004.-160.
82. **Липпман У.**, Общественное мнение /первод с англ., М.: институт фонда «Общественное мнение», 2004.-384 с.
83. **Лебон Г.**, Психология народов и масс, СПб, «Макет», 1995.-320с.
84. **Луман Н.**, Реальность массмедиа. М., «Праксис», 2005.-256с.
85. **Луман Н.**, Общество общества. Часть 1, Общество как социальная система. М., «Логос», 2004, -320 с.
86. **Лурье С. В.**, Историческая этнология. Учебное пособие для вузов. М., «Академический Проект: Гаудеамус», 2004. - 624 с.
87. **Малинин Г. В.**, Идентификационные процессы или самоопределение (социологический анализ), «Мир человека», 1999, №1, с.41-51.
88. **Мангейм К.**, Очерки социологии знание: Проблема поколений-состоятельность- экономические амбиции. М.,«ИНИОН РАН», 2000.-164с.
89. **Мангейм К.**, Идеология утопия.//Диагноз нашего времени.М., «Юристь»,1994, - 260 с.
90. **Маньковская Н. Б.**, Эстетика постмодерна. СПб, «Алетейя», 2000. - 347с.
91. **Маркхарян Э. С.**, Теория культуры и современная наука, М., «Наука», 1983. – 284 с.

92. **Маркарян Э. С.**, Науки о культуре и императивы эпохи. М., 2000. – 126 с.
93. **Маркузе Г.**, Эрос и цивилизация. Одномерный человек: Исследование идеологии развитого индустриального общества. М., ООО «АСТ», 2003. – 526с.
94. **Маслова В. А.**, Лингвокультурология, М., «Академия», 2001, - 208с.
95. **Молодкина Л. В.**, К вопросу о феноменологии памяти (на архитектурно-природного памятника), Вестник Московского университета, 2007. №6,с.88-97.
96. **Мотрошилова Н. В.**, «Идеи I» Эдмунда Гуссерля как введение в феноменологию. М.: Феноменология-Герменевтика, 2003.-720с.
97. **Немов Р. С.**, Общие основы психологии, кн.1. М., «Просвещение»,1994.- 235с.
98. **Ницше Ф.**, Генеалогия морали. М., «Азбука», 2011.-224с.
99. **Ортега-и-Гассет Х.**, Восстание масс, М., «АСТ», 2003, - 269.
100. **Панарин А. С.**, Народ без элиты. М., «Эксмо», 2006.-140с.
101. **Парсонс Т.**, Социальная система и культура. //О социальных системах. М., «Академический проект», 2002, с.693-776.
102. **Плахов В. Д.**, Традиции и общество. Опыт философско-социологического исследования, М., «Мысль», 1982. – 220 с.
103. **Плахов В. Д.**, Норма и отклонение: Философско-теоретическое введение в социальную этологию. СПб., «Юридический институт», 2011.- 778 с.
104. **Погосян Г.**, Армянское общество в трансформации. Ер.,«Ноян Тапан», 2003, -460.
105. **Полонская И. Н.**, Традиция как символическая знаковая система //Известия высших учебных заведений. Общественные науки. «Актуальные проблемы социально-гуманитарного знания», Ростов н/Д, 2005, с.115-123.
106. **Полонская И. Н.**, Традиция: от сакральных оснований к современности. Ростов-на-Дону, изд.-во Рост. Ун.-та, 2006.- 272 с.

107. **Праздников Г. А.**, Традиция как диалог культур. Советская этнография, 1981, №2, с. 54-59.
108. **Рикер П.**, Память, история, забвение. М., изд-во гуманитарной литературы, 2004.-728с.
109. **Сакович И. С.**, Удержание традиции как условие сохранения культуры и выживания человека //История. Философия. Педагогика. Культурология: сб.ст.- Н.Новгород, 2004, с. 115-118.
110. **Смит Э. Д.**, Национализм и модернизм: Критический обзор современных теорий наций и национализма. «Праксис», 2004. - 464 с.
111. **Смирнова Н. С.**, Социальная феноменология и изучении современного общества. М., «Канон», 2009.- 400 с.
112. **Сугрей Л. А.**, Традиции экономического сознания нации. Ставрополь, изд. Ставроп. Гос. Ун-та, 2001, - 190 с.
113. **Суханов И. В.**, Обычаи, традиции и преемственность поколений, М., «Политиздат», 1976.-216 с.
114. **Тэн И.**, Философия искусства. М., «Республика», 1996.-356 с.
115. **Тер-Минасова С. Г.**, Язык и межкультурная коммуникация, М., «Слово», 2000.- 624 с.
116. **Тощенко Ж. Т.**, Парадоксальный человек. М., «ЮНИТИ-ДАНА», 2012, - 543 с.
117. **Труевцев Д. В., Юсупов П. Р.**, Проблемы психологии личности в эпоху постмодерна, Известия Алтайского университета, 2001, № 2, с. 27-31.
118. **Философия самоопределения** /Под. Ред. В.А.Андурсенко и др., Оренбург, 1996, -65с.
119. **Фралов Э.**, Парадоксы истории. Парадоксы античности: СПб, С.-Петерб. Ун.-та, 2004.- 420 с.
120. **Фрейд З.**, Массовая психология и анализ человеческого Я. Избранное, кн.1, М., «Наука», 1900, с.14.
121. **Фромм Э.**, Бегство от свободы. Человек для себя.-Минск, 1998, - 672 с.
122. **Фукуяма Ф.**, Великий разрыв. М.,ООО «АСТ», 2004.-474.

123. **Фукуяма Ф.**, Конец истории и последний человек. М., ООО «АСТ», 2010.-584с.
124. **Хабермас Ю.**, Концепции модерна. Ретроспектива двух традиций. Политические работы. М., «Праксис», 2005.-368.
125. **Хабермас Ю.**, Философский дискурс о модерне. М., «Весь мир», 2003.-416с.
126. **Хантингтон С.**, Кто мы? М., «АСТ», 2004.-635с.
127. **Хесле В.**, Кризис индивидуальной и коллективной идентичности//Апокалипсис смысла.Сборник работ западных философов XX-XXI веков. М., 2007.с.16-46.
128. **Щацкий Е. О.**, Утопия и традиция, М., «Прогресс», 1990.- 456 с.
129. **Шпенглер О.**, Закат Европы. Всемирно-исторические перспективы. Т.2, М., Попурри, 1999. - 704 с.
130. **Шрейдер Ю. А.**, Ценности, которые мы выбираем: Смысл и предпосылки ценностного выбора. М., Эдиториал УРСС, 1999. -206 с.
131. **Шгомпка П.**, Социальные измерение как травма. //Соц.исслед., 2001, №1, с. 6-16.
132. **Шютц А.**, Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии, М., «Общественное мнение», 2003.-336 с.
133. **Элиаде М.**, Аспекты мифа, М., «Академический проект», 2010.-251 с.
134. **Эриксон Э.**, Идентичность: юность и кризис, М., «Прогресс», 2006.-352с.
135. **Эриксон Э.**, Детство и общество. СПб: Ленато, «АСТ», 1996, 592 с.
136. **Юнг К. Г.**, Архетипы и символ. М., «Ренсанс», 1991.- 304 с.
137. **Яковлева Л. Е.**, Испанская и русская философские традиции: общее и особенное. Рабочие тетради по компаративистике, Гуманитарные науки, философия и компаративистика, СПб, «Дрофа», 2003, с. 22-25.
138. **Янг К.**, Диалектика культурного плюрализма: концепция и реальность. Этничность и власть в полиэтничных государствах: Материалы международной конференции, М., 1994, с. 95-96.

139. **Янг С.**, Системное управление организаций. М., «Советское радио», 1972.- 456 с.

140. **Ясперс К.**, Смысл и назначение истории. М., «Республика», 1994 (Мыслители XX века), - 527 с.

141. **Alport G.**, The Natural of Prejudic, New York, 1958, p 21.

142. **Acton H. B.**, Tradition and some other forms of older// Proceeding of the Ar. Society. 1952-1953. P. 2.

143. **Boyer P.**, Tradition as truth and communication. A cognitive description of traditional discourse / P. Boyer. – New York: Cambridge, 1990. – P. 8 – 9.

144. **Beck U., Giddens A., Lash S.**, Reflexive Modernization: Politics, Tradition and Aesthetics in the Modern Social Order. Cambridge:Polity, 1994. 304p.

145. **Giddens A.**, Modernity and Self-Identity. Self and Society in the Late Modern Age, Cambridge, 1991. P. 187-201.

146. **Inglehart R., Baker W.**, Modernization, Cultural Change, and the Persistence of Traditional Values // American Sociological Review. 2000. Vol. 65. P.19-51.

147. **Shils E.**, Tradition and Liberty: Antinomy and Interdependence / E. Shils. – Tradition, 1981. P.80-87.

148. **Shils E.**, Tradition. Chicago: University of Chicago Press, 1981. - 325p.

149. **Sorokin P.**, Toynbee's Philosophy of History // The Pattern of the Past: can we determine it?-Boston: The Beacon Press, 1949. P. 116.

150. **Violet G.**, Theory of stereotypes// G.Violet, K.Silvert// Social Forces, 1951, Vol.21.

151. **Hobsbawm E.**, Introduction: Inventing Traditions // The Invention of Tradition (ed. by Hobsbawm E., Ranger T.) / E. Hobsbawm. Cambridge: Cambridge University Press, 2003.-P. 320.

152. **Hofstede G.**, Cultures and Organizations. Software of the Mind. Intercultural Co-operation and its Importance for Survival. McGraw-Hill. N.-Y. San Francisco etc, 1997, p. 4-7.

153. **Hozelitz B. F.**, Tradition and Economic Growth.-Tradition, Values and Socio-Economic Development. L.1961. P. 350.

154. **Wagner A.**, Redefining Citizenship for the 21-st Centry. International Conference. July, 2002, p. 49-54.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԵԼԼԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

**ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿ**

Ուսումնական շեռնարկ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 19.09.2019:
Չափսը՝ 60x84¹/₁₆: Տպ. մամուլը՝ 10:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am